

ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՍԱՂՄՈՍԸ

Ծ սաղմոսի մեկնություն

Սուրբ Էջմիածին



ՀՐԱՄԱՆԱՒ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

CATHOLICOSATE OF ALL ARMENIANS

PATRIARCH SHENORHQ GALOUSTYAN

THE GREAT PSALM OF REPENTANCE
(COMMENTARY ON THE PSALM 50)

Publishing House of Mother See of Holy Etchmiadzin
Holy Etchmiadzin - 2021

КАТОЛИКОСАТ ВСЕХ АРМЯН

ПАТРИАРХ ШНОРК ГАЛУСТЯН

ВЕЛИКИЙ ПСАЛОМ ПОКАЯНИЯ
(ТОЛКОВАНИЕ 50-ГО ПСАЛОМА)

Издательство Первопрестольного Святого Эчмиадзина
Святой Эчмиадзин - 2021

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՍԱՂՄՈՍԸ

(Ճ ՍԱՂՄՈՍԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ)

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

Սուրբ Էջմիածին – 2021

ՀՏԴ 27-277
ԳՄԴ 86.37-2
Գ 217

Հրատարակվում է երաշխավորությամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի

Արևելահայերենի փոխադրուեց՝
Դավիթ սրկ. Գիշյանը
Խմբագիր՝ Հովհաննես սրկ. Ավետիսյան
Բնագրի հեղ համեմատումը և
լեզվառճական խմբագրումը՝ Ն. Գրիգորյանի

Շնորհք պատրիարք Գալուստյան
Մ 217 Ապաշխարության մեծ սաղմոսը (Ծ սաղմոսի մեկնություն) / Արևելահայերենի փոխադրեց՝ Դավիթ սրկ. Գիշյան; Խմբ.՝ Հովհաննես սրկ. Ավետիսյան, Նանա Գրիգորյան.– Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2021.– 72 էջ:

ՀՏԴ 27-277
ԳՄԴ 86.37-2

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՄԵԿԵՆԱՍՈՒԹՅԱՄԲ
«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ISBN 978-9939-59-279-4
© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2021

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

Շնորհք պատրիարքի սույն ոչ մեծածավալ աշխատությունը Հայոց եկեղեցու ծիսական կյանքում մեծ տեղ ունեցող Ճ սաղմոսի մեկնությունն է: Այն ոչ միայն առանձնահատուկ է *Ժամագրքում* հաճախ հանդիպելու պատճառով, այլ առանցքային է հավատացյալ մարդու անհատական մեղքի գիտակցման և դրանից ազատվելու ցանկության ու խոստովանանքի տեսանկյունից:

Արևելահայերեն փոխադրությունը կատարված է պահպանելով Շնորհք պատրիարքի լեզվի առանձնահատկությունները և բնագիր տեքստի ինքնուրույնությունը:

Սաղմոսի մեկնությունից զատ, Շնորհք պատրիարքը մեր օրերում ապրող մարդու համար մատչելի լեզվով բացահայտում է նաև Դավիթ արքայի կերպարը՝ թե՛ որպես հինկտակարանյան առանցքային դերակատար, թե՛ որպես սաղմոսասաց և թե՛ որպես մեղսագործ մարդ, ով ինքնաքննադատությամբ և խոստովանանքով փորձում է ազատվել իր գործած մեղքերի կապանքներից:

Վերջում, որպես հավելված, ներկայացված է Շնորհք պատրիարքի «Ներածություն Սաղմոսաց գրքի» Սաղմոսաց գրքին վերաբերող հատվածը՝ «Շնորհք Պատրիարք - 100» մատենաշարից (թիվ 4)*:

* Շնորհք Պատրիարք (Գալուստեան), *Գիրք Սաղմոսաց եւ ապաշխարութեան մեծ սաղմոսը,* Ստանպուլ, 2016:

ՍԱՂՄՈՍ Ծ

Ի կատարած. Սաղմոս ի Դաւիթ.
2 ի ժամանակի զի եկն առ նա Նաթան մարգարէ, իբրև զի մտեալ էր նա առ Բերսաբէէ.
3 Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ:
4 Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ. և ի մեղաց իմոց սուրբ արա զիս:
5 Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ:
6 Քեզ միայն մեղայ Տէր, և չար առաջի քո արարի: Որպէս արդար եղիցես ի բանս քո, և յաղթաւղ ի դատել քեզ:
7 Անօրէնութեամբ յղացաւ, և ի մեղս ծնաւ զիս մայր իմ:
8 Դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր, զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ:
9 Ցօղեա յիս մշտկաւ և սուրբ եղէց, լուա և քան զձիւն սպիտակ եղէց:
10 Լսելի արա ինձ ցնծութիւն և ուրախութիւն, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք:
11 Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց. զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն:
12 Սիրտ սուրբ հաստեա յիս Աստուած, և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում:
13 Մի ընկենուր զիս Տէր յերեսաց քոց, և զհոգի սուրբ քո մի հաներ յինէն:
14 Տուր ինձ ցնծութիւն փրկութեան, հոգւով պետութեամբ քով հաստատեա զիս:
15 Ուսուցից անօրինաց զճանապահս քո, և ամպարիշտք առ քեզ դարձցին:
16 Փրկեա զիս յարենէ Աստուած Աստուած փրկութեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում:
17 Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:
18 Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար:
19 Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ:
20 Բարի արա Տէր կամօք քովք Սիոնի, և շինեսցին պարիսպք Երուսաղէմի:
21 Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան. ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս:

ՄՈՒՏՔ

50-րդ սաղմոսը ապաշխարության ժանրի գլուխգործոց է։ Նմանատիպ քիչ գրություններ կան, որ այդքան լիարժեք և ամբողջական կերպով արտահայտեն զղջացող մեղավորի գործած ծանր մեղքի համար վիշտը և ապաշխարանքը, որքան այս սաղմոսը։ Եվ միաժամանակ քիչ գրություններ կան, որ այդքան ուժգին ու պաղատագին կերպով հայտնեն մեղքից ազատվելու ցանկությունը, որքան այս սաղմոսը։ Եվ վերջապես՝ թերևս ոչ մի տեղ զղջումը, խոստովանությունը և արձակման աղաչանքը այնքան իրական, այնքան զուսպ ու այնքան պատշաճ բառերով արտահայտված չեն, որքան ապաշխարության այս սաղմոսի մեջ։

Այս սաղմոսը մեծ տեղ ունի մեր ծիսական կյանքում։ Այն մեկ անգամ չէ, որ հանդիպում է Ժամագրքում։ Առավոտյան ժամերգության ընթացքում այս սաղմոսից ընթերցվում է երկու տուն, ինչին հաջորդում է «Ողորմեա» շարականը։ Ճաշու երեք ժամերգությունները նույնպես սկսվում են «Ողորմեա ինձ Աստուած» սաղմոսի փոխասացությամբ։ Ավագ հինգշաբթի օրը Ոտնլվայի արարողությունը բացվում է այս սաղմոսի փոխնիփոխ երգեցողությամբ։ Եվ այս սաղմոսով է սկսվում նաև Մկրտության խորհուրդը։

Սաղմոսը կարելի է բաժանել երկու մասի։ Առաջին մասը՝ 3-14 համարները, պաղատանք են խոստովանության և մեղքերի թողության համար, իսկ երկրորդը՝ խոստում է և ուխտ Աստծուն հավատարիմ մնալու (15-21)։

Սաղմոսի գրման առիթը և դրդապատճառը հիշատակված են նրա գրման վերնագիր-ծանոթագրության մեջ։ Ուստի մտնենք այս սաղմոսի գավթից ներս և նախ ջանանք ներկայացնել նրա գրության պատճառները, ապա անցնենք սաղմոսի հոյակապ սրահը և փորձենք բացատրել այն մաս առ մաս։ Մեր մեկնաբանական աշխատանքի մեջ հետևելու ենք հետևյալ ծրագրին. նախ՝ կներկայացնենք գրաբար բնագիրը, ապա կվերածենք այն աշխարհաբարի և ի վերջո կփորձենք բացատրել խոսքի իմաստը և կիրառել այն մեր առօրյա կյանքում։ Մեջբերումների սկզբում դրված թվերը սաղմոսի համարներն են։

1. Ի կատարած. Սաղմոս Դավթի:

Հարկ է նշել, որ «Ի ԿԱՏԱՐԱԾ»-ը Յոթանասնից բնագրի համապատասխան բացատրության տառացի թարգմանությունն է: Այս բառի մեջ մենք չկարողացանք տեսնել այնպիսի իմաստ, որը կապ կունենար հաջորդ խոսքի կամ ամբողջ սաղմոսի հետ: «Կատարածի» մասին ակնարկի նշանակությունն իրականում մնում է անորոշ: Այս հարցում եբրայերեն բնագրում և դրանից կատարված թարգմանություններում առկա է ամենևին այլ բացատրություն, որ է «ԳԼԽԱՎՈՐ ԵՐԳԵՑՈՂԻՆ» կամ «ԵՐԱԺՇՏԱՊԵՏԻՆ» խորագիրը, որում երկու իմաստ կարելի է տեսնել: Առաջին. այս սաղմոսը պատկանում է երաժիշտներից գլխավորին, գերազանց երաժշտին, այսինքն՝ Դավթին: Ուստի սա ակնարկ է հեղինակի մասին, ինչը բացահայտվում է հաջորդ երկու բառերի մեջ՝ սաղմոս Դավթի: Երկրորդ. կարող է ունենալ նաև այն իմաստը, թե այս սաղմոսի երգեցողությունը պատկանում է երաժիշտներից գլխավորին՝ երաժշտապետին, հետևաբար՝ խորագիրը վերաբերում է երգողին:

Էական չէ, թե այս բացատրություններից որին նախապատվությունը կտրվի, իրողությունն այն է, որ այս և հաջորդ ծանոթագրությունները սաղմոսի բնագրի մաս չեն կազմում, այլ հետագայում կատարված ծանոթագրություններ են: Սակայն, հակառակ այս իրողության, Ս. Գրքի գլուխների համարները կարգող հեղինակ Ռոբերտ Էսթիեն 1545 թվին այս ծանոթագրությունները նույնպես համարակալեց, ինչի արդյունքում դրանք դարձան սաղմոսի առաջին երկու համարները: Ս. Գրքի բողոքական թարգմանություններում և արդի հրատարակություններում ծանոթագրության համարակալումը բաց է թողնված, ինչի արդյունքում Ս. Գրքի հին և նոր հրատարակությունների միջև առաջացել է համարների տարբերություն: Այնպես որ, եթե եբրայերեն բնագիրը, Յոթանասնիցը, լատինական Վուլգաթան և գրաբար Աստվածաշունչն այս սաղմոսը բաժանում են 21 համարների՝ ներառյալ ծանոթագրության առաջին-երկու համարները, ապա նոր հրատարակություններում, ներառյալ արևմտահայերեն թարգմանությունը, կտեսնենք միայն 19 համարներ: Այսպես առաջանում է համարների շփոթություն: Արդյունքում, գրաբար բնագրի 12-րդ համարը, օրինակ, նոր հրատարակության մեջ կլինի 10-րդ համարի ներքո: Մենք, բնականաբար, համարակալման հարցում կհետևենք գրաբար բնագրին, որից երկու թիվ պակասեցնելով, կարող ենք գտնել համապատասխան համարը նոր հրատարակություններում:

2. ի ժամանակի զի եկն առ նա Նաթան մարգարէ,
իբրև զի մտեալ էր նա առ Բերսաբէէ.
Այն ժամանակ, երբ Նաթան մարգարեն եկավ Դավթի մոտ՝
Բերսաբեի հետ վերջինիս մեղանչելուց հետո:

Սա ակնարկ է Դավիթ թագավորի կյանքի մեծագույն մեղքին, որի մասին պատմվում է Թագավորությունների երկրորդ գրքի 11-րդ և 12-րդ գլուխներում:

Ենթադրաբար ընթերցողներից շատերին ծանոթ է այս միջադեպը, բայց, մյուս կողմից, ենթադրում ենք, որ չիմացողներից շատերը հանձն չեն առնի կամ Աստվածաշունչ չունենալու պատճառով չեն կարող կարդալ վերոհիշյալ գլուխները, որտեղ այս դեպքը ներկայացված է նովելին բնորոշ իրապաշտությամբ: Ուստի, ավելորդ չենք համարում հնարավորինս համառոտ ներկայացնել այն դժբախտ դեպքը, որն այս հոյակապ սաղմոսի հորինման պատճառը դարձավ: Նախ մի քանի խոսք Դավթի մասին:

Աստվածաշնչի թատերաբեմում Դավիթն ի հայտ է գալիս որպես շատ երիտասարդ մի հովիվ, որն իր ոչխարներին պաշտպանում է առյուծից և արջից: Ավետարանից ծանոթ «քաջ հովվի» մարմնացումն է, որն իր անձը վտանգի է ենթարկում ոչխարների համար: Դավիթն ունի պարզունակ, բայց մահացու երկու զենքեր. պարսատիկ, որով հալածում է թշնամի գազաններին հեռավորության վրա, և մահակ՝ իր հովվական ծանր գավազանը, որով ջախջախում է գազանի գլուխը, երբ այն մտնում է հոտի մեջ: Անբան ոչխարների հանդեպ ցուցաբերած այս քաջությանն ու պաշտպանությանն իբրև վարձատրություն՝ Աստված նրան կանչեց Իր ընտրյալ ժողովրդի հովությանն ու պաշտպանությանը: Արդարև, ի վերջո, նա Իսրայելի թագավոր դարձավ Քրիստոսից առաջ 1000-ական թվականներին: Գրավեց Երուսաղեմը և այն վերածեց իր երկրի մայրաքաղաքի՝ թագավորելով 40 տարի:

Դավիթն օժտված էր մարդկային բազում շնորհներով. բանաստեղծ էր, երգիչ, քնարահար: Երբ իրեն նախորդող թագավորի՝ Սավուղի մռայլությունը փարատելու համար քնարահար էին փնտրում, գտան «բեթղեհեմացի Հեսսեի որդի Դավթին, որը գիտեր քնար նվագել և զորավոր մարտիկ էր, գեղեցիկ տեսքով մի կտրիճ, և Տերը նրա հետ էր» (հմմտ. Ա Թագ. ԺՁ 18): Լավ ռազմիկ լինելով հանդերձ՝ Դավիթը վեհանձն էր, հարգանք ուներ իր երկրի թագավորի հանդեպ՝ հակառակ այն բանի, որ վերջինս ցանկանում էր սպանել նրան: Սավուղը քանիցս Դավթի ձեռքն ընկավ, բայց Դավիթը նրան չսպանեց: Մեծ զորավար էր Դավիթը և լավ մարդկանց իրեն կապող բարեկամ: Նա

արդար և ձեռնհաս թագավոր եղավ։ Նրա մասին կարելի է ասել, որ գրեթե ամեն ինչ էր, այդ թվում նաև՝ մեծ մեղավոր։ Նա մի ծանր մեղքով խախտեց Տասնաբանյայի ընկերային և բարոյական բոլոր պատվիրանները՝ մի՛ սպանիրը, մի՛ շնացիրը, մի՛ գողացիրը, մերձավորիդ կնոջը մի՛ ցանկացիրը։

Միջադեպի օրերին Դավիթը գտնվում էր իր փառքի ու տարիքի գագաթնակետին։ Նա ստեղծել էր մի փոքրիկ կայսրություն, որը հյուսիսից հարավ տարածվում էր Սիրիական Եփրատից մինչև Կարմիր ծովում Աքապայի ծովածոցը, իսկ արևմուտքից արևելք՝ Միջերկրականի ափերից մինչև Սիրիայի և Անդրհորդանանի անապատները։ Շրջակա բոլոր ազգերն ու ցեղախմբերը (փղշտացիներ, եդոմացիներ, ամաղեկացիներ, մովաբացիներ, ամովնացիներ, արամեացիներ և այլն) հպատակ և հարկատու էին նրան։ Նա բավական առաջացած տարիքում էր և առաջվա ռազմիկ ու թեթևաշարժ Դավիթը չէր։ Արդեն հզոր արքա էր, որն այլևս արքունիքում պիտի մնար, հպատակներից փառք ու պատվի արժանանար և կյանքը վայելեր ուտել-խմելով, խրախճանքներով ու կանանցով։

Դեպքի ժամանակ բանակը պատերազմում էր ամովնացիների դեմ, որոնք ապստամբել էին։ Իսկ Դավիթն անգործության էր մատնված պալատում։ Մի օր երեկոյան, երբ զբոսնելու և շրջակայքը դիտելու նպատակով տանիք էր բարձրացել, դիմացի տանիքին նկատեց գեղեցիկ մի կնոջ, որ լոգանք էր ընդունում։ Ճշտելով, որ այդ կինն իր հավատարիմ զորավարներից քետացի Ուրիայի կինը՝ Բերսաբեն էր, «Դավիթը պատգամավորներ ուղարկեց» ու նրան պալատ հրավիրեց և այդ գիշեր մեղանչեց նրա հետ։ Երևակայել կարելի է մեղքի ծանրությունը. մինչ պատերազմի դաշտում հավատարիմ զորավարը հանուն Դավթի փառքի ու անձի իր կյանքն էր վտանգում, այստեղ Դավիթը տիրանում էր նրա ամենաանառիկ բերդին՝ կնոջը։

Մեղքը ծածկելու նպատակով Դավիթը ռազմաճակատից իր մոտ հրավիրեց հավատարիմ զորավար քետացի Ուրիային՝ իբրև թե պատերազմի մասին տեղեկություններ քաղելու։ Տեսակցությունից հետո, որպես նվեր, ուտելիք և խմիչք ուղարկեց նրա տուն, նրան էլ հանձնարարեց տուն գնալ և մի քանի օր հանգստանալ։ Առաքինի զորավարը, սակայն, տուն գնալու փոխարեն «Դավթի բոլոր ծառաների հետ պալատի դռանը քնեց» (հմմտ. Բ Թագ. ԺԱ 9)։ Երբ Դավիթն իմացավ, կանչեց նրան ու ասաց. «Դու ճանապարհից ես եկել, ինչո՞ւ տուն չես գնում հանգստանալու»։ Ուրիան պատասխանեց. «Քո ծառաներն ու իմ զինակիցները բաց դաշտում են բանակում այս ժամին, ինձ կվայելի՞ ուտելու, խմելու և

կնոջս հետ պառկելու համար իմ տուն գնալը: Ասփված մի՛ արասցե, որ նման բան անեմ»:

Դավիթը երկրորդ օրն էլ փորձեց նրան տուն ուղարկել, սակայն չհաջողվեց: Ի վերջո դիմեց մի ավելի վատ միջոցի, որով շատ ավելի ծանր մեղք գործեց. նամակ գրեց բանակի զորապետին, որպեսզի Ուրիա Քետացուն զորավար նշանակի պատերազմի ամենավտանգավոր գծի վրա, և թշնամու հարձակման ժամանակ իրենք ետ քաշվեն ու զորավարը սպանվի: Այդպես էլ եղավ: Դրանից հետո Դավիթն օրինավոր կերպով տիրացավ Բերսաբեին, որը դարձավ նրա բազմաթիվ կանանցից մեկը:

Այս ամենը բնականաբար «չար երևաց Տիրոջ աչքին»: Աստված Դավթի մոտ ուղարկեց Նաթան մարգարեին, որը շատ ճարտար կերպով երեսին տվեց նրա ծանր մեղքը.

– Տե՛ր արքա,– ասաց Նաթան մարգարեն,– տերությանդ գյուղերից մեկում երկու մարդ կար. մեկը՝ հարուստ, մյուսը՝ աղքատ: Հարուստը շատ ոչխար ու արջառ ուներ, իսկ աղքատը՝ մեկ գառնուկ, որին իր ձեռքով էր կերակրում և որպես իր երեխաներից մեկը՝ իր տանն էր պահում: Մի օր հարուստի մոտ հյուր եկան, և նա փոխանակ իր հոտից մի գառ բերելուն՝ աղքատի գառնուկը խլեց հյուրին կերակրելու համար: Այժմ այս առնչությամբ քո վճռին ենք սպասում, տե՛ր արքա:

– Այդ մարդը մահվան է արժանի,– զայրույթով գոչեց Դավիթը:

– Այդ մարդը դու ես,– ասաց մարգարեն և իր պատգամը շարունակեց այսպես,– Աստված քեզ Իսրայելի վրա թագավոր օծեց՝ ազատելով Սավուղի ձեռքից: Աստված քեզ ամեն տեսակ բարիքներով ճոխացրեց: Եթե քիչ էր, է՛լ ավելին կտար: Ինչո՞ւ անարգեցիր Տիրոջ պատվիրանը և Նրա առաջ չարիք գործեցիր. նախ՝ շնություն անելով, ապա՝ արդար մի մարդու սպանել տալով նրա կնոջը տիրանալու համար...

Դավթի մտքի ու հոգու վրա իջած վարագույրը պատռվեց, և նա տեսավ անդունդը, որի մեջ էր ընկել: Եվ պարզապես ասաց.

– Տիրոջ դեմ մեղք գործեցի:

Ու մարգարեն եզրափակեց իր պատգամը.

– Այդ մեղքերիդ համար դու քո վճիռը տվեցիր արդեն, հետևաբար, արժանի էիր մահվան, բայց խոստովանությանդ և զղջմանդ համար, թեև չես մեռնի, այդուհանդերձ քո տնից փորձանքները չեն պակասի:

Դավիթը հանեց իր արքայական պատմուճանը, նստեց մոխրի մեջ, դառնապես լաց եղավ, ծոմ պահեց և աղոթեց: Արթնացավ իր

մեջ լռած բանաստեղծն ու սաղմոսերգուն և գրեց այս հոյակապ սաղմոսը։ Դավիթը զգաց, որ իր մեղքերի պատճառով օտարացել է Աստծուց, ընդունեց և բարձրաձայնեց իր մեղանչած լինելը։ Ոչ մի չքմեղանք, ոչ մի ինքնարդարացում։ Հայցեց միայն Աստծո գթությունն ու ողորմությունը, որ «երեսը չդարձնի իրենից» և «լվանա» իրեն մեղքերից և իրեն նորից օժտի «սուրբ սրտով և ուղիղ հոգով»։ Աստծուն մեծ բաներ չխոստացավ, բացի «անօրեններին Աստծո ճամփաները սովորեցնելուց» և «Աստծո օրհնությունը երգելուց»։

Դավթի նյութական ու աշխարհիկ փառքի և մեծության մեջ երևան էր եկել նրա մարդկային չսանձված փոքրությունը, իսկ խոնարհման ու անկման մեջ հանկարծ դրսևորվեց Դավթի իսկական ու բարոյական մեծությունը։ Այն արտահայտվեց այս սաղմոսով, որը որպես ժառանգություն մնաց ամբողջ մարդկությանը։ Շուրջ 3000 տարիներ ի վեր բազմաթիվ մեղավորներ՝ անկախ տարիքից, գործածել և գործածում են այն որպես փրկության լաստ մեղքի ճահճից դուրս գալու համար։

Ոմանք գուցե ասեն, թե այսպիսի տգեղ դեպքեր ինչ գործ ունեն Սուրբ Գրքում. ավելի լա՞վ չէր լինի, որ բնավ գրված չլինեին։ Սակայն սա Աստվածաշունչը դիտարկելու շատ մակերեսային տեսակետ է։ Մարդիկ բարի օրինակ կարող են քաղել որքան դրական, այնքան էլ և դեռ ավելին՝ բացասական դեպքերից ու դրվագներից։ Քիչ գրքեր են գրվել այնքան իրապաշտ ոգով, որքան Աստվածաշունչը։ Ի թիվս մի շարք ուրիշ տգեղ դեպքերի՝ Դավթի մեղքն էլ մանրամասնորեն ներկայացված է գալիք սերունդներին օգնելու և զգուշացնելու, որպեսզի գոնե նրանք չընկնեն նույն մեղքերի մեջ։ Մեղքերը ոչ միայն միշտ վատ հետևանքներ են ունենում, այլև «անհաճո և չար են Աստծո առջև»։ Աստված նախամարդուն ասաց. «Այն օրը, երբ մեղանչեք, պիտի մեռնեք» (Ծննդ. Բ 17)։ «Մեղքի հետևանքը մահն է»՝ հաստատում է Պողոս առաքյալը (Հռոմ. Զ 23)։ Իրականում, սակայն, նախածնողները մեղանչումից հետո ֆիզիկապես չմեռան, ոչ էլ Կայենը կամ Դավիթը և այլ անթիվ-անհամար մեղավորները։ Այսուհանդերձ, առանց ապաշխարելու բոլոր մեռնողները բարոյապես մեռած պիտի մտնեն անդենական աշխարհ, հետևաբար՝ զրկված պիտի մնան Աստծո ներկայությունից ու լույսից. «պիտի գնան արտաքին խավար, որտեղ պիտի լինի լաց և ատամների կրճտում» (Մատթ. Ութ 30)։ Ապաշխարողներն էլ իրենց մեղքի հետևանքից չպիտի ամբողջապես ազատվեն այս աշխարհում։ Դավիթը թեև ապաշխարեց և քավության արժանացավ, բայց գործած մեղքի հետևանքից չկարողացավ բոլորովին խուսափել։ Նրա տնից «ՍՈՒՐԸ» անպակաս

եղավ. որդիների մեջ եղբայրասպանություն եղավ և մինչև իսկ նրա կանանոցը պղծեցին. «Թեև դու ծածուկ կերպով մեղանչեցիր ուրիշի կնոջ հետ,– ասաց մարգարեն,– բայց ուրիշներն օրը ցերեկով պիտի մեղանչեն քո կանանց հետ» (Բ Թագ. ԺԲ 9-14)։

Ուրեմն, ըստ առաքյալի լուսաբանման՝ Հին Ուխտի այս տգեղ դեպքերը «մեզ իբրև օրինակ եղան, որպեսզի ... չար բաներ չցանկանանք ... պոռնկություն և շնություն չանենք, ինչպես նախնիներից ոմանք պոռնկացան և ... ընկան: Սրանք մեզ որպես խրատ գրվեցին» (հմմտ. Ա Կորն. Ժ 1-11)։ Եվ Պողոս առաքյալը եզրակացնում է. «Ուստի, ով կարծում է, թե ՀԱՍՏԱՏ կանգնած է, թող զգուշանա, որ չլինի թե ընկնի»։ Մարդն իր կարողությունից վեր փորձության չի ենթարկվում։ Աստված հաստատուն հավաստիք է տվել, որ մեզնից ոչ ոք իր կարողությունից առավել փորձության չպիտի ենթարկվի, ավելին, երբ փորձության մեջ ընկնենք, Աստված պիտի հայթայթի նաև դրանից դուրս գալու միջոցը, որպեսզի կարողանաք համբերել, տոկալ և հաղթական դուրս գալ (հմմտ. Ա Կորն. Ժ 12-13)։ Այժմ մուտք գործենք սաղմոսի բնագրից ներս և փորձենք մեկնաբանել այն համառոտ կերպով։

3. Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում.
ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ:
Ողորմիր ինձ, ով Աստված, Քո մեծ ողորմության համաձայն.
Ըստ Քո առատ գթության քավիր իմ անօրենությունները:

Այս երկու նախադասությունները միևնույն իմաստն ունեն։ Ըստ եբրայական բանաստեղծության կանոնի՝ միևնույն գաղափարը երկու նախադասություններով է արտահայտվում։ Սա մեղավորի սրտաբուխ աղաղակն է, որն Իր գործած մեղքից ազատագրվելու համար ապավինում է Աստծո ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆՆ ու ԳԹՈՒԹՅԱՆԸ։ Այս երկուսը Աստծո միևնույն ստորոգելիներն են։ ԳԹՈՒԹՅՈՒՆՆ Աստծո կամ մարդու ներսից բխած ազնիվ մի զգացում է օգնության կարոտ մեկի հանդեպ, իսկ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆԸ՝ գութի գործնական արտահայտությունը։ Եթե առավել պատկերավոր արտահայտելու լինենք, պետք է ասենք, որ ԳՈՒԹԸ ակնաղբյուրն է, որից ջուր է բխում, իսկ ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆԸ աղբյուրը կամ առվակն է, որը հոսում է՝ շուրջբոլորը զովացնելով, զվարթացնելով, ոռոգելով և կենդանիների ծարավը հագեցնելով։ Այս երկու բառերն Աստվածաշնչում ամենաշատ գործածված բառերի շարքում են։ «Ողորմել» կամ «ողորմություն» բառը Սուրբ Գրքում գործածված է ավելի քան 500 անգամ՝ սովորաբար «գթալ» կամ «գթություն» բառերի հետ միասին։ «Ողորմած և գթած է Տերը». աղոթում ենք մեր ժամագրքի բառերով՝ «Քո ողորմությամբ և գթությամբ լսիր մեզ, Տեր»։

Սաղմոսերգուն ընդունում է, որ «անօրենություն» է գործել։ Աստվածաշնչի մեջ «մեղք» և «անօրենություն» բառերը հոմանիշ են։ «Ով մեղք է գործում, անօրենություն էլ է գործում, և մեղքն արդեն իսկ անօրենություն է» (Ա Հովհ. Գ 4)։ *Անօրենությունից կամ մեղքից ազատվելու միակ միջոցը Աստծո ողորմությանն ու գթությանն ապավինելն է։ Երբ Աստված մեզ գթում և ողորմում, ազատում է մեզ մեր մեղքերից, քավում է դրանք։ «Քավել» բայը և «քավություն» բառը բանալի բառեր են ոչ միայն այս համարի, այլև ամբողջ կրոնի մեջ։ «Քավել» նշանակում է ջնջել, մեղավորին իր մեղքից ազատել։ Երբ պարտատերը իր տետրից ջնջում է պարտապանի պարտքը, նրան ազատում է իր պարտքի բեռից և մտահոգությունից։ Նույնպես էլ Աստված, երբ մեր զղջման և խնդրանքի դիմաց չեղյալ է համարում մեր մեղքերը, դրանք քաված և ջնջած է լինում։ Մաքսավորն աղերսում է. «Աստվա՛ծ, քավի՛ր ինձ՝ մեղավորիս, իմ մեղքերից», իսկ Հիսուսն ավելացնում է. «Սա արդարացած իջավ իր տուն»*[1]։ *Քավություն ստանալը միաժամանակ արդարացվելն է։ Սաղմոսերգուի առանցքային խնդրանքն է՝ քավություն ստանալ, իր մեղքերից ազատվել։*

Ուրեմն՝ մեղքերից ազատվելու նախապայմանն է՝ ընդունել, որ մեղանչել և անօրենություն ենք գործել։ Ապա դիմել Աստծո ողորմությանն ու գթությանը, որովհետև Նա է, որ կարող է քավել, ջնջել մեր մեղքերը և ազատել մեզ դրա վատ հետևանքներից։ Որքան էլ ծանր լինեն մեր գործած անօրենությունները, քանի դեռ դրանք Սուրբ Հոգու դեմ գործված մեղքեր չեն, այսինքն՝ գործված կամավոր կուրությամբ, կարող ենք վստահ լինել, որ Աստծո գութն ու ողորմությունն ավելի մեծ են, քան մեր մեղքերը։ Աստված չի ուզում մեղավորի կորուստը կամ վհատությունը, այլ՝ զղջալն ու չար ճանապարհից դառնալը։ Հետևաբար, անկեղծորեն զղջացող մեղավորն անպատճառ քավություն կգտնի մաքսավորի կամ Դավթի պես։

Մարդիկ բնությամբ ոչ միայն մահկանացու են, այլ նաև մեղանչական։ Հովհաննես առաքյալը հաստատում է, որ մարդը միայն մեկ պարագայում է դադարում մեղանչելուց՝ երբ սերտորեն կապվում է Քրիստոսի հետ. «Ամեն ոք, ով Քրիստոսի վրա է հաստատված, չի մեղանչում, ամեն ոք, ով Աստծուց է ծնված, չի մեղանչում...մինչև իսկ չի կարող մեղանչել...» (Ա Հովհ. Գ 6-10)։ Այսուհանդերձ, երբ այս սերտ միությունը չկա, ամեն մարդ գիտակցաբար կամ անգիտակցաբար անպայման մեղանչում է։ Նույն առաքյալն ասում է. «Եթե ասենք, թե մենք մեղք չունենք, մենք մեզ ենք խաբում, և ճշմարտությունը չի բնակվում մեր մեջ։ Իսկ եթե խոստովանենք մեր մեղքերը, հավատարիմ ու արդար է Աստված՝ մեր մեղքերին

[1] Ղուկ. ԺԸ 13-14։

թողություն տալու և մեզ ամեն տեսակ անիրավությունից մաքրելու համար: Եթե ասենք, թե մենք ոչ մի մեղք չենք գործել, Աստծուն ենք սուտ հանում, և Նրա խոսքը չի բնակվում մեր մեջ» (հմմտ. Ա Հովհ. Ա 8-10):

Ներկայիս մարդկությունը ընդհանրապես մեղքի մասին գաղափար չունի և ոչ էլ ուզում է ունենալ: Իր համար ամեն ինչ բնական է. ինքն ազատ է ամեն ինչ անելու, և ոչ ոք իրավունք չունի իր ներքին կյանքին խառնվելու, մինչև իսկ Աստված: Ազատ է պետք եղած ժամանակ ինքն իրեն փչացնելու համար՝ թմրանյութերի օգտագործմամբ, գինեմոլությամբ, որկրամոլությամբ, շնությամբ, պոռնկությամբ, անառակությամբ, համասեռամոլությամբ և իր մարմնի չարաշահմամբ: Եվ իրեն ոչ մեկին պատասխանատու կամ հաշվետու չի համարում. վայելողն էլ է ինքը, վնասվողն էլ: Հետևաբար, ո՛չ զղջման կարիք է զգում, ո՛չ էլ ապաշխարության...: Այսպիսի մտածելակերպը հակամարդկային է, դիվական և մինչև իսկ՝ անասնական: Անասունները միայն մեղքի գիտակցություն չունեն, իսկ դևերը կամ սատանաները, որոնց բնակարանը, բարեկամն ու դաշնակիցը հենց վերոհիշյալ մտայնության տեր մարդիկ են, արդեն իսկ առաջին մեղավորներն են, մեղքն աշխարհ մտցնողները՝ մեղքի ակունքն ու աղբյուրը, և իրենց միակ նպատակն է մարդկանց ևս, իրենց պես մեղանչել տալով, Աստծո դեմ հանելը, ապերջանկացնելը և կորստյան առաջնորդելը: Ստույգ է, որ մարդու նպատակը չմեղանչելն է, որքանով որ հնարավոր է, բայց մեղանչելուց հետո պետք է ընդունել սեփական մեղավորությունը, զղջալ և ապաշխարել գործած մեղքի համար: Եթե մեկը չի ուզում ընդունել մեղքի գաղափարը, եթե մեկն արդարացնում է իր մեղանչական արարքները կամ ուզում է մոռացության մատնել դրանք, ոչ միայն կրոնից է հեռանում, այլ նաև մարդկությունից: Բայց դրանք հետևանքները, ի վերջո, պետք է կրի. «մեղքի վարձը, հետևանքը մահն է»,- ասում է Պողոս առաքյալը (հմմտ. Հռոմ. Զ 23): Մեզնից ամեն մեկը հակված է դեպի մեղքը և նրա մեջ ընկնում է իր մարմնավոր ու շնչավոր ցանկություններից հրապուրվելով. «ցանկությունը հղանալով մեղք է ծնում, իսկ գործադրված մեղքը մահ է ծնում» (հհմտ. Հակ. Ա 15):

Ուրեմն պետք է հետևենք Դավթին և ոչ թե մեր ներկա ժամանակների «անզգամ» մարդկանց, որոնք կա՛մ իրենց «սրտում», կա՛մ էլ հրապարակավ ասում են, թե՝ «Աստված չկա»: Սրանք համաձայն սաղմոսի խոսքի՝ «ապականվեցին և պղծվեցին իրենց անօրենություններով, և ոչ ոք բարություն չի անում. ամենքն էլ խոտորվեցին և միասնաբար անպիտան դարձան»:

Այո՛, Դավիթն էլ ամեն մեկիս պես ընկավ և ծանրագույն մեղքերով ընկավ: Բայց Ադամի և Եվայի պես մեղքի պատասխանատվութ-

յունը ուրիշների վրա գցելու փոխարեն գլուխ խոնարհեց, ընդունեց սեփական մեղքի ամբողջ պատասխանատվությունը և գոչեց. «Տիրոջ առջև մեղք գործեցի»։ Բոլոր նրանք, ովքեր անկեղծորեն ընդունում են իրենց մեղանչած լինելը, ապաշխարելուց երբեք չեն խուսափում։ Դավիթն ապաշխարեց և քավության արժանացավ։ Այդպես անենք նաև մենք և Շնորհալի հայրապետի հետ աղոթենք և Աստծուն աղերսենք. «ԱՐԴԱՐՈՒԹՅԱՄԲ ՄԻ ԴԱՏԻՐ, ԱՅԼ ՔՈ ԳԹՈՒԹՅԱՄԲ ՔԱՎԻՐ»[1]։

4. Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ. և ի մեղաց իմոց սուրբ արա զիս:
Առավել ևս լվա՛ ինձ իմ անօրենությունից և իմ մեղքից մաքրի՛ր ինձ:

Նախորդ համարի մեջ հիշված «քավել» բայի իմաստն է, որ բացահայտվում է այս համարով։ Աստված մեր մեղքերին «քավություն» է շնորհում՝ «լվալով մեր անօրենությունները» և «սրբելով մեր մեղքերը»։ Մեղանչելով մենք դուրս ենք գալիս Աստծո ներկայությունից, մենք այլևս անարժան և անհարմար վիճակում ենք հայտնվում՝ շարունակելու մեր բնականոն հարաբերությունն Աստծո հետ։ Այլ կերպ ասած՝ Աստծո հետ մեր հարաբերությունը խզվում է։ Աստծո ներկայությանը վերստին բարձրանալու համար անհրաժեշտ է «լվացվել անօրենությունից» և «սրբվել մեղքերից»։ Իսրայելի ժողովուրդը Օրենքի տվչության ժամանակ, երբ կանչվեց Աստծուն ներկայանալու Սինա լեռան ստորոտին, Աստված Մովսեսին նախ այս հրահանգը տվեց. «Գնա՛ ժողովրդի մոտ և ՄԱՔՐԻՐ նրանց այսօր և վաղը։ Թող ԼՎԱՆԱՆ իրենց զգեստները և պատրաստ լինեն երրորդ օրը, որովհետև երրորդ օրը ողջ ժողովրդի աչքի առջև Տերը պիտի իջնի Սինա լեռան վրա» (հմմտ. Ելք ԺԹ 10-11)։

Իսկ Մաղաքիա մարգարեն, ակնարկելով Մեսիայի գալուստը և նրա կատարելիք դերը, որ ժողովրդին Աստծուն մոտեցնելն էր, ասում է հետևյալը. «Նա (Մեսիան) մեկուսաղ հալեցնող արհեստավորի կրակի պես և հագուստ լվացող օճառի պես պիտի ՄԱՔՐԻ Ղևիի որդիներին, ոսկու և արծաթի պես պիտի ՀՏԻ նրանց, որպեսզի մաքրվեն և հարմար վիճակում հայտնվեն՝ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՄԲ Տիրոջը պատարագ մատուցելու» (հմմտ. Մաղ. Գ 3)։ Ահա, թե ինչու են պատարագիչ հոգևորականները Սուրբ Խորան բարձրանալուց առաջ լվանում իրենց ձեռքերը և խոստովանում իրենց մեղքերը, և դրանից հետո միայն մերձենում Աստծո ներկայությանը։ Նույնը պարտավոր ենք անել նաև մենք հոգևոր կյանքում. մեղանչելով մարդն ապականվում և աղտոտվում է, հետևաբար կա-

[1] Տես Առավոտյան ժամերգության կարգի մեջ *«ԵՐԳ Տեառն Ներսիսի վասն երկրորդի աւուր արարչութեանն, եւ վասն երկնայնոց զօրացն»* շարականը:

րիքն է ունենում «լվացման և մաքրման»։ Մարդը մեղքով պղծվում է, այսինքն՝ դառնում է «անսուրբ», հետևաբար չի կարող մերձենալ ՍՈՒՐԲ Աստծո ներկայությանը։ Ուստի, մեղանչած սաղմոսերգուն ուզում է այնպես մաքրվել, այնպես լվացվել, որ մեղքի ոչ մի հետք չմնա իր վրա. «Առավել ևս լվա՛ ինձ», որովհետև «առավել» եմ մեղանչել եմ Քո առաջ,- ասում է սաղմոսերգուն։ Նույնն ասենք մենք ևս մեր մեղքերից իսպառ մաքրվելու համար։

5. Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ,
և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ:
Իմ անօրենությունները ես անձամբ գիտեմ,
և մեղքն իմ ամեն պահ առջևս է:

Սաղմոսերգուն շարունակում է իր խոստովանությունը և այն ավելի հստակեցնում։ Իր մեղքը դուրս է եկել ջրի երես։ Նման պարագայում ներկայիս մարդկանց համար կարևոր հարցն այն է, թե արդյո՞ք ուրիշներն էլ գիտեն մեր գործած մեղքը։ Եթե չգիտեն, աշխատում ենք ծածուկ պահել։ Մինչդեռ սաղմոսերգուի համար կարևորը ուրիշների գիտենալը չէ։ Գործված այդ անօրենությունը նրա ժամանակներում այնքան սովորական էր իշխանավորների համար, որ անգամ մեղք չէին համարում։ Բայց այն պահից, երբ մարգարեն նրա առաջ դրեց իր մեղքի ահավորությունը, մեղավոր արքան այլևս չկարողացավ ազատվել իր մեղքի մղձավանջից։ Նա հստակորեն տեսավ իր արարքների ահավոր անօրենություն լինելը։ Այս գիտակցությունը ծանծաղ կամ մակերեսային չէ, այլ՝ խորունկ ու հիմնավոր։ Այսպես նա նմանվում է մի մարդու, որը բախվելով քարի գայթել ու վայր է ընկել է քիթ-բերանի վրա։ Եվ այժմ, հայելու առաջ կանգնած, դիտում է ինքն իրեն. դեմքի վրա ամենուր վերքեր են գոյացել, աչքերի շուրջն ուռել և սևացել է, քիթը կոտրվել, շրթունքները՝ պայթել, ատամները՝ թափվել, դեմքը եղծվել ու տգեղացել է։ Նայում է ինքն իրեն սարսափով ու զայրույթով. ինքը՝ «Աստծո սրտին համաձայն մարդը», ինչպե՞ս կարողացավ այս անօրենությունները գործել, ինչո՞ւ ավելի զգուշավոր չեղավ և չնշմարեց ոտքի առջև ելած խոչընդոտը, որին բախվելով երեսն ի վայր ընկավ...։ Անկումից ստացած վերքերը շարունակ կսկծում են, և իր բարոյական տգեղությունն աչքի առջևից չի հեռանում։

Մեղանչած լինելու անվերապահ գիտակցությունը նախապայման է Աստծուց քավության և թողության արժանանալու համար։

6. Քեզ միայն մեղայ Տէր, և չար առաջի քո արարի:
Որպէս արդար եղիցես ի բանս քո, և յաղթաւղ ի դատել քեզ:

Քո դեմ միայն մեղանչեցի, Տեր, և չարիք գործեցի Քո առջև, այդպես որ արդար ես Քո խոսքերում, և հաղթող, երբ դատում ես:

Դավիթը մեղք էր գործել մարդկանց դեմ. շնացել էր մի կնոջ հետ և սպանել տվել անմեղ մի մարդու՝ նրա կնոջը տիրանալու համար: Սակայն, նրա գործած չարիքը իրականում Աստծու դեմ էր, որովհետև Աստված ասել էր՝ «Մի՛ սպանիր, մի՛ շնացիր, մի՛ գողացիր, մի՛ ցանկացիր ընկերոջդ կնոջը»: Աստծո պատվիրանների դեմ գործված ամեն արարք Աստծո դեմ գործված անօրենություն է, որովհետև անտեսվում է Աստծո խոսքն ու հեղինակությունը: Մինչև իսկ երկու հոգի եթե առանց բռնության, իրար հետ համաձայնելով մեղանչեն, դա չի դադարի մեղք և Աստծո առաջ չարիք լինելուց, որովհետև մարդու մարմինը՝ Արարչի գլուխգործոցը, չի ստեղծվել կին-տղամարդ ապօրինի հարաբերություն մշակելու համար: Քրիստոնեության մեջ այս կետը հատկապես հստակ է և մեծ առաքյալը պատվիրում է. «Մարմինը ոչ թե պոռնկության (կամ շնության), այլ Տիրոջ համար է: Չգիտեք, որ ձեր ՄԱՐՄԻՆՆԵՐԸ Քրիստոսի անդամներն են: Արդ, Քրիստոսի անդամներն առնելով՝ պոռնիկի՞ անդամներ ենք դարձնելու: Քա՛վ լիցի... Փախե՛ք պոռնկությունից (և շնությունից): Ինչ մեղք որ մարդը գործում է, իր մարմնից դուրս է, բայց ով պոռնկանում է (կամ շնանում է), իր մարմնի դեմ է մեղք գործում: Չգիտեք, որ ձեր մարմինները տաճար են Սուրբ Հոգու, որ ձեր մեջ է...: Ուստի փառավորե՛ք Աստծուն ձեր մարմինների ու ձեր հոգիների մեջ, որոնք երկուսն էլ Աստծուն են պատկանում» (հմմտ. Ա Կորն. Զ 13-20):

Բոլոր մեղքերն Աստծո դեմ են: Ինչպես որ Հիսուսն Իրեն է վերագրում այն բարիքները, որոնք մարդիկ արել են միմյանց՝ հաց ու ջուր են տվել սովածին, հագուստ ու ապաստան են հատկացրել մերկին և դրսում մնացածին, այցելել են հիվանդին և բանտարկյալին (հմմտ. Մատթ. Իե 35-36), այնպես էլ մեր ընկերների դեմ գործված բոլոր մեղքերը Աստծուն են գնում, որովհետև, վերջին հաշվով, բոլոր մեղքերն անհնազանդություն են Աստծո պատվիրանների, Աստծո օրենքների դեմ:

«ԱՅՆՊԵՍ ՈՐ ԱՐԴԱՐ ԵՍ ՔՈ ԽՈՍՔԵՐԻ ՄԵՋ»: Կարող է հարց ծագել, թե ի՞նչ կապ կա այս և նախորդ խոսքերի միջև: Առաջին հայացքից՝ ոչ մի, սակայն խորքում շատ սերտ կապ կա այս երկուսի միջև, ներքին և անտեսանելի կապ: Սաղմոսերգուն ուզում է ասել, թե «Երբ մենք Քո դեմ մեղանչում ենք, Տեր», այդ ժամանակ ենք միայն փորձառությամբ հասկանում, որ «արդար ես Քո խոսքերի մեջ», այսինքն՝ Քո դեմ մեղանչելուց հետո ենք միայն հասկանում Քո խոսքերի ստույգ և ճշմարիտ լինելը: Սաղմոսերգուն գիտե, որ շնությունը,

սպանությունը, ուրիշի կնոջը ցանկանալը վատ բաներ են, Ս. Գրքի լեզվով՝ «չար» բաներ են Աստծո աչքին և արգելված են։ Աստված չի կամենում այսպիսի բաներ տեսնել Իր ստեղծած բարի արարածների միջև։ Բայց Դավիթն այս ճշմարտության ապրված, զգացական ու գիտակցական ըմբռնումը չուներ, քանի դեռ չէր մեղանչել։ Այդպիսին էին նաև նախածնողները. «Ադամն ու իր կինը մերկ էին, և չէին ամաչում» (Ծնն. Գ 7)։ Մեղանչումից հետո միայն իրենց մերկության գիտակցությունն ունեցան և սկսեցին ամաչել. «Եվ նրանց (Ադամի ու Եվայի) աչքերը բացվեցին և իմացան, որ մերկ են, և թզենու տերևներից իրենց ծածկոց սարքեցին» (Ծնն. Գ 7)։ Ուրեմն մեղանչելուց հետո միայն Աստծո խոսքի «արդար» լինելու փորձառական հասկացողությունն ունեցան։ Նույնը պատահեց Դավթին և նույնը պատահում է բոլոր մեղանչողներին։ Երանի՜ նրան, ով նախքան մեղանչելը հավատում է, որ «Աստծո խոսքերն արդար» են, ստույգ և շիտակ են, երբ ասում է. «Մի՛ շնացիր, մի՛ սպանիր»՝ մյուսներով հանդերձ։ Երանի՜ նրան, ով հավատում է, որ Քրիստոսի այս մասին ասածները նույնքան և առավել ճշմարիտ են, արդար են, երբ բարեփոխելով վերոհիշյալ խոսքերը՝ ասում է. «Մի՛ նայիր կնոջը կամ տղամարդուն ցանկանալու աչքով։ Քո նմանին անարգալից խոսքեր մի՛ նետիր, հիմար կամ ապուշ մի՛ ասա։ Ոչ միայն սուտ մի՛ խոսիր, այլ նաև քո այոն՝ այո, ոչը՝ ոչ թող լինի։ Ոչ միայն մի՛ ցանկացիր ուրիշի ունեցվածքը, այլ նաև քեզնից նյութական օգնություն ուզողին տո՛ւր»։ Եթե սրանց հակառակ գործենք, կտուժենք, Աստծուց կկզվենք և չենք ուզենա մերձենալ Իր ներկայությանը, ինչպես նախածնողներն արեցին. «Տեր Աստծո երեսից թաքնվեցին դրախտի ծառերի մեջ» (Ծնն. Գ 8)։ Ուրեմն Դավիթն Աստծո դեմ մեղանչելուց հետո միայն զգաց, որ Աստծուց հեռացել է, Աստծու դեմ մեղք է գործել և արժանի է մահվան։ «Աստծո խոսքերի արդար» լինելը հաստատապես իմացավ։

Աստծո խոսքերն ունեն վերջնական կնիք։ Նրա խոսքերը ճշմարիտ են, անփոփոխելի և արդար։ Աստված չի կարող (մեղա՜, մեղա՜) սխալվել, Աստված չի կարող (մեղա՜, մեղա՜) ստել. ինչ որ ասում է, ստույգ է ու ճշմարիտ։ Վա՜յ նրան, ով գործում է Աստծո խոսքերի ԴԵՄ։ Երանի՜ նրան, ով ապրում է Աստծո խոսքերի ՀԱՄԱՁԱՅՆ։ Մարդը երկու դեպքում էլ պիտի ճանաչի դրանց «արդար», ճշգրիտ և ուղիղ լինելը. առաջին դեպքում՝ ի վնաս և ի տրտմություն իրեն, երկրորդ դեպքում՝ հօգուտ և հուրախություն իրեն։

«ԵՎ ՀԱՂԹՈՂ, ԵՐԲ ԴԱՏՈՒՄ ԵՍ»։ Դատել նշանակում է դատավորի գործ կատարել՝ ճիշտը սխալից և մեղավորին անմեղից զատել։ Աստված է միայն ճիշտ դատում, միայն Աստծո վճիռն է ուղիղ։ Մարդու վճիռը թերի և սխալական է։ Առհասարակ մեզ՝ մահկանացունե-

րիս, արգելվում է «դատել», այսինքն՝ ուրիշների առնչությամբ վճիռ կայացնել. «Մի՛ դատեք, որպեսզի չդատվեք»,- ասում է Հիսուս (Մատթ. Է 1)։ Ինչո՞ւ. «որովհետև ինչ դատավճռով (այսինքն՝ ինչ չափանիշներով կամ ինչ օրենքներով) որ դուք եք դատում ուրիշներին, արդար կամ անարդար հայտարարում, դրանով նաև դուք պիտի դատվեք, ինչ չափով որ ուրիշներին չափեք, դրանով նաև դուք պիտի չափվեք»։ Եթե խստությամբ և առանց ներելու դատենք, այդպես պիտի դատվենք նաև մենք. վա՜յ մեզ այն ժամանակ։ Իսկ եթե սիրով և ներողամտությամբ դատենք, նույն կերպով դատի կարժանանանք նաև մենք. երանի՜ մեզ։ Հետևաբար, հաշվի առնելով մեր մարդկային գիտության չափավոր և սահմանափակ բնույթը, մեր վճիռը կարող է սխալական լինել։ Իսկ Աստված, լինելով ամենակատարյալ և ամենաիմաստուն, դատում է միշտ արդար, միշտ ուղիղ, միշտ անսխալ։

Եթե մեզ արգելված է մարդկանց դատել, որչա՜փ առավել արգելված պիտի լինի Աստծուն դատել։ Այո՛, մենք գրեթե ամենքս էլ գիտակցաբար կամ անգիտակցաբար գործում ենք այս ամբարշտությունը և ամբարտավանությունը։ Դատում ենք Աստծուն։ Արդյոք ո՞վ վրդովված և վհատված պահերին կամ մտքի և հոգու զայրացած վիճակում չի ասել. «Ինչո՞ւ Աստված ինձ այսպես արեց, ես արժանի չէի այս պատժին կամ կորստին, ինչո՞ւ է Աստված արտոնում չարիքն աշխարհում» և այլն։ Սրանք դատավճիռ են Աստծո դեմ, այսպես դատում ենք Աստծուն և (մեղա՜, մեղա՜) Նրան ուղղակի կամ անուղղակի հայտարարում ենք անարդար, սխալական ու մինչև իսկ անկարող։ Այս վճիռները, սակայն, մեզ որևէ տեղ չեն առաջնորդում, այլ հաստատում են մեր իմացության և դատողության սահմանափակ և սխալական լինելը։

Նման պարագաներում ոմանք մինչև իսկ ուրանում են Աստծո գոյությունը և ասում. «Եթե Աստված գոյություն ունենար, այս ամենը չէր պատահի»։ ԱՆԶԳԱՄ մարդն է միայն իր մտքում ասում, թե՝ «Աստված չկա» (հմմտ.Սաղմ. ԾԲ 1)։ Իսկ զգայուն մարդը՝ ճշմարիտ բարեպաշտ և բանական մարդը, վշտանալով ու լալով հանդերձ՝ ասում է. «Տերը փվեց, Տերն առավ, օրհնյալ լինի Նրա անունը: Այս ամենի մեջ Հոբը չմեղանչեց և Աստծո դեմ ԱՆԶԳԱՄՈՒԹՅՈՒՆ չգործեց» (հմմտ. Հոբ Ա 21-22)։ Աստծո մարդը, մինչև իսկ Աստծո Որդին, ասելով՝ «Հոգիս տրտում է մեռնելու աստիճան» կամ ընդունելով՝ «Հոգիս հոժար է, բայց մարմինս՝ տկար», - ավելացնում է. «Ոչ թե իմ կամքը, այլ Քո կամքը թող լինի» (հմմտ. Մատթ. ԻԸ 38-39)։

Ոմանք էլ մինչև իսկ ամբարշտություն են գործում՝ հայհոյելով Աստծո սուրբ անունը, երբ իրենց վրա փորձանքներ են գալիս սեփական մեղքերի և անտարբերության պատճառով։ Աստծուց ուղարկված կամ արտոնված այս զգաստացնող կամ զգուշացնող

արարքներից խրատվելու, դարձի գալու և ապաշխարելու փոխարեն բերանները լայն բացում են Աստծո դեմ, ինչպես Հայտնության գրքի հեղինակն է հաստատում. «Մարդիկ երկնքի Աստծուն հայհոյեցին իրենց ցավերի ու վերքերի համար, բայց իրենց չար գործերի համար չապաշխարեցին» (Հայտն. ԺՁ 11)։

Մարդիկ Աստծուց ունեն անձնական ակնկալիքներ, որոնք երբ չեն ստանում, կա՛մ նեղանում են Աստծուց, կա՛մ հեռանում, կա՛մ բոլորովին ուրանում Նրան։ Ուրիշներն էլ, շարունակելով հավատալ Նրա գոյությանը, քննադատում և դատապարտում են Նրան։ Եթե հուսախաբվում ենք մեր ակնկալիքների և հաշիվների մեջ կամ ձախողում ենք դրանք, ավելի խոհեմ է խոստովանել, որ մենք ենք սխալվել, քան Աստծուն անարդարացիորեն դատել և դատապարտել մեր աղոթքները չլսելու մեղադրանքով։ Հաճախ մենք ենք մեր անհնազանդությամբ, ամբարտավանությամբ, մեր անձնասիրությամբ և նեղ հաշիվներով «անկարող» դարձնում Աստծուն, որ Իր մասնավոր շնորհները հեղի մեզ վրա։ Հիսուսը Նազարեթում «չէր կարողանում» հրաշք գործել՝ հակառակ նրանց ակնկալությունների ու խնդրանքի, որովհետև տեղի բնակիչները չէին կարողանում հավատալ Հիսուսի հրաշագործելու կարողությանը։ Դավիթը, սակայն, հավատում էր Աստծո արդարությանը, այնպես որ, երբ իր վրա պատիժ արձակվեց, փոխանակ ընդվզելու՝ համակերպվեց Աստծո տնօրինության հետ և ապավինեց Նրա ողորմությանն ու գթությանը։

Մենք պետք է իմանանք, որ Աստծո գործելու կերպերը և շարժառիթները չեն պարփակվում մարդկային ուղեղի սահմանափակ տարողության մեջ, ինչպես Պողոս առաքյալն է հաստատում. «Ինչ խորն են Աստծո մեծությունը, իմաստությունն ու գիտությունը։ Որքա՜ն անքննելի են Նրա ՎՃԻՌՆԵՐԸ, և անզննելի՝ Նրա ճանապարհները։ Որովհետև ո՞վ իմացավ Տիրոջ միտքը, կամ ո՞վ Նրան խորհրդատու եղավ, կամ ո՞վ նրան փոխ տվեց, որ փոխարենն առնի Նրանից։ Քանի որ ամեն ինչ Նրանից է, Նրանով է և Նրա համար։ Նրան փա՜ռք հավիտյանս. ամեն» (հմմտ. Հռոմ. ԺԱ 33-36)։

7. Անօրէնութեամբ յղացաւ, և ի մեղս ծնաւ զիս մայր իմ: Անօրենությամբ հղիացավ և մեղքի մեջ ծնեց ինձ մայրս:

Բնականաբար, սաղմոսերգուն նպատակ չունի իրեն արդարացնել կամ իր մորը դատապարտել, քավ լիցի։ Իր նպատակն է հիշել և հիշեցնել իր ակունքի աղտոտված լինելու իրականությունը, և ինքնիրեն խոնարհեցնել։ Նա ուզում է ասել, որ իր իսկ ծննդյան օրից նա հակամետ է մեղքին, ինչպես ասել էր Աստված. «Մարդու միտքի չարին է հակված իր մանկությունից» (Ծննդ. Ը 21)։ Սա «սկզբնական մեղք»

կամ «սկզբնական այլասերում» կոչվածն է, որը հաջորդեց նախամարդու մեղքին և անկումին։ Արդարև, մեզանից յուրաքանչյուրը ապականված բնությամբ և խանգարված հոգեկան մեքենականությամբ է աշխարհ գալիս։ Ավերված կամ եղծված է մարդու մեջ Աստծու պատկերը, որով նա ստեղծվեց։ Բոլորովին հեռացած է Աստծու ձեռքով ստեղծված սկզբնական մարդու մաքրությունից և ուղղամտությունից։

Ուրեմն ծնունդից մենք արդեն ունենք մեր մեջ մեղքի մանրէները։ Այս դժբախտ իրողությունն է, որ հաճախ դժվարացնում է մինչև իսկ մկրտված ու վերածնված մանկան աճը Աստծու շնորհների մեջ։ Անկումը դառնում է անխուսափելի։ Մարդը միայն կարգապահությամբ կարող է պահել վերստին ծնունդից, այսինքն՝ մկրտությունից, ստացած անմեղության վիճակը, սակայն այդպիսիք չափազանց քիչ են։ Այս գործում ամենամեծ դերն ունեն ծնողները, որովհետև եթե նրանք իրական քրիստոնյաներ լինեին՝ կաշխատեին իրենց սիրելիներին էլ այդ մաքուր մթնոլորտում պահել։ Սակայն քրիստոնյաների մեծագույն մասը մկրտությունից հետո անպատճառ ընկնում է մեղքի մեջ։ Այս քրիստոնյաները, ի վերջո, երկու խմբի են բաժանվում. ոմանք անդրադառնում են իրենց անկմանը և ապաշխարությամբ աշխատում են վերագտնել և վերատիրանալ մկրտությունից ստացած իրենց արդարացումին։ Արդարև, մենք մկրտությամբ ոչ միայն հավատքի, հույսի և սիրո հիմնական առաքելություններին ենք տիրանում, առանց որոնց չկա փրկություն և չկա քրիստոնեական կյանք, այլ նաև «Մկրտված և ԱՐԴԱՐԱՑԱԾ ենք, մեղքից ՍՐԲՎԱԾ, դևերից ԱԶԱՏՎԱԾ և Աստծուն ԾԱՌԱՅԵԼՈՒ մեջ մտած»՝ հրեշտակների նման։ Մկրտությունից հետո կատարած մեղանչումներով մենք այս շնորհները կորցնելու վտանգի ենք ենթարկում։ Իսկ երբ անդրադառնում ենք մեր անկումին և ապականությանը, Աստված գտնում է միջոց՝ կրկին բարձրացնելու ու վերահանձնելու մկրտությամբ ստացած վերոհիշյալ շնորհները։

Որևէ քրիստոնյայի, հատկապես հայ քրիստոնյայի համար, կենաց և մահու խնդիր է մկրտությունից հետո՝ կամա թե ակամա, գիտությամբ կամ անգիտությամբ գործած մեղքի տեր լինելուց հետո, դրանից ազատվելու տրամադրություն ունենալը կամ չունենալը, դարձի գալը կամ չգալը, ապաշխարելը կամ չապաշխարելը. վերահաստատվելը մկրտությամբ մեզ տրված շնորհների մեջ, կամ նրանցից ինքներս մեզ զրկված պահելը։ Իսկապես սա կենաց և մահու հարց է, որովհետև ապաշխարելով հավիտենական կյանք պետք է ունենանք, իսկ չապաշխարելով՝ զրկված կլինենք կյանքից։ Երանի

նրանց, ովքեր կարող են անարատ պահել մկրտությամբ ստացած շնորհները։ Ինչպես արդեն նշեցինք, նման մարդկանց թիվը շատ սակավ է, հազվագյուտ են նրանք։ Բայց առավել երանի նրանց, ովքեր մկրտության շնորհները կորցնելուց հետո կարողացան վերականգնել դրանք։ Այդպիսիների ուրախությունը ավելի ուժգին և կրկնապատիկ պիտի լինի, նման այն կնոջ, որ կորցրեց և վերագտավ իր դրամը։ Որքան ժամանակ որ այդ դրամը իր գրպանում էր՝ նա գոհ էր, իսկ երբ կորցրեց՝ անձկության մատնվեց, երբ վերագտավ՝ երջանկացավ, որովհետև անոթի և չքավոր մնալու վտանգից ազատվեց։ Այսպես պետք է լինի նաև մկրտությունից հետո մեղանչող, դարձի եկող ու ապաշխարող քրիստոնյայի վիճակը։

Սակայն դժբախտաբար, մկրտությունից հետո մեղքի և մոլության մեջ ընկնողների մեծ մասը մնում է անկյալ վիճակում։ Սրանց վախճանը շատ վատ պետք է լինի. այս մասին բազմաթիվ ազդարարություններ կան Նոր Կտակարանում, օրինակ՝ «որովհետև, եթե մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսին ճանաչելու միջոցով աշխարհի պղծություններից փախչելուց հետո դարձյալ նույն բաներով բռնվեն մնան, նրանց վախճանը կլինի ավելի վատ, քան առաջին վիճակը. քանի որ ավելի լավ էր նրանց համար, եթե բնավ ճանաչած չլինեին արդարության ճանապարհը, քան այն, որ ճանաչեցին և հետ կանգնեցին այն սուրբ պատվիրանից, որ ավանդվեց նրանց» (Բ Պետր. Բ 21-22)։

Ավելի խիստ է Եբրայեցիների թղթի հեղինակի ազդարարությունը. «որովհետև մեկ անգամ մկրտվածների համար, որ ճաշակեցին երկնավոր պարգևներից, հաղորդակից եղան Սուրբ Հոգուն, Աստծու գեղեցիկ խոսքի վայելքն ունեցան և գալիք աշխարհի զորությունները ճանաչեցին, - եթե սայթաքեն, անհնար է երկրորդ անգամ ապաշխարությամբ նորոգվել» (Եբր. Զ 4-5, տես նաև՝ Եբր. Ժ 26-27)։

Որքան էլ ահասարսուռ թվան այս խոսքերը, ոչ ոք թող չվհատվի, որովհետև այս ակնարկը նրանց համար է, որոնք չափահաս և գիտակից տարիքում էին մկրտվել. վայելել են մկրտությամբ իրենց շնորհված նոր հոգեվիճակի երջանկությունը, իրենց ներքին ապրումով էլ հաստատեցին քրիստոնեական կրոնի մեծությունը, վեհությունը և երանությունը։ Այս մարդիկ եթե ընկնեն՝ դժվար, մինչև իսկ անհնար է նրանց վերականգնվելը։ Մինչդեռ մենք անգիտակից վիճակում ենք ստանում քրիստոնեական շնորհները, նրանից բխող երջանկության փորձառությունը դեռ չունենք. այսպես որ առհասարակ անգիտակցաբար ենք մեղանչում և հանկարծ զգում, որ ինչ որ բան ենք կորցնում. սա մեր անմեղությունն է։ Հետևաբար ջանք ենք թափում այն վերստին գտնելու, որի ճանապարհը ապաշխարությունն է։ Իսկ չապաշխարողները ինչքան մնում են իրենց մեղքերի և

մոլությունների մեջ, այնքան ավելի դժվար է նրանց դարձը։ Աստված թող պահի ամենքիս անհոգությունից, անտարբերությունից և այս աշխարհից անապաշխար հեռանալուց։ Ընդհակառակը, Աստված թող անպակաս անի բոլոր մեղավորներից իմաստությունը, կարողությունը և շնորհը, որպեսզի մեղանչելուց անմիջապես հետո զգան, որ հեռացած են Աստծուց, ապաշխարեն, դարձի գան և վերստանան արդարացման շնորհը և հավիտենական կյանքը։

8. Դու Տէր զճշմարտութիւն սիրեցեր,
զանյայտս և զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ:
Դու, Տեր, ճշմարտությունը սիրեցիր,
անհայտները և ծածկվածները Քո իմաստությամբ հայտնեցիր ինձ:

Այս համարը մի փոքր այլկերպ է եբրայական բնագրում և դրանից կատարված թարգմանություններում, սակայն մենք չենք անդրադառնալու այդ տարբերություններին[1]։

Յարդ սաղմոսերգուն անկեղծ զղջում հայտնելով՝ ընդունում և խոստովանում է իր մեղանչած լինելը և Աստծու ողորմության և գթությանն է ապավինում։ Այս ամենը ընդհանուր ձևի մեջ ևս մի անգամ հաստատում է այս համարով. «Դու, Տեր ճշմարտությունն ես սիրում»,- հետևաբար՝ ես էլ առանց ծածկելու, առանց վերապահության Քո առջև դրեցի իմ մեղավոր լինելու դառն իրականությունը։ Այս ամենը արեցի, քանզի Դու ցույց տվեցիր ինձ ճշմարտության ճանապարհը և շատ բաներ, որոնք ինձ համար «անհայտ և ծածուկ» էին «հայտնեցիր»։

Արդարև, Աստված ամենից շատ մարդկանց մեջ ճշմարտությունն է փնտրում։ Ինքն ամեն ինչ տեսնում է այնպես, ինչպես իրականում կա, և ուզում է, որ մարդիկ էլ այնպես անեն։ Աստծու համար ամենից ատելի բանը կեղծիքն է, սուտն է, երկերեսանիությունն է։ Այս է պատճառը մեր Փրկչի, մեր «հեզ և խոնարհ» Տիրոջ զայրանալու և «կեղծավոր փարիսեցիների» հասցեին կարդացած վայերի ծանրության[2]։ Փարիսեցու և մաքսավորի հայտնի առակում[3] փարիսեցին ինքն իրեն Աստծուն ներկայացնում է պայծառ գույներով։ Դրանով նա անուղղակիորեն մեղանչեց Աստծու դեմ, կարծելով, թե

---

[1] Եբրայերենում՝ *Ահա դու սիրում ես ճշմարտությունը երիկամունքներում. և ծածուկ [տեղը] իմաստություն կ'սովորեցնես ինձ։* Հայերենը թարգմանվել է հունարենից:

[2] Տես Մատթ, Ե 5 և ԻԳ 12-32:

[3] Տես Ղուկ. ԺԸ 9-14:

Աստված բավարար կերպով նրան չի ճանաչում, ծանոթ չէ իրեն և իր գործերին։ Հետևաբար՝ անհրաժեշտություն էր զգում ինքնիրեն ներկայացնելու Աստծու առջև, սակայն Աստված Իր դեմքը շրջում է նրանից։ Իսկ մաքսավորը գիտի, որ Աստված գիտի նրա մեղավոր լինելու մասին, ուստի անկեղծ զղջումով միայն Նրա քավությունն է հայցում և արժանանում Աստծու ուշադրությանը և արդարացված մեկնում տաճարից։

Սաղմոսերգուն էլ, առանց ինքնարդարացման ճիգի, առանց իր մեղքերը թեթևացնելու պատճառներ հորինելու, խոստովանում է դրանք եղածի պես։ Աստծո ուզածն էլ այս է, որ մարդը ջանք չթափի ինքնիրեն եղածից տարբեր պատկերացնելու Աստծո ներկայությամբ, երբ Նա մեզնից ավելի լավ է ճանաչում մեզ։ ԼԱ սաղմոսը սքանչելիորեն լուսաբանում է սա.

«Երանի՜ այն մարդուն որի հոգում նենգություն չկա...
երբ մեղքերս չխոստովանեցի (այսինքն՝ ուզեցի ծածկել Քեզանից)
Ոսկորներս մաշվեցին և անհանգիստ եղա:
Հետևաբար ի վերջո մեղքերս Քեզ հայտնեցի
Ու Դու ներեցիր մեղքերս»:

Իսկ ի՞նչ են այս «անհայտ ու ծածուկ» բաները, որոնք Աստված Իր իմաստությամբ հայտնեց սաղմոսերգուին։ Երբեք չենք իմանա նրանց իսկությունը, սակայն այս սաղմոսն ինքնին լայն գաղափար է տալիս այդ մասին։ Ու եթե մինչև իսկ ենթադրենք, որ այդ «անհայտն ու ծածուկը» նույնինքն այս սաղմոսն է և նրանում արտահայտված գաղափարներն են, սխալված չենք լինի։ Արդարև, այս սաղմոսը գրեթե ծայրից ծայր մի նոր «հայտնություն» է, որը շատ առաջ է և շատ վեր է իր ժամանակի գաղափարներից ու տեսակետներից։ Նախ՝ սաղմոսի առաջին մասում արտահայտությունների անկեղծությունը, ծանրախոհությունը և զսպվածությունը գրեթե «անհայտ» բաներ էին Դավթի ժամանակի համար, ուր նման պարագաներում տիրապետում էին չափազանցություններ և Աստծու մեծ անվանը ուղղված ճոռոմացված արտահայտություններ։ Նույնպես սաղմոսի երկրորդ մասում խնդրած բարիքների նրբությունը և վեհությունը «ծածկված» բաներ էին բանաստեղծի օրերում։ Այդ օրերին, ինչպես և այսօր, ամենից ցանկալի բաներն էին առողջությունը, նյութական բարեկեցությունը և հարստությունը, և հետևաբար ամենից շատ խնդրված բաներն էին Աստծուց։ Մինչդեռ սաղմոսերգուն խնդրում է «սուրբ սիրտ և ուղիղ հոգի», ինչը գրեթե նորություն էր, և նորություն է նաև շատերի համար մեր ներկա ժամանակներում Աստծուց խնդրելու համար։

Արդարև, որտեղ անկեղծություն կա, իրականությունը եղածի պես տեսնելու և ընդունելու տրամադրություն կա այնտեղ, որով ստեղծվում է հնարավորություն, որ Աստված Իր իմաստությամբ Իր անհուն շտեմարաններից բարիքներ կբաշխի և կհայտնի «անհայտ և ծածուկ» ճշմարտությունները։ Երբ ապաշխարող մեղավորը Աստծուց տրված իմաստության շնորհիվ զգում է, թե որքան հակառակ է գործել Աստծո կամքի դեմ, ոչ միայն սարսափելի ամոթն ու խղճահարությունն են համակում և խոնարհեցնում նրան, այլ նաև մտավոր լույսի և իմաստության նոր ճառագայթներ են տալիս, որոնք մինչ այդ «անհայտ և ծածուկ» ճշմարտություններ էին նրա համար, և որոնք արդեն լուսավորում են նրա վերելքի ճանապարհը։

9. Ցօղեա յիս մշտկաւ և սուրբ եղէց,
լուա և քան զձիւն սպիտակ եղէց։
Ցողիր ինձ մշտիկով և կմաքրվեմ
լվա՛ և ձյունից ճերմակ կլինեմ։

Այն, ինչ սաղմոսերգուն խնդրում էր 4-րդ համարում, այժմ ավելի պատկերավոր է կրկնում։ Մեղանչելուց հետո մաքրվելու, սրբանալու ցանկությունը շարունակաբար գործում է նրա սրտում։

«Ցօղեա յիս մշտկաւ» բոլոր մյուս սուրբ գրքերը՝ ներառյալ եբրայական բնագիրը և Յոթանասնից թարգմանությունը, «մշտիկ» բառի փոխարեն ունեն «զոպա» բառը։ Վերջինս բույս է, որի միջոցով Հին Կտակարանում կատարվում են բոլոր ծիսական սրբագործությունները։ Իսկ «մշտիկը» զոպայի ճյուղերից կազմած տրցակն է, որի միջոցով կատարում էին բոլոր սրբագործությունները սրսկած արյունով։ Մովսիսական օրենքով մարդ կամ շենք կամ որևէ առարկա, որը մեռած մարմնի կամ բորոտության հետ շփում էր ունենում համարվում էր պղծված, և նրան անպայմանորեն սրբագործում էին։ Քանի տղամարդը կամ կինը այս կամ այն պատճառներով պղծված վիճակում էին, Աստծու տաճար չէին կարող մտնել, ոչ էլ ուրիշ մարդկանց հետ շփում ունենալ։ Իսկ պղծված շենքերը կամ առարկաները չէին կարող գործածվել մինչև չսրբագործվեին։

Սրբագործումը կատարվում էր հետևյալ ձևով. զոհաբերված կենդանու արյունից մի մաս լցվում էր անոթի մեջ և զոպայի մշտիկով (տրցակով) սրսկվում էր պղծված անձի, տան կամ առարկայի վրա, ինչից հետո միայն այրը կամ կինը կարող էին տաճար մտնել, իսկ տունը կամ առարկան՝ գործածվել։

Սաղմոսերգուն մեղք գործելով՝ իր անձը պղծված է համարում, հետևաբար՝ ինքնիրեն անարժան է համարում մտնելու Աստծու

ներկայության մեջ։ Ուստի խնդում է Աստծուց, որ սրբացնի նրան այն կերպով և օրինակով, որով Աստված հրամայել էր կատարել սրբագործումները։ Նույն գաղափարը ավելի գեղեցիկ ու պատկերավոր կերպով կրկնում է հաջորդ տողում, այս անգամ սրբացումը «լվացման» միջոցով ստանալու խնդրանքով։

Այստեղ տեսնում ենք քրիստոնեական սրբագործման երկու հիմնական նախատիպերը։ Արդարև, քրիստոնյան նույնպես սրբանում է «արյան սրսկումով», սակայն ոչ թե ցուլերի կամ ոչխարների կամ որևէ կենդանու արյամբ, այլ մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի թանկագին արյամբ, ինչպես Ավետարանները և առաքելական թղթերը հստակորեն հաստատում են. «Քրիստոս մահացավ մեր համար, որպեսզի Իր արյամբ արդարանանք» (Հռոմ. Ե 8-9)։ «Նրա արյամբ ունենք փրկություն» (Կող. Ա 14)։ Եբրայեցիներին ուղղված նամակը ծայրից ծայր լեցուն է Քրիստոսի արյամբ մաքրվելու և փրկվելու գաղափարով, հատկապես Թ գլխում. «Ապա մի՞թե Քրիստոսի արյունը շատ ավելին չի անի։ Արդարև, հավիտենական Հոգու միջոցով Քրիստոսն Ինքն Իրեն որպես անարատ զոհ մատուցեց Աստծուն, որպեսզի Իր արյունով մաքրի ձեր խղճմտանքը մեռելական գործերից, և դուք կարողանաք պաշտել կենդանի Աստծուն» (Եբր. Թ 14)։ Սույն թղթի հեղինակը հետևյալ հորդորն է հղում Քրիստոսի արյամբ փրկվածներին. «Հետևաբար, եղբայրնե՛ր, այլևս ազատ ենք Հիսուսի արյամբ մտնելու Սրբարան... Ուստի անկեղծ սրտով և վստահությամբ լի հավատով մոտենանք Աստծուն՝ մեր սրտերը մաքրած խղճմտանքը ծանրացնող հանցանքներից և մեր մարմինները լվացած մաքուր ջրով։ Անխախտ պահենք այն հույսը, որ դավանում ենք՝ վստահ լինելով, որ Աստված հավատարիմ է իր խոստմանը։ Հոգատար լինենք միմյանց հանդեպ՝ սիրո և բարի գործերի մղելով միմյանց։ Բնավ չդադարենք պաշտամունքի հավաքույթներին մասնակցելուց, ինչպես սովոր են անել ոմանք, ընդհակառակը, այդ ուղղությամբ առավել ևս հորդորենք միմյանց, քանի որ տեսնում ենք, թե մոտենում է Տիրոջ օրը» (Եբր. Ժ 19-25)։

Այստեղ տեսնում ենք նաև քրիստոնեական սրբագործման երկրորդ միջոցը, որ է «մկրտել մեր մարմինը մաքուր ջրով, և ամուր բռնել հավատքի դավանությունը» որը ստանում ու հայտարարում են բոլոր նոր մկրտվածները։ «Լուա և քան զձիւն սպիտակ եղէց» խոսքը մեզ համար նույնպես ակնարկ է մկրտության խորհրդի։

10. Լսելի արա ինձ ցնծութիւն և ուրախութիւն,
և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։
Ինձ ցնծություն և ուրախություն լսել տուր,
և թող տառապյալ ոսկորներս ցնծան։

Ապաշխարող մեղավորը շարունակ խոնարհված, շարունակ բեկ-

ված վիճակում է գտնվում. կորացած նստած է չոր գետնին կամ մոխրի վրա։ Նման վիճակում երկար մնալը հոգնեցնում է մարդուն և տառապանք է պատճառում իր ոսկորներին, ուստի սաղմոսերգուն աղաղակում է առ Աստված՝ ասելով. «Տէր, թողություն շնորհիր մեղավորիս. վերացրու խղճմտանքիս վրա ծանրացած այս խորունկ ցավը, ասա՛ իմ սրտին. «Բավ է քեզ տառապել, ոտքի՛ կանգնիր, լվացվի՛ր և հանգիստ առ»: Թէ՛ հոգեկան անդորրությունս, թէ՛ այն պարգևելու ուրախ լուրը միայն Քեզնից եմ սպասում, Տէ՛ր»:

Այն մեղավորը, որն անկեղծ է իր զղջման մեջ, չի կարող ուղիղ կանգնել Աստծու առաջ, այլ նկուն և կորացած է մնում, ինչպես աղոթարար մաքսավորը, որ «չէր ուզում աչքերը վեր բարձրացնել, այլ կուրծքն էր ծեծում ու ասում. Աստվա՛ծ, քավի՛ր ինձ, մեղավորիս» (Ղուկ. ԺԸ 13):

Կոտրած սրտի ցավը կարելի է նմանեցնել կոտրած կամ հոգնաբեկ ոսկորների պատճառած ցավին, որը բուժելու համար կարիք կա ոսկրաբույժի և հանգստի։ Մեղքով բեկված սրտի բժիշկն Աստված է։ Այն Աստված, որ հանդիմանում և պատժում է մեղավորին, նույն Տերն է, որը բժշկելու և մխիթարելու է նրան, ինչպես մի ուրիշ սաղմոսում է ասված. «Տեր Աստվա՛ծ իմ, կանչեցի Քեզ և բուժեցիր ինձ: Տէ՛ր, հոգիս դժոխքից հանեցիր և փոսն իջնողների միջից փրկեցիր ինձ... Նրա բարկության մեջ ցասում կա, իսկ Նրա կամեցողության մեջ՝ կյանք... Սուգս դարձրեց ուրախություն, հանեց քուրձն իմ և խնդություն հագցրեց ինձ» (Սաղմ. ԻԹ):

Ապաշխարող մեղավորի ներումը այնքան մեծ հանգիստ և ուրախություն է պատճառում, որքան ցավող ատամի կամ կոտրած ոսկորի շարունակական կսկիծից ազատվելը։

11. Դարձո զերեսս քո ի մեղաց իմոց.
զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն:
Երեսդ շո՛ւռ տուր իմ մեղքերից
և իմ բոլոր հանցանքները ջնջի՛ր ինձնից:

Ապաշխարող մեղավորը կարծում է, թե ինչ ինքն է անում, նույնն անում է և Աստված. մեղանչելուց հետո Իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել է իր մեղքի վրա։ Չի կարող ազատվել նրա հաճախադեպ լինելուց և շարունակ ինքնիրեն հարցնում է. «ինչո՞ւ գործեցի այս մեղքը, այս ցավերին և խղճահարությանը փրիրանալու համար, ինչ հիմարություն էր արածս, հիմա ինչպե՞ս պետք է ազատվեմ նրանց ահավոր հետևանքներից... »: *Մտածում է, որ Աստված նույնպես Իր աչքը սևեռած է պահում իր մեղքի վրա. այդ իսկ պատճառով իր ցավն ու վիշտը կրկնապատկվում են։ Արդարև, ավանդությունը պատմում է, որ Աստծո աչքը շարունակաբար հետևում էր Կայենին՝ եղբորը սպանե-*

լուց հետո՝ ուր որ գնար։ Մեղավորը կարծում է, որ իր ահավոր տառապանքը և խորունկ խղճահարությունը այդ մշտական հայացքից է գալիս, ինչպես կրակն է կրկնապատկվում նրա վրա շարունակաբար ընկնող արևի ճառագայթներից։ Ուստի աղերսում է Աստծուն. «Բավ է Տեր, երեսդ շրջիր մեղքերիցս. այլևս մի նայիր»։ Եվ հավատում է, թե հնարավոր է, որ Աստված քավի և խպառ ջնջի իր բոլոր անօրենությունները, հետևաբար, աղոթում է իր ցավի անմիջական ու արմատական ամոքման համար։

Սրա մի սքանչելի օրինակ էլ ցույց է տալիս Եսայի մարգարեն, երբ Աստված խոսքն ուղղելով Իր մեղավոր ժողովրդին ասում է. «Ահա, ջնջելու եմ քո անօրենությունները ամպի պես և քո մեղքերը՝ մեգի նման. դարձիր դեպի ինձ և Ես պիտի փրկեմ քեզ» (Ես. ԽԴ 22)։

Ինչպես որ արևի ճառագայթները ցրում-վերացնում են ամպերը և մեգը, այնպես էլ Աստծու սիրո և ներման լույսն է, որ վերացնում, մեջտեղից հեռացնում է մարդու մեղքերը և անօրենությունները, որոնք արդարև իբրև ամպ և մառախուղ նստում են մեր հոգիների վրա և խանգարում Արդարության արեգակին իջեցնել Իր փարատիչ լույսը մեր մթնած հոգիների վրա։

12. Սիրտ սուրբ հաստեա յիս Աստուած,
և հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում։
Սուրբ սիրտ հաստատիր իմ մեջ, ով Աստված,
և ուղիղ հոգի նորոգիր իմ ներսում։

Սաղմոսերգուն հասել է իր մտածումների գագաթնակետերից մեկին։ Սրանից առաջ ասել էր. «Անհայտ և ծածուկ ճշմարտությունները հայտնեցիր ինձ Քո իմաստությամբ»։ Այդ հայտնություններից են վերոհիշյալ խոսքերը։ Մինչև այս կետը սաղմոսերգուն միայն ցավ ու կսկիծ էր հայտնել և խնդրել էր ազատվել դրանցից։ Այժմ ուզում է դրական և իրական մի բան՝ սուրբ սիրտ և ուղիղ հոգի։ Սրանք պատկերավոր բացատրություններ են ասելու, որ նա կարոտ է արմատական փոփոխության և նորոգության։

Ժամանակին սիրտը համարվել է մեր զգացումների աղբյուրը և մեր ներքին ապրումների կենտրոնը։ Ապաշխարող սաղմոսերգուն ուզում է ասել, որ այժմ իր սիրտն ապականված է, հետևաբար չի կարող այլևս իրեն առողջ և մաքուր զգացումներ տալ։ Ուստի Աստծուց խնդրում է իրեն նոր ու մաքուր սիրտ տալ։

Այս անհրաժեշտությունը տեսել էին նաև մեծ մարգարեները։ Օրինակ, նրանցից մեկը՝ Եզեկիելը, նկատի ունենալով իր ժողովրդին՝ Աստծու անունից ասում էր.

«Նրանց՝ իմ ժողովրդին ուրիշ սիրտ պիտի տամ և նոր հոգի պիտի պարգևեմ: Նրանց մարմիններից պիտի հանեմ քարեղեն սիրտը և տամ մսեղեն սիրտ, որպեսզի Իմ պատվիրանների համաձայն ապրեն և Իմ օրենքները պահեն ու գործադրեն, Ինձ համար ժողովուրդ լինեն, Ես էլ նրանց համար՝ Աստված» (հմմտ. Եզեկ. ԺԱ 19-20):

Այսօր բժիշկներն էլ են ֆիզիկական սրտեր փոխում: Հանում են հիվանդ ու հոգնած սիրտը և փոխարենը նոր ու առողջ կամ արհեստական սիրտ դնում: Այսպես որոշ ժամանակ ևս շարունակում է ապրել մարմինը, որը վատառողջ սրտի պատճառով մահվան էր դատապարտված: Սակայն սա արմատական միջոց չէ. մարդն ի վերջո պիտի մահանա: Բացի դրանից՝ ֆիզիկական սրտի փոփոխությունը հոգեկան փոփոխության չի հանգեցնում, մարդը մնում է նույնը իր ներքին ապրումներով ու մտայնությամբ: Սաղմոսերգուի, հետևաբար նաև բոլոր մեղավորներիս ցանկությունն այն է, որ «սուրբ սիրտ» ունենալով սրբանանք, մեր ապականություններից մաքրվենք:

Մեղանչելուց հետո, սովորական մահկանացուներիս գլխավոր մտահոգությունն այն է, որ ուրիշները չիմանան մեր մեղքերի մասին: Եթե ուրիշները լսեն, ինչ կասեն, ինչ պատկերացում կկազմեն մեր մասին: Մտահոգվում ենք՝ վախենալով, որ մեր անունը կարատավորվի, և մենք ամոթով կմնանք մարդկանց առաջ: Հետևաբար, մարդիկ մեղանչելուց հետո սովորաբար ոչ թե Աստծուն են աչքի առաջ ունենում, այլ՝ մարդկանց: Սակայն սա չէր սաղմոսերգուի մտահոգությունը: Առաջին իսկ պահից նա ասել էր. «Քո դեմ միայն մեղանչեցի, Տեր, և Քո առաջ չարիք գործեցի»: Նրա մեծագույն մտահոգությունը ոչ թե մարդկանցից եկող ամոթն էր, այլ՝ նախ իր ներքին մարդու աղարտված լինելը. տեսել էր այն ապականությունը, որի մեջ ընկել էր. «Իմ անօրենությունները ես անձամբ գիտեմ, և մեղքերս շարունակ աչքերիս առաջ են»: Ապա միայն Աստծո դեմ գործած լինելու գիտակցությունն էր:

Երբ մարմինն է աղտոտվում, այն կարելի է լվանալ և մաքրել: Բայց երբ հոգին է ապականվում, ո՞վ պետք է մաքրի. մարդն այն մաքրելու կարողություն չունի: Միայն Աստված կարող է և Աստված կարող է այն անել՝ նոր սիրտ, սուրբ սիրտ հաստատելով մեր մեջ: «Սուրբ սիրտ» նշանակում է՝ ունենալ մաքուր և Աստծուն հլուհնազանդ տրամադրությամբ լեցուն հոգի, մաքուր միտք, մաքուր երևակայություն և մաքուր սեր: Այս ամենը միայն Աստված կարող է ստեղծել մեր մեջ: Այս ամենը սկզբնապես, ի բնե կային մարդու մեջ, երբ Աստված ստեղծեց նրան: Սակայն մեղանչումով, Աստծու հրամանին չհնազանդվելով մարդն ընկավ և կորցրեց այս ամենը,

ինչին մենք վերատիրանում ենք, ավելի ճիշտ՝ մեզ վերստին շնորհվում է մկրտությամբ։ Եվ երբեք չենք դադարում ազատ արարածներ լինելուց, մկրտությունից հետո էլ, նույնիսկ երբ հրավիրվում ենք, ավելի ճիշտ՝ մեզ տրվում է «Աստծուն ծառայելու» մենաշնորհը։ Մեր ազատության չարաչար գործածությունն է, որ մեզ վերստին առաջնորդում է մեղանչման ու անկման։ Եվ մեղքերը կրկնվելով վերածվում են մոլությունների՝ ծուլության, ագահության, շատակերության, ինչպես նաև բարոյական ու ներքին մեղքերը վերածվում են հոգեկան մոլությունների՝ հպարտության, նախանձի, բարկության և ատելության, որոնցից հնարավոր չէ ազատվել առանց աստվածային միջամտության և օժանդակության։

Աստված մեզ ազատում է այս մեղքերից ու մոլություններից աղոթքով, պահքով և ապաշխարությամբ, ինչպես նաև Աստծո տրված շնորհների գործակցությամբ, այսինքն՝ Աստծո կառուցածը չքանդելով, և մեր մեջ Աստծո գործելուն արգելք չլինելով։ Այս գործը մեկ-երկու օրում և անմիջապես գլուխ չի գալիս, այլ պահանջում է ժամանակ, հարատևություն, վճռականություն, կարգապահություն, քաջություն, կորով և համբերություն։ Եթե չշեղվենք արդարության, ուղղության և ճշմարտության ճանապարհից, մեր կյանքը կավարտվի հաղթանակով ու փառքով։

Մարդու ամենացանկալի բանը, արդարև, «մաքուր սիրտ և արդար հոգին» է, առանց որոնց չենք կարող ժառանգել Երկնքի արքայությունը՝ հավիտենական երջանիկ կյանքը, որն Աստծո տնօրինությամբ բոլոր արդար հոգիների բաժինն է լինելու։

13. Մի ընկենուր զիս Տէր յերեսաց քոց,
և զհոգի սուրբ քո մի հաներ յինէն
Մի՛ զցիր ինձ, Տե՛ր, Քո երեսից
և Սուրբ Հոգիդ մի՛ հանիր ինձնից։

Երկու համար առաջ սաղմոսերգուն ասել էր. «ԴԱՐՁՐՈՒ Քո երեսն իմ մեղքերից»։ Իմ մեղքերն այնքան զզվելի են, որ Աստծո սուրբ «երեսը» պետք է հեռու պահվեր դրանցից։ Իսկ այստեղ, ընդհակառակը, աղերսում է. «Մի՛ զցիր ինձ Քո երեսից»։ Այսօր էլ, առօրյա խոսակցության ընթացքում գործածում ենք «երեսից զցել» կամ «երեսից ընկնել» արտահայտությունները։ Սրանց համապատասխանում են նաև «աչքից ընկնել» կամ «աչքից զցել» արտահայտությունները։ Ստորադաս պաշտոնյան հաճելի և բարեխիղճ ծառայությամբ իր տիրոջ «աչքն է մտնում», այսինքն՝ համակրելի և հաճելի է դառնում։ Նույն պաշտոնյան, մի օր կոպիտ սխալ է գործում կամ ծուլանում է և տիրոջ

«աչքից ընկնում է»։ Սկզբնապես Դավիթը հաճելի էր Աստծուն. «Գտա Դավթին, - ասում է Աստված, - Իմ սրտով մի մարդու, որը պիտի կատարի Իմ ամբողջ կամքը» (հմմտ. Գործք ԺԳ 22)։ Այժմ Դավիթն իր ծանր հանցանքներով զգում է, որ Տիրոջ «աչքից ընկել է», ուստի աղերսագին խնդրում է. «Մի՛ գցիր ինձ Քո երեսից»:

Աստծո «երեսը» Իր հոգևոր ներկայությունն է։ Դավիթը՝ իբրև արդար ու հավատավոր մարդ, միշտ փափագել է ապրել Աստծո ներկայության մեջ։ Եղել է Նրան ապավինող և Նրան հուսացող անձնավորություն. «Հույսս Քեզ վրա է, Տեր, հավիտյանս չեմ ամաչելու»,- ասում է մեկ այլ սաղմոսում[1]։ Իսկ սիրողները միշտ փափագում են միմյանց ներկայությունը՝ իրար կողք ապրելը։ Մեկ ուրիշ սաղմոսի մեջ, խոսքն Աստծուն ուղղելով, Դավիթն ասում է. «Ինձ համար նախընտրելի է ՄԵԿ ՕՐ ապրել Քո տան մեջ, քան հազարավոր օրեր նրանից դուրս» (Սաղմ. ՁԳ 11)։ Այս մտերմությունն այժմ վտանգված է, հետևաբար, նրա շուրթերից դուրս է գալիս անձկությամբ լի աղոթքը. «Քո երեսից (ներկայությունից) մի՛ վտարիր ինձ»։

Աստծու ներկայությունից մեզ բաժանողը մեղքն է, ինչպես Եսայի մարգարեն է ասում. «Ձեր և Աստծու միջև բաժանողը ձեր անօրենությունները եղան և ձեր մեղքերը նրա երեսը ձեզանից ծածկեցին» (Ես. ԾԹ 2): Արդարև, կրոնական և բարոյական ոլորտում ամենամեծ դժբախտությունը, որ կարող է հանդիպել որևէ մեկին՝ Աստծուց հեռու ապրելն է։ Ոմանք այլևս վարժված են այս դժբախտությանը և չեն զգում Աստծո ներկայության կարոտը, քանզի այս աշխարհի զբաղումներով և մեծ ու փոքր վայելքներով տարված՝ չեն տեսնում Աստծո ներկայությամբ ապրելու անհրաժեշտությունը։ Բայց նրանց անշնչացած մարմինը հողին հանձնելուց հետո, երբ նրանց հոգին տանջանքների կմատնվի՝ միայն այն ժամանակ կանդ բադառնան, թե որքան կարևոր էր «Աստծու հետ քայլելը» և Աստծու կամքին համաձայն գործելը այս աշխարհում, որպեսզի անդենական կյանքում էլ շարունակեն Աստծու հետ ապրել։ Այս դժբախտությունը պատահեց Աղքատ Ղազարոսի առակի հարուստի հետ, որը իր այրվող լեզուն զովացնող ջրի կաթիլին կարոտ մնաց (Ղուկ. ԺՁ 19-31)։ Աստծուց հեռու ապրող մեղավորների վախճանը մռայլ գույներով է ներկայացված Ավետարաններում. «Պիտի նրանք նետվեն արտաքին խավարը, որտեղ լինելու է լաց և ատամների կրճտոց» (Մատթ. Ը 12):

«Եվ Քո Սուրբ Հոգին մի հանիր ինձանից»: Այս խոսքը նույնպես կարող ենք համարել այն «ծածկված» ճշմարտություններից, որոնց փափագում է սաղմոսերգուն իր անձկության և տագնապի մեջ։ Կարծես

[1] Սաղմ. Լ 2:

թե դուրս է գալիս Հին Ուխտի շրջանակից և մտնում Նոր Ուխտի մթնոլորտ։ Ս. Հոգու գաղափարը աղոտ ու «ծածկված» կերպով է ներկայացված Հին Կտակարանում։ Նոր Կտակարանում է, որ Ս. Հոգին բացահայտ երևում է որպես Աստվածության երեք Անձերից մեկը։ Դավիթը, երբ աղաչում է Աստծուն՝ «Քո Սուրբ Հոգին մի՛ հանիր ինձանից», ուզում է ասել. «Հոգուդ շնորհներից մի զրկիր ինձ, առանձին ու անմխիթար մի՛ թող ինձ, այլապես կվերածվեմ դատարկված մի փոպրակի, որ ոչ ուղիղ կարող է կանգնել. ոչ էլ ձև ունենալ»։ Փորձառաբար նա գիտի, թե ինչ է նշանակում Տիրոջ Հոգուց զուրկ մնալը։ Նա տեսել էր, թե ինչ ահավոր վիճակի էր մատնվել իրեն նախորդած թագավորը՝ Սավուղը, երբ Աստծո Հոգին հեռացավ նրանից. «Տիրոջ Հոգին հեռացավ Սավուղից և չար ոգին էր խեղդում նրան» (Ա Թագ. ԺՁ 14)։ Այդ չար ոգու ազդեցությամբ Սավուղը կատաղության նոպաներ էր ունենում և իր նիզակը նետում էր Դավթի վրա, որը կանչված էր մեղմելու խելագարած թագավորի մռայլությունը քնարով ու երգով։

Վերևի խոսքով Դավիթն ուզում է ասել. «Տե՛ր, ինչ որ ուզում ես վերցրու ինձնից, բայց Քո Սուրբ Հոգին թող շարունակի բնակվել իմ մեջ, որովհետև մինչև իսկ այս ապաշխարության համար, որով աշխատում եմ վերականգնվել իմ անկումից ու վերստին ապավինել Քո հաճությանը, Քո Սուրբ Հոգուն եմ պարտական»։

Եթե Դավիթը, որը Սուրբ Հոգու գոյության և գործունեության մասին շատ աղոտ գաղափար ուներ, այնքան ուժգին կերպով աղերսում է Աստծուն, որ «չհանի Նրան իրենից», որչափ առավել ևս մենք՝ մկրտված քրիստոնյաներս, հոգածու պետք է լինենք, որ չզրկվենք Նրանից և Նրա շնորհներից։ Արդարև, Աստծու Հոգին բնակվում է բոլոր մկրտվածներիս մեջ, եթե չենք կորցրել մկրտությամբ մեր ստացած շնորհները, որոնցից մեկն էր «Ս. Հոգու փաճար լինելը»[1]։ Պողոս առաքյալն այս մասին ունի իր շատ կարևոր ուսուցումը և թելադրանքները, որոնցով հաստատում է, որ մենք մեր ներքին ազատությունը և հոգևոր կյանքը գտել ենք Ս. Հոգու միջոցով.

«Եթե Աստծու Հոգին իսկապես բնակվում է ձեր մեջ, նշանակում է, որ դուք այլևս մարմնական ցանկությունների համաձայն չեք ապրում, այլ Սուրբ Հոգու կամեցած ձևով։ Իսկ նա, ով չունի Քրիստոսի Հոգին, չի պատկանում Նրան։ Եթե Քրիստոսը ձեր մեջ է ապրում, թեկուզև ձեր մարմինները կմեռնեն, որովհետև մեղանչեցիք, բայց Սուրբ Հոգին դարձյալ կյանք կտա ձեզ, որովհետև արդարացած եք։ Այսինքն, եթե Աստծու Հոգին բնակվում է ձեր մեջ, Աստված, որ Հիսուս Քրիստոսին հարություն տվեց մեռելներից, Իր Հոգու միջոցով, որը բնակվում է ձեր մեջ, կկենդանացնի նաև ձեր մահկանացու մարմինները... Աստծու որդինե-

[1] Ա Կորնթ. Զ 19։

որը նրանք են, որոնք առաջնորդվում են Աստծու Հոգով: Արդ, դուք Հոգին ստացաք ոչ թե ծառա դառնալու և դարձյալ վախով ապրելու համար, այլ Հոգին ստացաք Աստծու որդիներ լինելու համար: Այդ Հոգով է, որ Աստծուն Աբբա, այսինքն՝ Հայր ենք կոչում, և նույն Հոգին ինքն է վկայում մեր հոգուն, թե Աստծու որդիներ ենք: Իսկ եթե որդիներ ենք, նշանակում է, որ նաև ժառանգորդներ ենք: Այո՛, մենք Աստծու ժառանգորդներն ենք և Քրիստոսի ժառանգակից» (Հռոմ. Ը 9-17):

Այս ամենը մեզ առաջնորդում է առաքելական հետևյալ հրահանգին. «Հոգին մի՛ տրտմեցրեք, որպեսզի չհեռանա ձեզանից.» (Ա Թես. Ե 19): Հոգին «տրտմում» է և «մարում» մեր չար արարքներից և անօրենություններից: Եվ հակառակը՝ «թև է առնում» ու ավելի գործուն է դառնում մեր մեջ բարի խորհուրդներով, խոսքերով ու գործերով:

14. Տուր ինձ ցնծութիւն փրկութեան,
հոգւով պետութեամբ քով հաստատեա զիս:
Տուր ինձ Քո փրկության ցնծությունը
և Քո տիրական հոգով հաստատիր ինձ:

Այս համարով Դավիթը խնդրում է գերագույն ուրախությունը, որին կարող է արժանանալ Աստծո հողողեն արարածը: Արդարև, ամենամեծ և անփոխարինելի ուրախությունը, որը կարող է ունենալ մարդը, գիտենալն է, որ փրկված և ազատված ես ահավոր վտանգից: Այստեղ սաղմոսերգուն նույնպես ապրում է Նոր Ուխտի մթնոլորտում:

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ քրիստոնեության մեջ հիմնական ու մեծագույն բառերից և գաղափարներից մեկն է: Հին Ուխտում «փրկությունը» առհասարակ թշնամիներից ազատվելու մեջ էր: Հին աշխարհի պատկերացումների համաձայն, թշնամին գերագույն վտանգն էր, քանզի հին ժամանակներում թշնամու միակ նպատակն էր հաղթել և վերացնել իր հակառակորդին: Ընկնել թշնամու ձեռքը, նշանակում էր ենթարկվել չարչարանքի, նվաստացման, բանտարկության ու մահվան: Այդ իսկ պատճառով թշնամու ձեռքից մի կերպ փրկվելը գերագույն ուրախություն էր և միայն այդ ժամանակ մարդը կարող է վայելել ազատված լինելու ապահովությունը և ուրախությունը: Սաղմոսերգուն մեղանչելով մատնվել է բարոյական թշնամու ձեռքը՝ տառապում է խղճահարությամբ և եթե այսպես շարունակվի, իր ստույգ բաժինը կլինի բարոյական և հոգևոր մահը, ինչպես արդարև եղավ Սավուղի հետ, որ իր պարտությունից հետո թշնամու ձեռքը չընկնելու համար դիմեց ինքնասպանության (Ա Թագ. ԼԱ):

ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ քրիստոնեական կյանքում բանալի բառն է, որին եթե չտիրանանք, չենք կարող մուտք գործել Երկնքի Արքայություն: Փրկել, Փրկիչ և Փրկություն բառերը ամենից շատ գործածվածներն

են Աստվածաշնչում՝ մոտ հազար անգամ։ Փրկությունը Քրիստոսի գերագույն նպատակը և գերագույն տնօրինությունն է։ Հիսուս անունը արդեն իսկ փրկիչ է նշանակում, որովհետև «պետք է փրկեր Իր ժողովրդին իրենց մեղքերից» (Մատթ. Ա 21)։ Նոր Կտակարանը լեցուն է այս ճշմարտության հավաստիացումներով։ Նույն Ինքը Հիսուս հաստատեց այս իրողությունը՝ «Չեկա աշխարհը դատելու և դատապարտելու, այլ՝ փրկելու» (Հովհ. ԺԲ 47)։ Հիսուս փրկում է մեզ նախ սատանայից, որի իշխանության տակ էր ընկել մարդը մեղանչելով, ապա Աստծու բարկությունից, որ մարդն իր վրա է հրավիրել Նրա օրենքը չպահելով և Նրա կամքին չհնազանդվելով։ Հետևաբար՝ Քրիստոսի բերած ու կատարած փրկությունը ճանաչվեց քրիստոնեական շրջանակներում իբրև ավետիս և ուրախ լուր։ Այն գրքերը, որոնք պարունակում են բարի լուրի պատգամը և պատմությունը՝ ճանաչվում են իբրև Ավետարաններ։

«Մեղքերից փրկված լինելու ուրախությունը տուր ինձ»,– աղերսում է Աստծուն սաղմոսերգուն։ Թե՛ եբրայական բնագիրը և թե՛ Յոթանասնից, ինչպես նաև այլ թարգմանություններ «տուր ինձ»-ի փոխարեն ունեն «վերահաստատիր» կամ «վերադարձրու» ինձ ձևը, որն ավելի տրամաբանական է թվում, քանի որ նախքան մեղանչելը Դավիթն ուներ արդեն փրկված լինելու ուրախությունը, այսինքն՝ Աստծու բարկությունից կամ տհաճությունից ազատ լինելու գիտակցությունը։ Արդ, այդ ապահովությունը կորցրել էր մեղանչելուց հետո, ուստի աղերսում է «փրկված լինելու ուրախությունը վերադարձրու ինձ, վերահաստատիր իմ մեջ»։

Արդարև, իրական քրիստոնյայի համար չկա հաստատուն ու տևական ուրախություն երկրի վրա՝ բացի փրկված լինելու գիտակցությունից և այդ համոզումից առաջ եկած ուրախությունից, ինչպես Աստվածամայրն է հաստատում իր օրհներգում. «Հոգիս պետք է ցնծա իմ Փրկիչ Աստծով» (Ղուկ. Ա 47)։ Մկրտությամբ մեզ շնորհվում է Քրիստոսի բերած փրկությունը, իսկ չափահասության ժամանակ, երբ վերահասու ենք լինում այս իրականությանը, մեր հոգին լցվում է ուրախությամբ։ Սակայն մեղանչելով մենք ինքներս մեզ զրկում ենք այս ուրախությունից։ Մեր հավատը և հույսը դառնում են աղոտ և հազարավոր մարդիկ զրկվելով փրկության ուրախությունից՝ կորցնում են կյանքի համը. «Բայց քանի որ մի կյանք կա»,- ինչպես ասում է Անառակը հայտնի առակում, սխալ տեղ է որոնում այդ ուրախությունը, մինչև որ «աղտոտ խոզի երամակներ արածելու»[1] վիճակի է մատնվում...։ Սակայն փառք Աստծո, անկեղծ զղջումով և ապաշ-

[1] Ղուկ. ԺԵ 15։

խարանքով այս ուրախությունը կրկին կարող է վերահաստատվել մեր մեջ, ինչպես արդարև եղավ անառակ որդու համար։

Սաղմոսերգուն խնդրում էր Աստծուց, որ իր մեջ մաքուր սիրտ և արդար հոգի հաստատի։ Սրանք այնքան թանկագին գանձեր էին, որ որևէ կերպ չկորցնելով՝ ամրորեն պետք է պահվեին իր մեջ, ուստի աղերսում է Աստծուն, որ Իր հզոր Հոգով «հաստատ պահի» իրեն։ Մարդը երբ հեռանում է ինքն իրենից հակված է լինում մեղքին կամ վհատությանը։ Երկուսն էլ պատճառ են մաքուր սրտի և ուղիղ հոգու կորուստի։ Մենք էլ հավատքով պիտի գործածենք Աստծո հզոր Հոգին, որով միայն կարող ենք պայքարել մեղքի հակումի դեմ, ինչպես նաև ուրախ տրամադրությամբ, որը վհատության հակադեղն է։ Ուրախությունը արդարև զորացնում և հաստատ է պահում մարդուն։ Որքան ուրախ լինենք մեր պարտականության կատարման մեջ, այնքան էլ ամուր պետք է մնանք մեր սրտի մաքրության և հոգու արդարության պատնեշի վրա։

15. Ուսուցից անօրինաց զճանապահս քո,
և ամպարիշտք առ քեզ դարձցին։
Անօրեններին կսովորեցնեմ Քո ճանապարհները
և ամբարիշտները առ Քեզ կդառնան։

Մինչև հիմա սաղմոսերգուն շատ շնորհներ էր խնդրում Աստծուց. մեղքերի քավություն, սուրբ սիրտ, արդար հոգի, փրկության ուրախություն ևն։ Այս ամենի դիմաց ինքն էլ մի քանի բան է խոստանում Աստծուն։ Առաջինը՝ «Անօրեններին Քո ճանապարհները կսովորեցնեմ»։ Այս պարագայում էլ սաղմոսերգուն Աստծու «անհայտն ու ծածուկ» ճշմարտություններից մեկի հայտնությանն է արժանանում։ Իր ժամանակին եթե մեկը ուզեր իր շնորհակալությունը հայտնել Աստծուն՝ զոհ էր մատուցում Նրան։ Սաղմոսերգուն հասել էր այնպիսի բարձրության, որից տեսնում էր, որ Աստծու համար ամենից հաճելի բանը ոչ թե զոհն է, այլ ընկերոջը բարիք անելը։ Մի ուրիշ մարգարե այս գաղափարը այլ կերպ է արտահայտում Աստծու անունից. «Ողորմություն եմ ուզում, և ոչ զոհ» (Ովսեե Զ 6)։ Իսկ ողորմություններից կամ բարիքներից գերագույնը անօրեններին Աստծու ճանապարհները, օրենքները, կամքը սովորեցնելն է, որպեսզի ամբարիշտները ապաշխարեն և դառնան առ Աստված։

Մարդու բնական հակումն է անօրեններին և ամբարիշտներին դատապարտելը և մեղադրելը՝ իբրև Աստծո ճանապարհից շեղվածների։ Սաղմոսերգուն գեթ այս սաղմոսի մեջ չի ուզում մեղադրել կամ դատապարտել նրանց, այլ սովորեցնել Աստծո ճանապարհնե-

ը։ Այստեղ ապաշխարության խորունկ գիտակցությանը և շնորհին հասած սաղմոսերգուն հետևում է Աստծո գործելակերպին։ Աստված, որ ուներ ամեն իրավունք դատապարտելու նրան, տեսնելով նրա սրտանց ապաշխարությունը, խնայեց նրան, և մինչև իսկ անհայտ ու ծածուկ ճշմարտությունները հայտնեց։ Ուստի նա էլ խոստանում է՝ «Անօրեններին սովորեցնել Աստծու ճանապարհը», որպեսզի նրանք իր պես դառնան առ Աստված և արժանանան շնորհի։ Այսպես արեց նաև մեր Փրկիչը. «չեկա դատապարտելու, այլ՝ փրկելու»[1]։ Հակոբոս առաքյալը նույնպես իր հորդորական թուղթը այս գաղափարով է եզրափակում. «Եղբայրներ իմ, երբ ձեզնից մեկը մոլորվի ճշմարտության ճանապարհից, և մեկ ուրիշին հաջողվի հետ բերել նրան, իմացեք՝ ով մեղավորին հետ է բերում իր մոլար ճանապարհից, թե նրա հոգին է փրկվում մահվանից և թե թողություն է գտնում իր բազմաթիվ մեղքերից» (Հակ. Ե 19-20)։

Ուրեմն Դավիթը ստացել էր հոգևոր փորձառություն, նա ընկել էր և բարձրացել, մեղանչել էր և արժանացել քավության, ապաշխարել էր և ստացել փրկված լինելու ուրախությունը, ուստի նույն փորձառությունը ուզում էր փոխանցել ուրիշներին։ Աստված պետք է պատրաստ լիներ դարձի եկող ամբարիշտներին էլ նույնպես ընդունելու, ինչպես ներել էր նրան։ Գերազանց եղբայրասիրությունը ուրեմն այս է՝ սովորեցնել ուրիշներին, որ ապաշխարեն ու դարձի գան։ Ինչպես Հովհաննես Մկրտիչը, այնպես էլ Հիսուս իրենց քարոզչությունը սկսեցին ապաշխարության հրավերով[2]։

16. Փրկեա զիս յարենէ Աստուած Աստուած փրկութեան իմոյ.
ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում։
Փրկիր ինձ արյունից Աստված, իմ փրկության Աստված,
լեզուս թող ցնծա Քո արդարությամբ։

Ինչ է նշանակում «փրկել արյունից»։ Կարող է նշանակել փրկել արյուն թափելուց, մարդասպանությունից, մինչև իսկ անձնասպանությունից։ Բայց այդպիսի զուգահեռ չկա հաջորդ տողում։ Հետևաբար, նախ ջանանք հասկանալ հաջորդ տողի իմաստը և ապա դառնանք առաջին տողին։ «Թող ցնծա լեզուս քո արդարությամբ». մյուս թարգմանություններում «թող ցնծա լեզուս» արտահայտության փոխարեն հանդիպում ենք «լեզուս թող բարձրաձայն երգի» քո արդարությունը ձևին[3]։ Աստծո արդարությունը այստեղ իր մեջ է խտացնում

---

[1] Հովհ. Գ 17։
[2] Մատթ. Գ 2, Դ 17։
[3] Եբրայերեն բնագրից կատարած թարգմանություններում։ Հայերենը թարգմանված է հունարենից (Յոթանասնից թարգմանությունից)։

Աստծո բոլոր հատկանիշները (Նրա վեհությունը, մեծությունը, կատարելությունը, սրբությունը ևն)։ «Աստծու ձեռքը արդարությամբ է լցված»,- ասում է մեկ ուրիշ սաղմոսի մեջ (Սաղմ. ԽԷ 11)։ Երեմիա մարգարեն Աստծուն կոչում է «արդարության Տեր» (Երեմ. ԻԳ 6)։ Ուրեմն, սա սաղմոսերգուի երկրորդ խոստումն է, երախտագիտության երկրորդ արտահայտությունը, որ ավելի կբացահայտվի հաջորդ համարում։ Իր երախտագիտությունը արտահայտելու համար նա խոստանում է Աստծուն Նրա արդարությունը երգել, փառաբանել Նրա մեծությունը։ Առաջին տողում սրան հակառակ մի բան էր խնդրում նա՝ «ազատել» էր խնդրում «փրկության Աստծուց»։ Ինչն է գովել, գնահատել և փառաբանել բառերի հակառակը. ուրիշ բան չէ, եթե ոչ բամբասել, մեղադրել և չարախոսել։ Ուրեմն՝ երբ Աստծուն աղաչում է, որ նրան «փրկի արյունից», ուզում է ասել, որ նրան ազատի ուրիշներին բամբասելուց, մեղադրելուց, դատապարտելուց, ուրիշների «արյունի տերը լինելուց»։ Արդարև, մինչև իսկ սովորական խոսակցության մեջ, երբ մի բացակա անձին մեղադրում են կամ նրա մասին չարախոսում, մի փոքր խիղճ ու բարի կամեցողություն ունեցող մարդիկ ասում են՝ «ուրիշի արյան մեջ չմտնեք» կամ «ուրիշի արյան տերը մի եղեք»։ Ուրեմն՝ բամբասելը, զրպարտելը, մինչև իսկ «անօրեններին և ամբարիշտներին» մեղադրելը, ուղղակի կամ անուղղակի նրանց «արյունը մտնելն է»։ Ուրեմն սաղմոսերգուն խնդրում է Աստծուն փրկել նրան ուրիշներին մեղադրելու չար սովորությունից։ Աստված Դավթի նկատմամբ ողորմած էր, ներել էր նրա մեղքերը, ինքն էլ ուզում է բոլորի հանդեպ ցույց տալ ողորմություն ու բարի կամեցողություն։ Արդարև, ուրիշներին բամբասելն ու զրպարտելը՝ անիրավ կամ իրավացի կերպով, նրան բարոյապես սպանել է նշանակում։ Ոչ ոք չպիտի իրեն իրավասու զգա ուրիշների «արյան տեր» լինելու։ Սաղմոսերգուի պես ամեն մարդ իր գերագույն պարտականությունը պետք է համարի Աստծու արդարությունը, Նրա մեծությունը, ողորմությունը «բարձրաձայն երգել»։ Մեր Տերն էլ արգելեց դատել ու դատապարտել ուրիշներին (Մատթ. Է 1)։ Ճիշտ հակառակը՝ հանձնարարեց «լինել Աստծու պես կատարյալ, Որն Իր արևը ծագեցնում է բարիների և չարերի վրա, Որ Իր անձրևն ուղարկում է արդարների և մեղավորների»[1] արտերին ու ագարակներին։ Անկեղծորեն ու սրտանց ապաշխարողը Աստծու ողորմությունը գտնելուց հետո ամենքի հանդեպ աշխատում է սաղմոսերգուի պես բարյացակամ ու ողորմած լինել։ «Ո՜վ իմ Աստված, փրկիր ինձ արյունից»՝ ուրիշների արյան մեջ մտնելուց, այսինքն՝ նրանց բամբասելուց, չարախոսելուց, քննադատելուց, մե-

[1] Մատթ. Ե 46:

ղադրելուց ու դատապարտելուց։ Մեր լեզուն՝ Աստծուց մեզ տրված այս հրաշալի գործիքը, պետք չէ գործածել ուրիշներին մեղադրելու համար, այլ՝ Աստծո արդարությունն ու փառքը երգելու դրական ու սրբազան նպատակի համար։

17. Տէր եթէ զշրթունս իմ բանաս,
բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:
Տէր, եթե բացես իմ շուրթերը,
բերանս օրհներգելու է Քեզ:

Այս համարը նախորդ համարի վերջին խոսքի ավելի բացահայտ արտահայտությունն է։ Աստծո կողմից մեզ պարգևած բազմաթիվ ամենագեղեցիկ շնորհներից մեկը բերանը՝ Աստծո փառքը երգելու համար գործածելն է։ Առհասարակ Աստծո օրհնության համար փակ բերանները բացված են ուրիշ բաների գովաբանության՝ օրինակ ոսկե հորթին կամ կյանքի ագահ վայելքները փառաբանելու համար։ Աստծո սուրբ անունը օրհնաբանելը, Նրա փառքն ու մեծությունը երգելը մարդու ամենից ազնիվ ու սրբազան կրոնական պարտականությունն է։ Սաղմոսները լեցուն են նման հանձնարարություններով. «Սաղմոս ասեք ու օրհնություն տվեք, սաղմոս ասեք քաղցր ձայնով» (Սաղմ. Ղ 2-3): «Եկե՛ք ցնծացեք Տիրոջով, աղաղակեցեք մեր փրկիչ Աստծուն» (Սաղմ. ՂԴ 1-2): Նույն հանձնարարությունները տալիս է Պողոս առաքյալը. «Խոսեք միմյանց հետ սաղմոսներով, օրհնություններով և հոգևոր երգերով, որպեսզի երգեք և ձեր սրտերում սաղմոս ասեք Տիրոջը» (Եփես. Ե 19): «Հիվանդ է ձեզանից որևէ մեկը, թող աղոթի, տխո՞ւր է մեկը՝ թող սաղմոս ասի» (Հակ. Ե 13): Որևէ պաշտամունքի ժամանակ, ամենից տպավորիչ պատկերներից մեկն է ականատես լինելը, երբ եկեղեցում գտնվող ողջ ժողովուրդը միաբերան մասնակցում է երգեցողությունը։ Այն ժողովուրդը, որը լռությամբ է դատապարտում պաշտամունքը, գործում է ամենահակակրոն արարքներից մեկը. «Թող ժողովուրդը օրհնի Քեզ՝ Աստվա՛ծ, թող ժողովուրդները գովեն Քեզ» (Սաղմ. ԿՀ 4): «Օրհնության պատարագ մատուցեք Աստծուն ամեն ժամ, այսինքն՝ Նրա անունը դավանող մեր շուրթերի պտուղը» (Եբր. ԺԳ 15): Իզուր չէ, որ Հայ Եկեղեցին այս խոսքով է կատարում իր պաշտամունքային բացումը՝ Գիշերային ժամերգության սկզբում դնելով այն, քանզի փրկված մարդու բերանը պետք է բացվի Աստծու օրհնությունը երգելով և Նրա սուրբ Անձը և Անունը փառաբանելով։

18. Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք.
բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար:

Եթե զոհեր ուզեիր, կտայինք,
բայց Դու ողջակեզներ անգամ չկամեցար ընդունել:

Հին Ուխտում կային բազմատեսակ զոհաբերություններ, այսինքն՝ Աստծուն մատուցվող ընծաներ: Նրանց մեջ առաջնային նշանակություն ուներ ողջակեզը, որի ժամանակ գառնուկ կամ խոյ էին մորթում և մի լավ մաքրելուց հետո զոհասեղանի վրա դնելով այրում էին ամբողջությամբ՝ մսով ու ոսկորներով, իբրև Աստծուն մատուցվող ընծա: Եվ հավատում էին, որ մսերի ճենճերի հոտը Աստծուն հաճույք կամ վայելք է պատճառում: Աստծու տաճարի առջև զետեղված զոհասեղանի վրա ամեն օր անխափան՝ առավոտյան և երեկոյան մեկական զոհ կամ ողջակեզ էր մատուցվում: Սակայն սաղմոսերգուն հասել էր այնպիսի մի հոգեվիճակի, որ հասկանում էր, թե պատարագները՝ Աստծուն մատուցված ընծաները, ներառյալ ողջակեզները, չունեն մեծ նշանակություն: Եթե մարդը սրանցով պետք է փրկվեր իր մեղքերից, ապա նա կարող էր իր մեղքերի քավության համար հազարավոր խոյեր ընծայել Աստծուն: Արդարև, նրանք, որ անկեղծորեն համոզված են մեղքի ահավոր հետևանքների մեջ և մանավանդ փորձառություն ունեն մեղքի պատճառած խղճահարության և թշվառության, իրենց մեղքերից ազատվելու համար կանգ չեն առնում որևէ նյութական զոհաբերության առջև: Ուրիշ սաղմոսների մեջ տեսնում ենք նույն գաղափարը. «Զոհեր և պատարագներ չկամեցար, ողջակեզները և մեղքի համար արած զոհերը չընդունեցիր» (Սաղմ. ԼԹ 9): Կրոնական այս գաղափարներին հասել էին բոլոր մեծ մարգարեները: Եսային, զոր օրինակ, իր պատգամների սկզբից ասում է. «Իմ ինչի՞ն են պետք ձեր բազմաթիվ զոհերը,- ասում է Տերը,- Ես կշտացել եմ ձեր խոյերի ողջակեզներից. ձեր գառների ճարպը, ցուլերի ու նոխազների արյունը չէ, որ ուզում եմ» (Ես. Ա 11):

Մարդիկ իրենց սերը և բարեկամությունը սովորաբար հայտնում են նվերներով և ընծաներով: Թե որքան սիրելի և որքան հարգի է մեր բարեկամը՝ հայտնի է դառնում ընծաներից: Ինչ որ հաճելի ենք նկատում մեր բարեկամի համար և ինչ որ կարծում ենք, որ հարգի կլինի մեր սիրելիներին՝ այն ենք նվիրում: Կրոն ունեցող, հավատացող մարդու համար ամենասիրելի էակը Աստված է: Հետևաբար, Աստծուն ընծայում ենք այն, ինչ որ Նրան հաճելի է: Հին Ուխտում կարծում էին, որ Աստծու համար ամենահաճելի բանը զոհն է, և հետևաբար դա էին ընծայում: Սակայն մեզ համար կարևոր հարցն այն է, թե Նոր Ուխտում, քրիստոնեության մեջ ի՞նչն է Աստծուն ամենահաճելի բանը: Պատասխանը առհասարակ ամենքիս

ծանոթ է, բայց և միաժամանակ ամենաքիչ կիրառվածը։ Աստծուն ամենից հաճելի բանը ՍԵՐՆ է։ Սեր՝ Իր հանդեպ, սեր՝ ընկերոջ հանդեպ (Մատթ. ԻԲ 29)։ Քրիստոնյային ամենից բնորոշող նշանը սերն է «Սրանով մարդիկ կիմանան, որ իմ աշակերտներն եք, եթե սիրեք միմյանց» (Հովհ. ԺԳ 35)։ Սերն անբաժան է պատվիրանապահությունից. «Ինձ ինչո՞ւ Տեր, Տեր եք կոչում, սակայն Իմ պատվիրանները չեք պահում», «Եթե սիրում եք Ինձ, պահեք Իմ պատվիրանները» (Հովհ. ԺԴ 15)։ Աղոթելն էլ Աստծուն հաճելի արարք է, Նրա հանդեպ մեր սիրո արտահայտությունը։ Բայց աղոթքը, լինի անհատական, թե ընդհանրական պաշտամունք, պետք է սրտով և հոգով արվի։ Մենք մեր աղոթքի մեջ պետք է դնենք մեր հոգին, միտքը և սիրտը։ Եթե շտապելով և անփութությամբ ենք աղոթում, եթե սեր ու հասկացողություն չենք դնում մեր աղոթքների մեջ՝ իզուր է այդ աղոթքը. ընդունելի չի լինի Աստծուն՝ ինչպես այն ողջակեզները։

19. Պատարագ Աստուծոյ հոգի խոնարհ,
զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ:
Աստծուն պատարագը խոնարհ հոգին է.
մաքուր սիրտը և խոնարհ հոգին Աստված չի արհամարհում:

Սաղմոսը հասել է իր գագաթնակետին, իր գերագույն եզրակացությանը։ Ասելուց հետո այն, որ Աստված հետաքրքրված չէ ողջակեզներով, հարց է ծագում, թե ինչո՞վ է հետաքրքրված։ Եթե ողջակեզները, որոնք սաղմոսերգուի ժամանակից մարդիկ համարում էին ամենանվիրական բանը, Աստծուն հաճելի և ընդունելի չէին, ապա ի՞նչ բաներ հաճելի և ընդունելի պիտի լինեին։ Այս հարցին պատասխանում են եզրափակիչ խոսքերը. Աստծու համար ամենահաճելի և ընդունելի պատարագը «խոնարհ հոգին» և «մաքուր սիրտն» են։ Այս խոսքերը հեղաշրջող էին Դավթի ժամանակաշրջանի կրոնական միջավայրում։ Հիրավի՛, քիչ խոսքեր կան, որ այսքան հարազատորեն հաստատում են Դավթի թագավոր և մարգարե լինելը, որքան սաղմոսում հայտնված նոր և իր ժամանակի համար շատ առաջադեմ կրոնական այս բարձր գաղափարը։ Աստծո մարգարեն մեր պատկերացրած սովորական գուշակը չէ, այլ Տիրոջ ճշմարտությունների մեջ թափանցող և նրանց հայտնությունը և հասկացողությունը ունեցող կրոնազգաց հոգին։ Դավիթն ուներ աստվածատուր այս հոգին։

Թեև եբրայական, Յոթանասնից և այլ թարգմանություններում «սուրբ» բառի փոխարեն «զղջացող» բացատրությունը կա, այդուհանդերձ մենք չենք ուզում այլ թարգմանությամբ փոխարինել գրաբար

թարգմանությունը, քանզի այն շատ հարազատ ենք համարում։ Ողջ Սուրբ Գրքում և հատկապես Ավետարաններում, խոնարհությունը շատ բարձր է գնահատվում. Եսթեր թագուհին իր աղոթքում ասում է. «Խոնարհները բարձրացան» (Եսթ. ԺԱ 11): Հուդիթը՝ խոսքը ուղղելով Աստծուն, ասում է. «Դու խոնարհների Տեր Ասփվածն ես»: Սաղմոսաց գրքում հաճախ է հանդիպում խոնարհների գովքը. «Հոգով խոնարհներին փրկում է» Աստված (Սաղմ. 33.19): Առակաց գրքում ասվում է. «Տերը պեփք է փառավորի խոնարհներին» (Առ. ԻԹ 23): Հիսուս և Իր Մայրը եղան խոնարհության գերագույն օրինակները (Մատթ. ԺԱ 29; Ղուկ. Ա 48): Խոնարհը հնազանդվում է Աստծո խոսքին, ինչպես արեց Սուրբ Կույսը և համբերում է բոլոր պարագաներում. «Այսպես է ասում Բարձրյալը, որ հավիտենապես բնակվում է բարձունքներում, Սուրբը սրբերի մեջ, Նրա անունը Բարձրյալ է և Նա սրբերի մեջ է հանգչում, համբերություն է փալիս փարակուսանքի մեջ ընկածներին և կյանք՝ նրանց, որոնք սրտամաշ են եղել» (Ես. ԾԷ 15):

Իսկ սրտի մաքրությունը քրիստոնյայի և բոլոր աստվածապաշտների հոգու կատարելության տիպարն է։ Աստված ամբողջ Հին Կտակարանում կոչ է անում իր ժողովրդին և հատկապես քահանայական դասին՝ ասելով. «Սուրբ եղեք, որովհետև Ես սուրբ եմ» (Ղևտ. ԺԹ 2): Նոր Ուխտը կարող է համադրվել այս առաքելական սկզբունքի հետ. «Աստված մեզ սրբության կանչեց» (Ա Թես. Դ 7): Ուրեմն Աստված ոչ միայն չի արհամարհում «սուրբ սիրտը», այլ փնտրում է այն բոլոր Իրեն հավատացող և Իր պատգամներին հավատարիմ ապրող մարդկանց մեջ։

20. Բարի արա Տէր կամօք քովք Սիոնի,
և շինեսցին պարիսպք Երուսաղէմի:
Տեր Քո կամեցողությամբ բարիք արա Սիոնին
և թող շինվեն Երուսաղեմի պարիսպները:

Նախ պեփք է գիտենալ, որ Սիոնը Երուսաղեմի բլուրներից մեկի անունն էր, որը ժամանակի ընթացքում սկսվեց գործածվել բանաստեղծորեն ամբողջ Երուսաղեմի համար։ Այնպես որ այստեղ երկու անունները (Սիոն և Երուսաղեմ) նույնիմաստ են։

Ոմանք Երուսաղեմի պարիսպների վերաշինության հիշատակությունից եզրակացնում են, որ սաղմոսը նախապես ավարտվում էր 19-րդ համարով, իսկ վերջին երկու համարները հետագայի հավելումներ են, որոնք գրվել են մեղմելու համար նախորդ համարների մեջ արտահայտված հակաողջակեզ գաղափարը։ Դավթից ավելի քան 400 տարիներ հետո Երուսաղեմը և իր պարիսպները հիմնովին քանդվեցին Նաբուգոդոնոսոր թագավորի կողմից և ժո-

ղովուրդը գերեվարվեց Բաբելոն։ 70 տարիներ հետո նրանց արտոնվեց վերադառնալ և վերաշինել Երուսաղեմի պարիսպները և Աստծո տաճարը։

Տաճարը վերակառուցելով՝ նրանք նպատակ ունեին վերահաստատելու ողջակեզ մատուցելու կրոնական հին սովորությունը։ Այս գաղափարներին ծառայող մարդիկ, երբ տեսան որ այս շատ կարևոր սաղմոսի վերջավորության մեջ այնպես է ասված, որ Աստված այդքան էլ չի բարեհաճում ողջակեզներին, այն ժամանակ խորհեցին, որ Տաճարը վերաշինելու և զոհաբերությունները վերսկսելու իրենց նպատակը կարող է ժողովրդի աչքերում նսեմանալ։ Ուստի կարիք զգացին այս սաղմոսի վերջավորությանը երկու համար ավելացնել՝ արդարացնելու իրենց՝ տաճար շինելու և ողջակեզ մատուցելու հին սովորությունը վերահաստատելու ծրագիրը։ Նախ պետք էր վերականգնել Երուսաղեմի պարիսպները, որպեսզի կարողանային ապահովության մեջ վերակառուցել Աստծու տաճարը։ Ուստի նրանց առաջին աղաչանքը եղավ Աստծուց, որ օգնի նրանց վերաշինել Երուսաղեմի պարիսպները։ Այս գաղափարը կարող է իրականության համապատասխանել կամ ոչ. մենք չենք զբաղվելու այս հարցով։ Մենք այս երկու վերջին համարները պետք է վերագրենք Դավթին, և ըստ այդմ մեկնաբանենք սաղմոսը։

Դավիթն այս համարում իրեն նմանեցնում, մինչև իսկ նույնացնում է իր քաղաքի հետ։ Նա գիտի, որ անպարիսպ Սիոնը կամ Երուսաղեմը իր թշնամիները կկարողանան դյուրությամբ գրավել։ Նա մեղանչելով իր իսկ «քաղաքի»՝ իր անձի պարիսպներն էր կործանել, հետևաբար աղոթում է Աստծուն, որ Իր բարի կամեցողությամբ այնպես անի, որ կառուցվեն իր կյանքի կործանված պարիսպները, որպեսզի այն դառնա նախկին անառիկ բերդը՝ անպարտելի Դավիթը և թշնամիները չկարողանան տիրանալ իր տկարացած անձին։ Մեր այս տեսակետը արդարացվում է այն իրողությամբ, որ Սիոնը և Երուսաղեմը Աստվածաշնչի այլ գրքերում ևս անձնավորված են ներկայացված՝ որպես մարդ կամ համայնք։ Ուրիշ սաղմոսում Դավիթը խոսքն ուղղելով Աստծուն, ասում է. «Ուրախ պետք է լինի Սիոն լեռը, և պիտի ցնծան Հուդայի դուստրերը, Քո վճիռների համար, ո՛վ Տեր» (Սաղմ. ԽԷ 12)։ Իսկ Հովել մարգարեն պատգամում է. «Սիոնի որդիներ, ցնծացեք և ուրախացեք ձեր Տիրոջով, որովհետև Նա ձեզ արդարության կերակուր տվեց» (Հովել Բ 23)։ Նույնն ասում է նաև Ներսես Շնորհալի հայրապե-

տը «Յիշեսցուք»[1] *և «Սիոնի որդիք, զարթի՛ք, հարսին լուսոյ փուք աւետիք...»*[2] *երգերի մեջ:*

Արդարև, մեզանից յուրաքանչյուրը մի Սիոն լեռ է, Աստծու լեռը, սուրբ լեռը: Այդ լեռը միշտ պարսպված պետք է մնա, որպեսզի չհարվածվի և չքանդվի նրա միջի քաղաքը, որպեսզի *«Անփառի խոզը չապականի այն և վայրի կենդանին չարածի նրա մեջ» (Սաղմ. ՀԹ 14):* ***Այս վտանգն ավելի բացահայտ կերպով ներկայացված է մեկ այլ սաղմոսում.*** *«Դու արհամարհեցիր Քո ծառայի ուխտը, անարգեցիր նրա թագը՝ գետնին գցելով: Քանդեցիր նրա փարախների բոլոր քարե պարիսպները: Եվ նրա ամրություններն ավերակ դարձրիր: Ճանապարհով բոլոր անցնողները կողոպտեցին նրան, և նա նախատինք դարձավ իր հարևանների առաջ: Դու բարձրացրիր նրա ոսոխների աջ ձեռքը: Ուրախություն պատճառեցիր նրա բոլոր թշնամիներին: Դու նորից նրա դեմ ես դուրս գալիս ու նրա սրի դեմ և պատերազմի ժամանակ նեցուկ չես կանգնում նրան» (Սաղմ ՁԸ 40-43):* ***Այս է պարիսպները քանդած քաղաքի վիճակը. այսպես պետք է նաև լինի այն մարդու վիճակը, որի բարոյական պարիսպները կործանված են: Մեր անձի, մեր քաղաքի պարիսպները այլ բան չեն, քան մեր հավատը՝ աշխարհին հաղթող Քրիստոսի վրա հիմնված մեր հավատը.*** *«Եվ այս է այն հաղթությունը, որը հաղթում է աշխարհին՝ մեր հավատը» (Ա Հովհ. Ե 4): «Հավատացեք մեր Աստծուն և դուք ամուր պետք է մնաք» (Բ Մնաց. Ի 20): «Եվ այդ ամենի վրա հագեք հավատի վահանը, որով կկարողանաք մարել չարի մխացող նետերը» (Եփես. Զ 16): «Մոտենանք (Քրիստոսին) ճշմարիտ սրտով, հավատի լիությամբ» (Եբր. Ժ 22):* ***Եվ, ի վերջո, երգենք և աղոթենք Եկեղեցու հետ*** *«Պարսպեալ պահեա զհաւատացեալս ի քեզ»:*

21. Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան.
ուխտից պատարագս հանցեն ի սեղան քո զուարակս:
Այն ժամանակ հաճելի կլինեն Քեզ արդարության զոհերը,
երբ ուխտի պատարագներ կհանեն Քո սեղանին իբրև զոհաբերություններ:

Ինչ են *«արդարության զոհաբերությունները»,* ***որոնք պետք է Աստծուն հաճելի լինեն: Արդարությունը, ինչպես տեսանք, Աստծո հիմնական հատկանիշներից մեկն է:*** *«Արդար» բառը շատ անգամներ* ***գործածվել է Աստծո համար ողջ Աստվածաշնչում: Մինչև իսկ Տերը, որ առհասարակ Աստծո համար ստորոգելիներ չի գործածել, այլ շարունակ Նրան «Հայր» կոչել, գեթ մեկ անգամ Նրան «Արդար Հայր» Է անվանում (Հովհ. ԺԷ 25): Եթե Աստված արդար է, ուրեմն բնակա-***

[1] Գիշերային ժամերգության շարականներից:
[2] Առավոտյան ժամերգության շարականներից՝ *«Նորաստեղծեալ...»*:

նորեն սիրում է արդարությունը, ինչպես հավաստիացվում է այլ սաղմոսներում. «Արդար է Տերը, և արդարություն է սիրում» (Սաղմ. Ժ 8): Բնականաբար, սիրում է և արդարներին. «Տերը սիրում է արդարներին» (Սաղմ. ՃԽԵ 9): Առակաց գրքում էլ ասվում է. «Աստծու օրհնությունը արդարների վրա է» (Առ. Ժ 6): Նույնը հաստատում է և Պետրոս առաքյալը. «Տիրոջ աչքը արդարների վրա է» (Ա Պետր. Գ 12):

Երբ պարսպված և պաշտպանված են մեր հոգիները՝ այլևս մեր թշնամիները (մեղքերը և մոլորությունները, դևերը և չար ոգիները) չեն կարող ներս մտնել: Երբ մեղքերը և մոլորությունները տեղ չգտնեն մեր սրտերում, այն ժամանակ մենք կլինենք արդար հոգիներ և հետևաբար «ընդունելի պատարագներ» Աստծու առաջ: Սաղմոսերգուն այլ տեղում ասում է. «Երբ Քեզ ձայն եմ տալիս, լսիր ինձ իմ Արդարության Աստված»,- ապա խոսքն ուղղելով «մարդկանց որդիներին» հանդիմանում է նրանց իրենց «խստասրտության և նանրասրտության և սուտը սիրելու» համար: Հեռու եղեք,- ասում է,- բարկությունից և մեղանչելուց և եզրափակում. «արդարության պատարագներ մատուցեք և ձեր հույսը դրեք Տիրոջ վրա» (Սաղմ. Դ 1-16):

Ուրեմն արդարության պատարագները մեր արդար հոգիներն են, մեր արդար սրտերը և մեր արդար գործերը, որոնք հաճելի են Աստծուն: Բոլոր արդար հոգիները իրենք իրենց ընծայել են Աստծուն. «Աստծու հետ քայլող» մարդիկ են, «Աստծուն հաճելի» անձեր. Աբելից սկսած մինչև Նոյ և մինչև Ավետարանի Հովսեփները՝ «Աստվածահայր» կոչվածը, և «Արեմաթացին», որոնք արդարև պատված են «արդար» մակդիրով:

Քրիստոնեական ընկալմամբ «արդար» կամ «արդարացված» հոգիներ են նաև անխտիր բոլոր քրիստոնյաները, որովհետև մկրտվելու ժամանակ խնդրանքներից մեկը հետևյալն է. «մկրտվել և ԱՐԴԱՐԱՆԱԼ, սրբվել մեղքերից, ազատվել դևերից և ծառայել Աստծուն»: Հավատում ենք, որ ամենքս էլ մկրտությամբ ստացել ենք արդարացման շնորհ և արդար հոգիներ ենք և հետևաբար կոչված ենք արդարության պտուղներ տալու՝ բարի գործեր անելու. սույն սաղմոսի խոսքով «արդարության պատարագներ» մատուցելու Աստծուն՝ մեր կյանքով, խոսքով ու գործով:

Եվ սաղմոսերգուն եզրակացնում է. Աստծուն հաճելի են արդարության պատարագները, «երբ ՈՒԽՏԻ պատարագներ դրվեն Իր սեղանների վրա, իբրև զվարակներ»: Զվարակը զոհի համար ընտրված ամենաթանկագին կենդանին է, նրանից ավելի հարգի զոհ չկա: Նույնինքն Աստծո համար զոհվելու պատրաստված ցուլն է: Սակայն Աստծո համար ավելի թանկագին, ավելի հարգի է «ուխտի պատարագը», այ-

սինքն՝ Աստծու առաջ ուխտ անելը, խոստում տալը և այն կատարելը։ Արդարև, Աստվածաշնչում բազում տեղեր թելադրություններ կան ուխտ անելու և մանավանդ կատարելու այն։ «Ուխտ արեք և կատարեք այն»,- ասում է այլ սաղմոսի մեջ (Սաղմ. ՀԵ 12)։ Շատ հատկանշական է ԽԹ սաղմոսում Աստծու խոսքը Իսրայելին. «Քո զոհերի համար չէ, որ հանդիմանում եմ քեզ և ոչ էլ քո ողջակեզների համար է, որոնք մշտապես Իմ առջևում են։ Քո տնից ցուլ չեմ վերցնի և քո փարախներից՝ նոխազներ։ Որովհետև Իմն են անտառի բոլոր գազանները, հազարավոր սարերի կենդանիները։ Գիտեմ ես լեռների բոլոր թռչուններին և դաշտերի բազմաքանակ անասուններն Ինձ են պատկանում։ Եթե ես քաղցեի, այդ մասին քեզ չէի ասի, որովհետև Իմն է երկիրը և նրա լիությունը։ Մի՞թե Ես պիտի պարարտ ցլերի միս ուտեմ և մի՞թե պիտի նոխազների արյուն խմեմ։ Երախտագիտությունդ ընծայիր Աստծուն որպես զոհ և կատարիր Բարձրյալին տված քո խոստումները։ Կանչիր Ինձ նեղության օրը, Ես կփրկեմ քեզ, և դու Ինձ կփառաբանես» (Սաղմ ԽԹ 8-15)։

Ուրիշ տեղ ասված է. «Եթե մեկը ուխտ անի Տիրոջը... չպետք է դրժի այն, այլ կատարի ամեն ինչ՝ համաձայն իր տված խոստմանը» (Թվեր Լ 2)։

Ուրեմն ուխտ կատարելը Աստծու համար հաճելի և ընդունելի է։ Սակայն պայման է, որ ուխտը անգամ մեկ անգամ անելու դեպքում, պետք է գործադրել այն. «Ավելի լավ է չուխտել, քան ուխտել և չկատարել այն»,- ասում է Ժողովող գրքի հեղինակը (Ե 4)։

Քանի որ Ուխտի պատարագը, այսինքն՝ Աստծուն խոսք տալը, թե այսինչ բարի գործը պետք է անենք, հաճելի է Աստծուն, ուրեմն չպիտի քաշվենք ուխտ անելուց, որոշում տալուց, Աստծու օգնությունը և օրհնությունը հայցելուց հետո։ Ուխտ անենք, խոսք տանք Աստծուն, օրինակ՝ ընդմիշտ թողնելու ծխամոլությունը, գինեմոլությունը և ամեն տեսակի այլ մոլորությունները և չար սովորությունները։

Ապաշխարության այս սաղմոսը եզրափակվում է «Ուխտի պատարագ» անելու հանձնարարությամբ։ Արդարև, ապաշխարության մեջ զղջումից հետո ամենակարևոր արարքն է ուխտելը՝ խոստում տալը Աստծուն՝ գործած մեղքերը այլևս երբեք չկրկնելու։ Առանց այս ուխտի և նրա գործադրության գրեթե ընդունայն է անցնել ապաշխարությունը և մարդ նույն մեղքի մեջ մնալու վտանգից իրեն ազատագրված չի զգա։ Աստված թող ամենքիս զորացնի վճռականությամբ ուխտելու, որոշում կայացնելու, որ ազատվենք մեր մեղքերից, թերություններից և մոլորություններից, որպեսզի մաքրված խղճմտանքով և մեղքերից ազատված և սրբված հոգեվիճակով ներկայանանք մեր Արդար Դատավորի առջև, և «փրկության ցնծությունը» հավիտենապես լինի մերը՝ այստեղ և հանդերձյալում. ամեն։

ՀԱՎԵԼՎԱԾ

Ա. ՍԱՂՄՈՍԱՑ ԳԻՐՔՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Սաղմոսաց գիրքն Աստվածաշնչի գրքերից ամենագործածականն է՝ թե՛ Հին Ուխտի ժողովրդի, թե՛, մանավանդ, Նոր Ուխտի եկեղեցու կողմից։ Աստծո ժողովուրդը՝ լինի Նոր, թե Հին Իսրայելը, պաշտամունքի մեջ միշտ կարևորագույն տեղ է հատկացրել «Սաղմոսարանին»։

Հայացած «ՍԱՂՄՈՍ» գոյականը տառադարձությունն է հունարեն «ՓՍԱԼՄՈՍ» բառի, որն էլ իր հերթին եբրայերեն «ՄԵԶՄՈՒՐ» բառի թարգմանությունն է, ինչը նշանակում է «նվագակցությամբ երգ»։ Այս բառը նույնությամբ որդեգրված է արաբերենում և այնտեղից անցել թուրքերենին, և այսօր երկու լեզուներում էլ «Սաղմոսաց» գրքի գործածական անունն է։

Հին Կտակարանը, տարբեր տեսակետներից դիտարկելով, կարելի է բաժանել զանազան մասերի։ Գրության ձևին նայելով՝ կարող ենք բաժանել գրեթե երկու հավասար մասերի՝ արձակ և բանաստեղծական գրքեր։ Առաջինը գրավում է Ս. Գրքի սկիզբը, իսկ երկրորդը՝ վերջը։ Այս երկուսը շրջայվում են Հոբի գրքով, որի սկիզբն ու վերջը արձակ ոճով է գրված, իսկ միջանկյալ մեծագույն մասը՝ բանաստեղծական։ «Սաղմոսաց» գիրքը առաջինն ու կարևորագույնն է բանաստեղծական գրքերից։ Միաժամանակ, այն ամենամեծն է ամբողջ Աստվածաշնչի գրքերի մեջ՝ թե՛ գլուխների թվով և թե՛ ծավալով։ Այն բաղկացած է 150 մեծ և փոքր հոգևոր երգերից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է առանձին գլուխ։ Ամենափոքր գլուխը (Սղմ. ՃԺԶ) բաղկացած է մոտ չորս տողից՝ 2 համարով, իսկ ամենամեծը՝ ՃԺԸ չորս էջերից՝ 176 համարով։

Ի գիտություն պետք է ավելացնել նաև, որ Հին Կտակարանն ունի հնագույն երկու բնագիր։ Առաջինը, բնականաբար, եբրայականն է, իսկ երկրորդը՝ «Յոթանասնից» կոչված հունարեն թարգմանությունը, որ կատարվել է Եգիպտոսում Քրիստոսից առաջ Գ դարում։ Այս թարգմանությունը նախ դարձավ սփյուռքում ապրող հունախոս հրեաների և ապա քրիստոնեական Եկեղեցու պաշտոնական Ս. Գիրքը։

Բացի ասորականից՝ հնագույն բոլոր թարգմանությունները, որոնց թվում նաև գրաբարը, կատարվել են Յոթանասնից բնագրից։ Իսկ նորագույն թարգմանությունները բողոքականության ծագումից հետո, հիմնականում կատարվել են եբրայական բնագրից, որոնց թվում է նաև ներկայիս աշխարհաբար[1] թարգմանությունը։ Այս երկու հնագույն թարգմանությունների միջև առկա են կարևոր տարբերություններ, որոնց անդրադառնալը մեր նյութից դուրս է։ Սակայն անհրաժեշտ է նշել, որ «Սաղմոսաց» գրքի պարագային՝ երկու բնագրերի գլուխների թվահամարները մեծավ մասամբ իրար չեն համապատասխանում։ Պատճառն այն է, որ Յոթանասնից թարգմանության մեջ 9-րդ և 10-րդ սաղմոսները միացած են, ինչի արդյունքում 11-րդ սաղմոսից սկսած հունարեն բնագիրը մի գլխահամարով հետ է եբրայական բնագրից՝ մինչև 114-րդ սաղմոս, որը միացած է 115-ին։ Սակայն Յոթանասնիցը երկու մասի է բաժանում 116-րդ սաղմոսը և ստացվում է, որ կրկին մեկ համարով հետ է եբրայական բնագրից և այսպես մինչև 147-րդ սաղմոս, որը Յոթանասնիցում բաժանվում է երկու մասի, ինչի արդյունքում էլ երկու բնագրերը կրկին համաձայնում են 148-րդ սաղմոսի պարագային և ավարտվում 150-րդ գլխով։ Ուստի, ի մտի պետք է ունենալ, որ Սաղմոսաց գրքի միայն առաջին ութ և վերջին երեք գլուխներն են նույն համարը կրում երկու հնագույն բնագրերում, իսկ միջանկյալ 139 գլուխների պարագային՝ Յոթանասնիցը մեկ գլխահամարով հետ է եբրայականից։ Բնականաբար, այս տարբերությունները երևում են նաև գրաբար և աշխարհաբար (արևմտահայերեն) Աստվածաշնչերի մեջ. այնպես, որ գրաբարի 50-րդ սաղմոսը աշխարհաբարում 51-րդն է։ Հաշվի առնելով, որ Հայոց Եկեղեցու պաշտոնական Ս. Գիրքը գրաբարն է, մեր ուսումնասիրության մեջ հիշատակված գլուխները գրաբարի հետ են համաձայնեցված, և աշխարհաբարում համապատասխան սաղմոսը գտնելու համար՝ անհրաժեշտ է մեկ համար ավելացնել։ Աշխարհաբար թարգմանության գլուխները նշելու համար օգտագործելու ենք թվեր, իսկ գրաբարյան գլուխները նշած կլինեն հայերեն տառերով։

Եթե դիտենք Աստվածաշնչի պարունակությունը ԽՈՍՈՂՆԵՐԻ և ԼՍՈՂՆԵՐԻ տեսանկյունից՝ կարող ենք այն բաժանել երեք խմբերի։ Առաջին խմբին պատկանում են այն հատվածները, որոնք գրված են ՄԱՐԴԿԱՆՑ ԿՈՂՄԻՑ՝ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ. անշուշտ միշտ Ս. Հոգու ներշնչումով։ Այս խմբին են պատկանում բոլոր պատ-

[1] Աստվածաշնչային Ընկերության արևմտահայերեն թարգմանությունը:

մական գրքերը և իմաստութենական գրականությունը։ Երկրորդ խմբին են դասվում այն հատվածները, որոնք տրված են ԱՍՏՈՒՅ՝ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ։ Բոլոր մարգարեական գրքերը և Մովսիսական օրենքը պատկանում են այս խմբին, ինչից ելնելով՝ նրանց հեղինակները կարող են ասել՝ «Այսպես է ասում Տերը»։ Եվ վերջում, Աստվածաշնչում կան մասեր, որոնք գրված են ՄԱՐԴԿԱՆՑ ԿՈՂՄԻՑ՝ ԱՍՏՈ ՀԱՄԱՐ կամ ուղղված են Աստծուն։ Այս վերջին խմբի կարևորագույն ներկայացուցիչը «Սաղմոսաց» գիրքն է՝ Ս. Գրքի տարբեր հատվածներում սփռված աղոթքների և առ Աստված ուղղված երգերի ու աղերսների հետ։ Սաղմոսները, ուրեմն, մարդկային հոգու բանաստեղծական բխումներն են, որոնք, միաժամանակ երգի վերածվելով, աղոթք են դարձել, դարձել են խնդրանք և գոհաբանություն, մինչև իսկ ողբ ու տանջանք և իբրև այդպիսին՝ մատուցվել են Աստծուն։ Նրանց մեջ միախառնված գտնում ենք նաև որոշակի խորհրդածական սաղմոսներ, որոնք արտահայտում են մարդու վստահությունը և հիացմունքը Աստծո մեծության, զորության, սրբության ու նախախնամության վերաբերյալ. «Երանելի է այն մարդը, որը չհետևեց ամբարիշտների խորհրդին» (Սաղմ. Ա 1), «Տերն է իմ հովիվը, ես ոչ մի բանի կարոտություն չեմ ունենա» (Սաղմ. ԻԲ), «Երկինքը պատմում է Աստծու փառքը» (Սաղմ. ԺԸ) ևն։

Այս վերջին տեսակի սաղմոսներում, թեև սաղմոսերգուն Աստծո հետ չի խոսում, սակայն նրա մտածումները և զգացմունքները միշտ առ Աստված են ուղղված և միշտ Նրան ի մտի ունենալով են գրվում։ Նման սաղմոսները առհասարակ լավագույն նմուշներն են մարդու՝ Աստծուն փնտրելու ճիգերի և Նրան գտնելու երջանկության՝ լինի դա բնության մեջ, արդարների կյանքում, թե իր իսկ ներաշխարհում։ Ուրեմն՝ սաղմոսներն ընտրյալ արդար և աստվածամերձ անձանց կողմից ստեղծված երգեր են, նրանց հոգեկան երկունքների, մտածումների, որոնումների, փորձառությունների և ներքին կրոնական ապրումների հայելին։

Հին Ուխտում մեծ տեղ է հատկացված ծիսկատարություններին, և մեծ շեշտ է դրվում արտաքին արարողությունների վրա. օրինակ՝ զոհաբերություններ, տարբեր ընծայաբերումներ, տոնակատարություններ և ծեսեր, որոնց կատարումն ըստ իրենց հավատքի՝ հաճելի էր Աստծուն, և որոնցով հրեաները հույս ունեին արդարանալ։ Սակայն սրանց թվում և սրանց զուգահեռ՝ աստիճանաբար ծնունդ է առնում ներքին, հոգևոր ապրումների կրոնը, հոգևոր ճշմարտությունների ներթափանցումները, որոնք իրենց լավագույն արտահայտությունը

գտնում են ինչպես մեծ մարգարեների գրքերում, նույնպես և էլ ավելի՝ սաղմոսների մեջ։ Մարգարեն ասում է Աստծու անունից. «Ողորմություն եմ ուզում և ոչ՝ զոհ» (Ովսեե Զ 6)։

Իսկ սաղմոսերգուն, խոսքն ուղղելով Աստծուն, երգում է. «Եթե պատարագներ կամ զոհեր կամենայիր, ապա առատապես կմատուցեինք Քեզ, բայց դու անգամ ողջակեզներ չհաճեցար»,- և ավելացնում է մի ներքին հոգետեսություն. «Աստծուն հաճելի պատարագը սուրբ սիրտն է և խոնարհ հոգին» (Սաղմ. Ծ 18-19)։ Սաղմոսներում և մեծ մարգարեների գրքերում նշմարված այս ներքին կրոնն է, որը մեր Տերը կանվանի «Հոգով և ճշմարտությամբ պաշտամունք» (Հովհ. Դ 24)։

Որևէ խոսքի կամ գրվածքի կարևորությունը և մեծությունը միայն արտահայտած գաղափարների խորության, բարձրության ու վեհության մեջ չէ, այլ նաև, և առավելաբար, ՀԱՂՈՐԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ մեջ է։ Այսինքն՝ լսողի կամ կարդացողի մտքի և հոգու մեջ լսածին կամ կարդացածին համապատասխան թրթռումներ առաջացնելու մեջ է։ Այլ կերպ ասած՝ սկզբնագրի ապրումի կամ մտածումի կրկնումը և վերարտադրությունը լսողի ներաշխարհում։ Այս է «ԿԵՆԴԱՆԻ ԽՈՍՔ» կամ «ԿԵՆԴԱՆԻ ԳԻՐ» ասվածը։ Սաղմոսները, առհասարակ, այս կարգի գրություններ են, որ սովորաբար իրենց անդրադարձը, իրենց արձագանքը գտնում են և ստեղծում են մեր հոգիներում ու մտածումներում։ Սաղմոսերգուի հետ միասին պետք է հիանանք բնական և հոգևոր գեղեցկությամբ, նրա վեհ մտածումները պետք է տեղավորվեն նաև մեր մտքերում և մեծավ մասամբ պետք է կրենք կրոնական այն հուզումը, որ ունեցել է սաղմոսերգուն։ Աստվածաշնչի բոլոր գրքերից մեր հուզական ջիղերը ամենից շատ թրթռացնողները սաղմոսներն են։

Ուրեմն, մեղավորը և արդարը, մտավորականը և ռազմիկը, երիտասարդը և ծերը պիտի գտնեն սաղմոսներում այն խոսքերն ու մտքերը, որոնք պիտի հուզեն և շարժեն նրանց զգացումները՝ այնտեղ արտահայտված համապատասխան ապրումներով և մտածումներով։ Սաղմոսներն ունեն համամարդկային տարողություն։ Սաղմոսներից մեր սրտեր են իջնում հավատքի ցոլքեր, որոնք լուսավորում են մեր ճանապարհը, մխիթարում մեր հոգիները, սրտապնդում են մեզ և ավելի մարդկային են դարձնում՝ սանձելով մեր տմարդությունները։ Թերևս Ավետարաններից հետո և նրանց զուգահեռ ոչ մի գիրք Աստվածաշնչի կամ համամարդկային գրականության մեջ այնքան ուժգին ու այնքան բարերար ազդեցություն չի ունեցել, որքան «Սաղմոսաց» գիրքը։

Բ. ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Սաղմոսաց» գիրքն Աստվածաշնչի մյուս գրքերի պես բաժանումներ չունի։ Սակայն նկատելի է, որ իրարից հեռու մի կարգ սաղմոսներ ունեն գրեթե հարակից և նման օրհներգություններ կամ մաղթանքներ։ Վերջիններս իբրև հանգրվան գործածելով՝ նրանց կարելի է բաժանել հինգ մասի այսպես՝

ա. Ա-Խ սաղմոս, որ վերջանում է այսպես. «Օրհնյալ է Տեր Աստված Իսրայելի հավիտյանս հավիտենից, եղիցի եղիցի»:

բ. ԽԱ-ՀԱ սաղմոս, որի վերջավորությունը այս մաղթերգն է. «Եվ օրհնյալ է Նրա փառքի սուրբ անունը հավիտյան, թող լցվի նրա փառքով ամբողջ երկիրը: Եղիցի, եղիցի»:

գ. ՀԲ-ՁԸ սաղմոս, որ վերջանում է այս կարճ օրհներգով. «Օրհնյալ է Տեր Աստված հավիտյանս հավիտենից: Եղիցի, եղիցի»:

դ. ՁԹ-ՃԵ սաղմոս, որի վերջավորությունն է. «Օրհնյալ է Տեր Աստված Իսրայելի հավիտյանս, հավիտենից, և թող ասի ամբողջ ժողովուրդը. եղիցի, եղիցի»:

ե. Վերջին բաժանումը ավարտվում է ՃԾ վերջին սաղմոսով, որը միաժամանակ ամբողջ Սաղմոսաց գրքի հարմարագույն վերջավորությունն ունի. «Բոլոր հոգիները Տիրոջն օրհնեցեք»:

Վերոնշյալ այս հինգ բաժանումներն արդեն իսկ գոյություն ունեին մինչև Յոթանասնից թարգմանությունը, որովհետև փառաբանական այս համանման վերջավորությունները տեղ են գտել նաև Յոթանասնից թարգմանության մեջ։ Այս հինգ բաժանումները հավանաբար կատարվել են Սաղմոսաց գիրքն Օրենքի Հնգամատյանին համապատասխանեցնելու համար։ Ըստ բովանդակային ընդգրկման սաղմոսները ըստ տեսակի, ենթակա են հետևյալ բաժանման.

ա. ՀԱՎԱՔԱԿԱՆ ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ։ Օրինակ՝ «Ով Տեր, մեր Տեր, որքան փառավոր է Քո անունը ամբողջ աշխարհում» (Սաղմ. Ը), «Երկիրը պատմում է Աստծու փառքը» (Սաղմ. ԺԸ), «Տիրոջը մատուցեք փառք ու պատիվ» (Սաղմ. ԻԸ): Ու նմանատիպ բազմաթիվ այլ սաղմոսներ, որոնք, առհասարակ, երգում էին Տաճարում՝ փառաբանելու Աստծո անունը։

բ. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՈՀՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ. օրինակ՝ «Գովաբանում եմ Քեզ, Տեր, որովհետև ընդունեցիր ինձ և չթողեցիր, որ թշնամիներս ուրախանան իմ վրա» (Սաղմ. ԻԹ), «Ամեն ժամ պիտի Տիրոջն օրհնաբանեմ, ամեն ժամ Նրա օրհնությունը բերանիս մեջ թող լինի» (Սաղմ. ԼԳ): Այս սաղմոսներն անհա-

տական շնորհակալության ու երախտիքի արտահայտություններ են Աստծուց ստացած ողորմությունների ու բարիքների համար։

Գ. ՀԱՎԱՔԱԿԱՆ ՏՐՏՄՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ. օրինակ՝ «Ո՛վ Աստված, ինչո՞ւ մերժեցիր ընդմիշտ. Քո սրտմտությունը սաստկացավ Քո արոտի ոչխարների վրա (Սաղմ. ՀԳ), «Աստված, հեթանոսները մտան Քո ժառանգության մեջ և Քո սուրբ Տաճարը պղծեցին. Երուսաղեմը ավերակ դարձրին» (Սաղմ. ՀԸ): Սրանք ազգային աղետների առիթով ողբերգություններ են, ու միաժամանակ, աղերսանքներ են առ Աստված, որ վերջ տա իրենց գլխին եկած փորձություններին։

Դ. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՂԲԵՐԳԵՐ. օրինակ՝ «Տէր զի բազում եղեն նեղիչք իմ, բազում յարեան ի վերայ իմ» (Սաղմ. Գ) ծանոթ սաղմոսը, որով սկսվում է Գիշերային ժամերգությունը կամ՝ «Ով Տեր, Քո սրտմտությամբ մի հանդիմանիր ինձ և Քո բարկությամբ մի խրատիր ինձ» (Սաղմ. Զ): Նմանատիպ սաղմոսներն ամենից շատ են սաղմոսարանում, որոնցով երգիչը աղաղակում է առ Աստված՝ փրկելու իրեն զանազան նեղություններից ու թշնամիներից։

Ե. ՄԵՍԻԱԿԱՆ ՍԱՂՄՈՍՆԵՐ. օրինակ՝ «Ինչո՞ւ խռովվեցին հեթանոսները և իշխանները ժողովի հավաքվեցին Տիրոջ և Նրա Օծյալի դեմ» (Սաղմ. Բ), «Տերը պահում է Իր Օծյալին. Նրան պատասխանում է Իր սուրբ երկնքից» (Սաղմ. ԺԹ 7): Այս շարքում կարելի է ավելացնել նաև ԻԱ, ԽԴ, ԿԸ, ՃԹ սաղմոսները և ոչ միայն։ Այս սաղմոսներից որոշները հիշատակված են նաև Նոր Կտակարանում՝ հաստատելու Հիսուսի մեսիականությունը (հմմտ. Մատթ. ԻԱ 16, Ղուկ. Ի 42, Գործ. Ա 20, ԺԳ 33):

Կ. ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍՆԵՐ. օրինակ՝ առաջին սաղմոսը, որ ներկայացնում է բարեպաշտ մարդու երջանկությունը, հաջողությունը և պտղաբեր լինելը, ապա՝ ամբարիշտների վերջնական կորուստը, որից մեր բնական բանականությունը պետք է եզրակացնի, որ արդար լինելը ավելի բանավոր (խոհեմ) է, քան՝անարդար։ Կամ ԺԳ և ԺԴ սաղմոսները, որոնցով սաղմոսերգուն ներկայացնում է մարմնավոր մարդու ապականությունը. «Տերը երկնքից նայեց բոլոր մարդկանց որդիներին՝ տեսնելու թե կամ Աստծուն փնտրող մի իմաստուն մարդ» (Սաղմ. ԺԳ 2): Սաղմոսերգուն հարցնում է ԺԴ սաղմոսի սկզբում. «Տեր ո՞վ պիտի ապրի Քո վրանում, կամ ո՞վ պիտի բնակվի Քո սուրբ լեռան վրա»,- և պատասխանում. «անմեղը, արդարը, ճշմարտախոսը» և այլն։

Է. ԽԱՌԸ ՍԱՂՄՈՍՆԵՐ. այսինքն՝ սաղմոսներ, որոնցում միախառնված են գոհությունը, իմաստությունը, Աստծո մեծության

փառաբանությունն ու թշնամիների կորստյան վրա ուրախանալը, Մեսիայի հավիտենականությունը և դատավորի հանգամանքը, ինչպես օրինակ Թ սաղմոսում. «Ով Տեր, իմ ամբողջ սրտով Քեզ գոհություն կմատուցեմ և կպատմեմ Քո բոլոր սքանչելիքների մասին: Քեզանով կցնծամ և կուրախանամ, Սաղմոս կասեմ Բարձրյալին Տիրոջ անվան համար: Թշնամիներս հետ դառնալով կթուլանան ու կկործանվեն Քո առջև: Իրավունքն ու դատաստանս Դու տեսար, որպես արդարության դատավոր՝ աթոռին նստեցիր: Սաստեցիր հեթանոսներին, և կորավ ամբարիշտը, նրանց անունները ջնջվեցին հավիտյանս հավիտենից, և թշնամու զենքն իսպառ վերացավ: Տերը տնանկին ապավեն եղավ և օգնական նեղության պահին» և այլն։

Ը. ԿՐԿՆԱԿ ՍԱՂՄՈՍՆԵՐ։ Համանման սաղմոսները բազմաթիվ են, կան նաև շատ փոքր տարբերություններով կրկնակ սաղմոսներ, ինչպես օրինակ՝ ԺԳ և ԾԲ սաղմոսները։ ԼԹ սաղմոսի 14-18 համարները գրեթե նույնությամբ կազմում են ԿԹ սաղմոսը։ Իսկ ԾԶ սաղմոսի 8-12 համարները և ԾԹ սաղմոսի 7-14 համարներն իրար միացած նույնությամբ կրկնվում են ՃԷ սաղմոսում։

Թ. ՎՐԵԺԽՆԴՐԱԿԱՆ ՍԱՂՄՈՍՆԵՐ (ԾԷ, ԿԷ 21-23, ԿԸ 23-29, ՃԸ 5-19, ՃԼԶ 7-19):

Ժ. ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍՆԵՐ (Ե, ԻԴ, ԼԱ, ԼԴ, ԼԷ, Ծ, ՃԻԹ):

Գ. ՍԱՂՄՈՍՆԵՐԸ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Սաղմոսները, առհասարակ, երգվում էին երաժշտական գործիքների նվագակցությամբ՝ այնպես, ինչպես այսօր հոգևոր երգերին հաճախ նվագակցում է երգեհոնը։ Աստվածաշնչում շատ անգամ նշված է, որ պաշտամունքի երգերին միանում են նաև երաժշտական գործիքները. օրինակ՝ Ամոս մարգարեն Աստծու անունից մերժում է Իսրայելի երգերն ու նվագները. «ողջակեզները և զոհերը... հեռացրու նրանց Ինձանից (ասում է Աստված) քո ***երգերի ձայնը****, և քո* ***սրնգի նվագները*** *չպիտի լսեմ» (Սաղմ. Ե 23): Իսկ Եսայի մարգարեն, ընդհակառակը, հոգևոր ուրախություն է խոստանում Աստծո ժողովրդին հետևյալ բառերով. «Դուք մի սուրբ տոնի գիշերվա պես* ***երգ*** *պետք է ունենաք, ու Տիրոջ՝ Իսրայելի Վեմի լեռը գնալու համար՝* ***սրինգով*** *գնացողի պես սրտի ուրախություն պիտի ունենաք» (Ես. Լ 29): Իսկ գերեդարձին, երբ քանդված տաճարը վերակառուցելու համար հիմքեր դրեցին՝ «քահանաները իրենց զգեստները հագած՝ փողերով, ու ղևտացիները Ասափի որ-*

*դիները **ծնծղաներով** Տիրոջը օրհնելու համար կանգնեցին... և փոխնիփոխ **երգում էին**» (Բ Եզր. Գ 10): Ա և Բ Մնացորդաց գրքերը լեցուն են երգի և երաժշտական գործիքի միասնաբար օգտագործման ակնարկություններով. օրինակ՝ «Եվ Դավիթը պատվիրեց ղևտացիների իշխաններին, որպեսզի իրենց եղբայրների հետ՝ բեհեզ հագած՝ **ծնծղաներով, տավիղներով** և **քնարներով** կանգնեն սեղանի արևելյան կողմը և նրանց հետ հարյուր քսան քահանա թող փող հնչեցնեն (Բ Մնաց. Ե 12):*

Յուրաքանչյուր սաղմոսի սկզբում դրված ծանոթության մեջ հաճախ հիշատակվում են այն երաժշտական գործիքները, որոնց նվագակցությամբ պետք է երգվի սաղմոսը: Սրանք, սակայն, առհասարակ հիշված չեն մեր գրաբար թարգմանության մեջ, բացի մի քանի բացառիկ պարագաներից, ինչպես օրինակ ԾԲ սաղմոսի վերնագրում՝ «Վասն Մահաղեթայ», որի փոխարեն եբրայերենում ասված է «ի վերայ Մահաղեթայ»: Թե ինչ երաժշտական գործիքի մասին է խոսքը՝ հայտնի չէ: Արևմտահայերեն թարգմանության մեջ գործիքները հիշված են իրենց եբրայական անուններով, որոնք, բնականաբար, ոչինչ չեն ասում ընթերցողին. օրինակ՝ «Նկինոթ», «Նիհիլոթ», «Շեմինիթ», «Կիթթիթ» և այլն, որոնք հիշատակված են, 4, 5, 6 և 8-րդ սաղմոսների սկզբում:

Դ. ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ՎԵՐՆԱԳՐԵՐԸ

Սովորաբար, սաղմոսներն ունեն բացատրական վերնագրեր, ուր հաճախ նշված են տվյալ սաղմոսի հեղինակը, ստեղծման պատմական տվյալները, երաժշտական գործիքը, որի նվագակցությամբ այն պետք է երգվի, երաժիշտների դասը, որ պիտի կատարի այն ևն: Այս վերնագրերը շատ համառոտ և անկատար հուշարար-բացատրություններ են և ժամանակի ընթացքում նրանից որոշները գրեթե կորցրել են իրենց իրական իմաստը և այժմ անհասկանալի են մեզ համար: Այս խորագրերը թեև, ըստ երևույթին, հին ժամանակներից են եկել, սակայն հետո են ավելացվել սաղմոսներին: Չնայած դրանք ներկայումս մեծ պատմական կարևորություն չեն ներկայացնում, բայց առնվազն արձագանքներն են եբրայական սաղմոսներում տիրող ընդհանուր ավանդությունների՝ թե ո՛ր սաղմոսը ո՛ւմ կողմից է գրվել, կամ ի՞նչ պարագաներում, կամ ո՞ր գործիքի նվագակցությամբ պետք է երգվի: Թեև ոչ շատ կարևոր, բայց ընդարձակ և հետաքրքրական նյութ է վերնագրերի այս հարցը, որին մանրամասնությամբ չենք կարող անդրադառնալ այս առիթով, բայց որի մասին կառանձնացնենք ընդհանուր մի քանի դրույթներ:

Առաջին երևույթը, որն աչքի է ընկնում, այն բազմաթիվ ու կարևոր տարբերություններն են, որոնք գոյություն ունեն եբրայական բնագրի և Յոթանասնից թարգմանության միջև: Այսպես, օրինակ, ըստ եբրայական բնագրի՝ միայն 34 սաղմոսներ ունեն վերնագրեր, մինչդեռ ըստ Յոթանասնիցի՝ անվերնագիր սաղմոսների թիվը միայն 4 է: Պետք է նշենք նաև, որ կան մանր տարբերություններ գրաբար Աստվածաշնչերում սաղմոսների վերնագրերի միջև: Թեև մինչ այժմ հրատարակվել են 7-8 ամբողջական գրաբար Աստվածաշնչեր, բայց գլխավորները չորսն են, մյուսները սրանցից մեկի կամ մյուսի վերահրատարակություն են:

Այս չորս գլխավոր հրատարակություններն են.

- *Ոսկան վարդապետինը՝ 1666թ., Ամստերդամ:*
- *Հ. Հովհաննես Զոհրաբյանինը՝ 1805 թ., Վենետիկ:*
- *Հ. Արսեն Բագրատունունը՝ 1860 թ., Վենետիկ:*
- *Աստվածաշնչային ընկերության հրատարակածը՝ 1895թ.-ին, Կ.Պոլիս, պատրիարք Ներսես Վարժապետյանի խնդրանքով:*

Այս վերնագրերում ամենից շատ գործածված է «Սաղմոս Դավթի» բացատրությունը, որի առջևից դրված է «ի կատարած» արտահայտությունը, որ բառացի թարգմանությունն է հունարեն «Իս տո տելոս» արտահայտության: Սակայն երկու պարագաներում էլ դժվար է հասկանալ՝ ինչ է նշանակում այս արտահայտությունը: Արևմտահայերեն թարգմանությունը և բոլոր բողոքական թարգմանությունները, որոնք եբրայական բնագրից են կատարված, այս արտահայտության համար ունեն հետևյալ բացատրությունը՝ «գլխավոր երաժշտին» կամ «երաժշտապետին»:

Մենք հաշվեցինք, որ մեր գրաբար Սաղմոսարանում՝

- *95 սաղմոսներ վերագրված են Դավթին,*
- *63 անգամ կրկնվում է «ի կատարած» բացատրությունը,*
- *23 սաղմոսների վերաբերյալ կան պատմական ծանոթագրություններ այն մասին, թե ինչ պարագաներում են դրանք գրվել Դավթի կողմից,*
- *16 սաղմոսներ վերնագրված են միայն «ալէլուիա»,*
- *15 սաղմոսներ վերնագրված են «օրհնութիւնք աստիճանաց»,*
- *12 սաղմոսներ վերնագրված են «Ասափայ»,*
- *10 սաղմոսներ վերնագրված են «իմաստութիւն» կամ «օրհնութիւն Կորխայ»:*

Կան նաև սաղմոսներ, որոնք կապված են ուրիշ ծանոթ անունների հետ։ Օրինակ՝ ՁԹ սաղմոսը վերնագրված է «Աղօթք Մովսէսի Առնն Աստուծոյ», ՀԱ սաղմոսը վերնագրված է «Ի Սողոմոն Սաղմոս», որի փոխարեն եբրայական և Յոթանասնից բնագրերն ունեն «վասն Սողոմոնի սաղմոս» ձևը։ ԿԴ և ՃԼԶ սաղմոսները կապված են Երեմիայի և Եզեկիելի անունների հետ, իսկ ՃԽԶ և ՃԽԸ սաղմոսները կապվում են Անգե և Զաքարիա մարգարեների անուններին։

Սրանց կողքին կան ուրիշ 40-50 սաղմոսներ, որոնց վերնագրերն են՝ «ի կատարած ընդ օրհնութեան» (Սաղմ. Դ), «ի կատարած վասն վիճակելոց» (Սաղմ. Ե) կամ «վասն Ութերորդացն» (Սաղմ. Զ) կամ «ի վերայ Ութերորդացն» (Սաղմ. ԺԱ), «ի վերայ հնձանացն» (Սաղմ. Ը), «վասն գաղտնեաց որդոյն» (Սաղմ. Թ) են, որոնք նույնիսկ իրենց գրաբար ձևով մեզ համար մնում են անհասկանալի։

Ե. ՍԱՂՄՈՍԱՑ ԳՐՔԻ ՀԵՂԻՆԱԿԸ

Հնուց ի վեր տիրում է այն բացահայտ համոզումը, որ Սաղմոսաց գրքի հեղինակը Դավիթ թագավորն է և գիրքը ծանոթ է մեզ «Դավթի սաղմոսներ» անունով։ Նոր Կտակարանը այն ոչ միայն շատ անգամ է մեջբերում, այլ նաև հաստատում է Դավիթ թագավորի՝ Սաղմոսաց գրքի հեղինակելը (հմմտ. Մրկ. ԺԲ 36-37, Հռ. Դ 4-6 և ԺԱ 9-10 են)։

Արդարև, Աստվածաշնչում Դավիթը ներկայացված է նաև որպես երաժիշտ, բանաստեղծ, սաղմոսագիր և քնարերգու։ Երբ Սավուղ թագավորի մռայլությունը փարատելու համար փնտրում էին երգչի, գտան Բեթղեհեմցի Հեսսեի որդի Դավթին, «որը գիտի սաղմոս երգել» (Ա Թագ. ԺՁ 14-23)։ Դավթի հորինած ու երգած սաղմոսները՝ նրա կենսագրությանը զուգահեռ, հիշվում են Թագավորաց գրքերում։ Օրինակ՝ ծանոթ է Սավուղ արքայի և նրա որդի Հովնաթանի մահվան առիթով Դավթի գրված ողբը (Բ Թագ. Ա 17-27), ինչպես նաև մեկ այլ ողբ՝ Աբեններ զորավարի մահվան կապակցությամբ (Բ Թագ. Գ 33-34)։ Հիշատակված են նաև իր կրոնազգաց սաղմոսներից երեքը (Բ Թագ. Է 18-19, ԻԲ և ԻԳ 1-7)։

Դատելով նույն Սաղմոսաց գրքից՝ առնվազն առաջին 72 սաղմոսները Դավթի հեղինակածներն են, որովհետև թե՛ ըստ եբրայական բնագրի, թե՛ ըստ Յոթանասնից թարգմանության՝ 72-րդ սաղմոսի վերջավորության մեջ կա հետևյալ ծանոթագրությունը. «Հեսսեի որդի Դավթի աղոթքները վերջացան», ինչը պակասում է մեր գրաբար տպագրությունների մեջ՝ բացի Ոսկանի Աստվածաշնչից և նրանից

տպագրվածներից. հավանաբար, դա ավելացվել է իր կողմից՝ լատինական թարգմանության հետևողությամբ։

72-րդ սաղմոսին հաջորդող 17 սաղմոսները, որոնք կազմում են գրքի երրորդ բաժանումը, և նրանցից հետո եկող 11 սաղմոսները, արդարև, չեն կրում Դավթի անունը՝ ըստ եբրայական բնագրի, թեև Յոթանասնիցի և հետևաբար՝ նաև գրաբարի մեջ, սրանցից որոշների վրա երևում է «Սաղմոս Դավթի» բացատրությունը։ Սաղմոս Ճ-ից սկսյալ նորից պարբերաբար երևում է Դավթի անունը. ՃԼԷ-ից մինչև ՃԽԴ երկու բնագրերում էլ անընդմիջաբար երևում է այն։ Իսկ վերջին վեց սաղմոսների վրա չկա Դավթի անունը։ Այնպես որ, ինչպես տեսանք, միայն 95 սաղմոսներ են կրում Դավթի անունը։

Դատելով Մնացորդաց, Եզրասի և Նեեմիայի գրքերից, որոնք գրված են հրեա ժողովրդի բաբելոնյան գերությունից հետո, այսինքն՝ Դավթից չորս-հինգ դար հետո՝ Դավիթն այն թագավորն է, որը կազմակերպել է Իսրայելի պաշտամունքային հավաքական երգեցողությունը(տես Բ Մնաց. ԻԹ 30, Բ Եզր. Գ 10, Նեեմ. ԺԲ 24, 36, 45-46)։

Սակայն Սաղմոսաց գրքում Դավթից բացի նաև այլ անուններ են հանդիպում, ինչպես թռուցիկ տեսանք քիչ առաջ, որոնցից ամենաշատը հիշվում է Ասափը։ Սկսած ՀԲ սաղմոսից, երբ դադարում է Դավթի անունը, սկսվում է հիշատակվել վերոհիշյալ անունը՝ «Սաղմոս Ասափի» կամ «Իմաստություն Ասափի» կամ «Օրհնություն Ասափի» մակագրությամբ, ինչը կրկնվում է անընդհատ՝ մինչև ՁԲ սաղմոս։ Ասափի մասին տեղեկությունների համաձայն՝ նա Դավթի ժամանակակից երևելի երաժիշտ էր։ Ասափը այն Ղևտացիներից էր, որոնք Դավթի կողմից նշանակվեցին Տիրոջ տապանակի առջև՝ «երգելու, փառավորելու և օրհնելու Իսրայելի Տեր Աստծուն» (Ա Մնաց. ԺՁ 4-5, 37, ԻԵ 1-2)։ Երևում է, որ այս պաշտոնը ժառանգաբար մնաց Ասափի ազգատոհմի վրա։ Հստակ չէ, թե այն սաղմոսները, որոնք գրված են Ասափի անվան տակ, իր հեղինակածներն են, թե նրան և իր հաջորդներին է հանձնարարված դրանք երգելու պարտականությունը։ Նեեմիայի գրքում էլ հետևյալ ծանոթագրությունը կա նրա մասին. «Դավթի օրոք Ասափը՝ սաղմոսասացների իշխանն ու առաջնորդը, որոնք երգում և նվագում էին և փառավորում Աստծուն» (Նեեմ. ԺԲ 25, տես նաև՝ Է 45, ԺԱ 22)։ Սաղմոսաց գրքի երկրորդ բաժանումից, այսինքն՝ ԽԱ սաղմոսից սկսյալ, հիշատակվում են նաև Կորխի որդիները՝ «իմաստութիւն որդւոց Կորխայ» բացատրությամբ, մինչև ԽԸ գլուխ։ Ապա նորից են երևում ՁԳ և ՁԴ սաղմոսներում։ Սրանք որդիներն էին տխրահռչակ Կորխի, որը ապստամբել էր Մովսեսի և Ահարո-

նի դեմ և ստացել իր պատիժը. երկիրը բացվեց և կլանեց նրան և իր հետևորդներին, բայց որդիները ազատվեցին աղետից (Թվեր ԺՁ)։ Սրանց ազգատոհմն էլ երաժշտապետներ եղան Դավթի օրոք (Ա Մնաց. Թ 17-19)։

ՁԷ սաղմոսի վերնագրում հիշվում է նաև անունը «Եման Եզրայէ-լացու», որն ըստ եբրայերենի պետք է լինի «Եզրահացի»: Նա Ղևտացի լինելով տաճարի գլխավոր երգիչներից մեկն էր՝ «սաղմոսանվագ» կոչումով (Ա Մնաց. Զ 33) և Ասափի եղբայրը (անդ, 39)։ ՁԸ սաղմոսն էլ վերնագրված է «Իմաստութիւն Եմանայ Եզրայելացւոյ», որն ըստ եբրայական և Յոթանասնից բնագրերի պետք է լինի «Եթանայ Եզրացւոյ»: Այս անունով անձը հիշատակվում է իբրև տաճարի երեք գլխավոր երգեցողներից մեկը (Ա Մնաց. Բ 6-8, ԺԵ 17-19):

Գրաբարում ԿԴ սաղմոսի վերնագրում կա հետևյալ հավելվածը. «Օրհնութիւն Երեմիայի և Եզեկիէլի և ժողովրդեանն յորժամ ի պանդխտութենէն կամէին ելանել»,- ինչը առկա չէ ո՛չ Յոթանասնից[1], ո՛չ էլ եբրայական բնագրերում։

Ինչպես տեսանք, անգամ Մովսեսը տեղ է գտել Սաղմոսաց գրքում, որովհետև ՁԹ սաղմոսի վերնագրում նշված է «Աղօթք Մովսիսի առնն Աստուծոյ»: Իսկ ՃԼ-ՃԼԴ սաղմոսների վերնագրերն են «Օրհնութիւնք աստիճանաց». նույնն է նաև եբրայական և Յոթանասնից բնագրերում։ Իսկ այն, թե ինչ է նշանակում «Աստիճանաց», չնայած որոշ ենթադրությունների՝ դժվար է ասել։

Առ ի գիտություն ավելացնենք, որ սաղմոսների հետ գործադրվում են նաև երկու մասնահատուկ բառեր. առաջինը՝ «Ալելուիա», որը նշանակում է «գովեցեք Յահվեին»: Այս բառը Հին Կտակարանի այլ գրքերում չի գործածվում և հանդիպում է միայն սաղմոսների վերնագրերում 15-16 անգամ (տես ՃԺ-ՃԺԸ և ՃԽԵ-ՃԾ սաղմոսները)։ Իսկ Նոր Կտակարանի Հայտնության գրքում տեսնում ենք այն իբրև հրեշտակների երգ (Հայտ. ԺԹ 1-6)։ Սակայն եկեղեցին վաղ շրջանից որդեգրելով այն՝ նույնությամբ սկսեց գործածել բոլոր լեզուներով և մանավանդ պաշտամունքների ժամանակ։ Մեզանում գրեթե բոլոր սաղմոսները սկսվում են ալելուիաներով։

Երկրորդը «Սելա» բառն է։ Եբրայերեն և արևմտահայերեն «Սաղմոսաց» գրքերում այս բառը գործածված է 71 անգամ, մինչդեռ Յոթանասնիցը և հետևաբար նաև գրաբարը զանց են առել այս բառը և

---

[1] Թեև այդ հատվածը առկա է Յոթանասնիցում, բայց շատ թարգմանություններում, որոնք կատարվել են հունարենից այն բացակայում է, օրինակ ուղղափառ հրատարակություններում:

երբեք չեն գործածել՝ հավանաբար այն համարելով պարզ ծանոթություն, այլ ոչ թե բնագրի մաս։ Այս բառը հանդիպում է նաև Ամբակում մարգարեի գրքում Գ 3 և 13 համարներում։ Այստեղ թե՛ Յոթանասնիցը, թե՛ գրաբարը թարգմանաբար են գրել այն։ Մեզ մոտ այն թարգմանված է որպես «հանգիստ», և ամենայն հավանականությամբ հենց դա է բառի իմաստը. այսինքն՝ երգեցողության ընթացքին մի պահ դադար առնել, շունչ քաշել, և ապա նորից շարունակել։

Զ. ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵԲՐԱՅԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՈՒՄ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սաղմոսներն ամեն օր անխափան երգվում էին Երուսաղեմի պատմական տաճարում։ Բացի այս ամենօրյա սաղմոսերգությունից, մասնավոր սաղմոսներ էին երգվում հատուկ առիթներով։ Օրինակ՝ 30-րդ սաղմոսը երգվում էր, երբ առաջին պտուղների ընծան բերում էին տաճար։ 113-118 սաղմոսները երգվում էին հրեական պասեքի ութ օրերի ընթացքում։ Չորս սաղմոսներ (120,121, 30, 102) երգվում էին պահեցողության օրերին և երաշտի ժամանակ։ 136-րդը իբրև երախտագիտության արտահայտություն՝ անձրևի համար։ Սաղմոսները գործածվում էին նաև եբրայական ժողովարաններում, հատկապես շաբաթամուտին և շաբաթ օրը։ Այնպես որ դարեր շարունակ հրեական բարեպաշտությունը սնվել է սաղմոսներով, որոնք թե՛ երգ, թե՛ աղոթք էին միաժամանակ։

Տարբեր չէր նաև պարագան քրիստոնեական շրջանակներում։ Առաջին քրիստոնյաները, առհասարակ, լինելով բարեպաշտ հրեաներ՝ շարունակում էին իրենց սաղմոսերգությունը աղոթաժողովների ժամանակ (հմմտ. Գործք ԺԶ 25, Ա Կորնթ. ԺԴ 15, Եփես. Ե 19, Կող. Գ 16, Հակ. Ե 13)։ Առաջին քրիստոնեական երգերը, որոնք ինքնաբուխ արտահայտություններն են Ս. Կույսի (Մեծացուցե. Ղուկ. Ա 46-55), Զաքարիայի (Օրհնյալ ես Տեր Աստված. Ղուկ. Ա 68-79) և Սիմեոն Ծերունու (Արդ արձակիր. Ղուկ. Բ 29-32) հորինված են սաղմոսների ոգով և նրանց նմանությամբ։ Բացի այդ, Սաղմոսաց գիրքն ավելի քան 90 անգամ մեջբերված է Նոր Կտակարանում, իսկ որոշ սաղմոսներ մեկ անգամից ավելի. օրինակ՝ Սաղմ. Բ 7-ը հիշված է թե՛ Գործք ԺԳ 33-ում, թե՛ Եբր. Ա 5 և Ե 5-ում։

Սաղմոսները հիմնական տեղ են գրավում քրիստոնեական նախնական պաշտամունքում։ Այս մասին առաջին եկեղեցական հայրերը՝ Իգնատիոս Անտիոքացին (†115) և Տերտուղիանոսը (†197) հի-

շատակում են իրենց գրություններում։ Այնպես որ Սաղմոսարանը եղավ դասական աղոթագիրքը թե՛ անձնական բարեպաշտության, թե՛ գլխավոր օժանդակը եկեղեցական պաշտամունքում։ Արևմտյան եկեղեցում Սաղմոսարանին քաջատեղյակ լինելը եկեղեցական ձեռնադրվելու պարտադիր պայմաններից մեկն էր։ Հատկապես վանքերում շարունակ գործածվում էր Սաղմոսարանը. Օրինակ՝ Բենեդիկտյան վանքերում ամբողջ Սաղմոսարանը կարդացվում էր մեկ շաբաթվա ընթացքում, ինչը նշանակում էր՝ տարին 52 անգամ։ Հին Կտակարանի ոչ մի ուրիշ գիրք այնքան ուժգին չի խոսել քրիստոնյաների սրտերի հետ, որքան Սաղմոսարանը։ Այն այնքան հարուստ է, որ հոգու ամեն տեսակ տրամադրության համար սաղմոսներ ունի՝ տխուրին և ուրախին, սրբին և ապաշխարողին, խորունկ խորհողին և հասարակ հավատացյալին։ Սաղմոսների մեծագույն մասի համեմատական կարճությունը մի առավելություն է, որ նրանք կարդացվեն հեշտությամբ և հաճույքով։ Բացի այդ, նրանք դյուրըմբռնելի են և զերծ չափազանցություններից։ Այո՛, երբեմն ուժգին պոռթկումներ էլ կան՝ ընդդեմ մարդկային չարությունների, այնուհանդերձ դրանք էլ Սաղմոսաց գրքի համամարդկային բնույթի փաստերն են։ Զէ՞ որ մեր Տերն էլ պոռթկաց փարիսեցիների դեմ, կրակե «վայ ձեզ»-ներով, և Տաճարը «ավազակների որջի»[1] վերածողների դեմ։ Սրանց կարգին է նաև Հայտնության գրքի նահատակվածների աղաղակն առ Աստված. «Մինչև յերբ... ոչ խնդրես զվրէժ արեան մերոյ ի բնակչաց երկրի» (Հայտ. Զ 10, հմմտ. ԺԹ 2)։

Է. ՍԱՂՄՈՍՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Քրիստոնեական եկեղեցու պաշտամունքային ծիսամատյանները ասորական և հունական եկեղեցիների և լեզուների միջոցով գրեթե նույնությամբ առաջին չորս դարերում փոխադրվել են և գործածվել Հայ Եկեղեցում։ Ե դարում գրերի գյուտով ինչպես Աստվածաշունչը, այնպես և ծիսական գրքերը թարգմանվեցին հայերեն։ Քրիստոնեական պաշտամունքում սաղմոսների զբաղեցրած կարևոր դերը մեր եկեղեցում երբեք չխախտվեց։ Մենք կարծում ենք, որ քիչ եկեղեցիներ են այդքան շատ սաղմոսներ գործածում իրենց պաշտամունքի մեջ, որքան Հայ Եկեղեցին։ Եթե մեր ժամագրքից հանենք Ս. Ներսես Շնորհալու հեղինակած ստեղծագործություն-

[1] Մատթ. ԻԱ 13։

ները, երգերի մնացած մեծագույն մասը կկազմեն սաղմոսները և նրանցից ներշնչված կամ քաղված երգերը։

Ա. ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ: *Այն բացվում է սաղմոսներից վերցված մաղթանքով. «Տէր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո» (Սաղմ. Ծ 17): Սկսվում է «Տէր զի բազում» սաղմոսերգությամբ, որը բաղկացած է հետևյալ չորս սաղմոսներից. «Տէր, զի բազում եղեն նեղիչք իմ» (Սաղմ. Գ), «Տէր Աստուած փրկութեան իմոյ» (Սաղմ. ՁԷ), «Օրհնեա անձն իմ զՏէր» (Սաղմ. ՃԲ), «Տէր, լուր աղօթից իմոց» (Սաղմ. ՃԽԲ): «Յիշեսցուք» երգը բազմաթիվ սաղմոսների հարասացություն է. օրինակ՝ «յիշեցի ի գիշերի զանուն քո, Տէր» (Սաղմ. ՃԺԸ 55, 62), «ի գիշերի համբարձէք զձեռս ձեր» (Սաղմ. ՃԼԳ 2) ևն (տես Օրմանյանի Ծիսական բառարանը, էջ 213):*

ԿԱՆՈՆ ՍԱՂՄՈՍԻ: *Նախքան շարունակելը մեր ժամագրքում տեղ գրված սաղմոսների թվարկումը՝ հարկ է մի պահ կանգ առնել և համառոտակի անդրադառնալ կանոնագլուխներից առաջ դրված այս ծանոթագրությանը՝ «Աստ ասի սաղմոս ըստ ձայնի»: Ներկայումս նման սաղմոսներ գրված չեն ժամագրքում և ոչ էլ ասվում են։ Ուրեմն, ինչի՞ ակնարկություն է այս «սաղմոսասացությունը»:*

Նախկինում, երբ չկային այսօրվա հոգեհանգստյան կարգը և օրհնության շարականները, գիշերային ժամերգության «Զքէն գոհանամք» աղոթքից հետո մնացած մասն ամբողջությամբ հատկացվում էր սաղմոսերգությանը։

Ամբողջ Սաղմոսաց գիրքը բաժանված էր ութ մասերի՝ ըստ ութ ձայների, և համաձայն օրվա ձայնի՝ ամեն օր կարդացվում էր այդ ութ մասերից մեկն այնպես, որ ութ օրվա ընթացքում ամբողջ Սաղմոսաց գիրքը կարդացվում էր։ Սաղմոսների բաժանման այս կերպը կոչվում է «ԿԱՆՈՆ» և յուրաքանչյուր ԿԱՆՈՆ հայտնի է իր առաջին սաղմոսի անունով։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սաղմոսներից որոշները կարճ են, իսկ ուրիշները՝ երկար, ԿԱՆՈՆԻ սաղմոսներն իրար հավասար չեն ո՛չ սաղմոսների թվով, ո՛չ էլ համարներով։ Օրինակ՝ ԳԿ կանոնը պարունակում է ընդամենը 13, իսկ ԴՁ կանոնը՝ 29 սաղմոս։ Մնացածները պարունակում են 17-19 սաղմոսներ։ Գալով համարներին՝ ԴԿ կանոնի 17 սաղմոսներն ունեն 238, իսկ ԳԿ կանոնի 13 սաղմոսները 362 համար։

Յուրաքանչյուր ԿԱՆՈՆ բաժանված է 7 մասի, որոնք կոչվում են «ԳՈՒԲՂԱ»: Սրանք էլ հավասար չեն իրար. օրինակ՝ ԴՁ կանոնի 4-րդ գուբղան 26 համարներից է բաղկացած, մինչդեռ նույն կանոնի 6-րդ գուբղան պարունակում է 78 համար։ Յուրաքանչյուր գուբղա-

յի պարունակած սաղմոսների թվերը ևս բնականաբար հավասար չեն. օրինակ՝ ԴՁ կանոնի առաջին գուբղան վեց սաղմոս ունի, մինչդեռ ՃԺԸ երկարագույն սաղմոսը բաժանված է երեք գուբղաների։

Պաշտամունքին ներկա բոլոր հոգևորականները՝ դպիրներից (որոնք միշտ լավ կարդալ գիտեին) մինչև եպիսկոպոս, զույգ-զույգ մասնակցում էին այս սաղմոսերգությանը՝ յուրաքանչյուր զույգ մեկ գուբղա քաղելով։

Երբ Հանգստյան և Օրհնության շարականները մուտք գործեցին Գիշերային ժամերգություն, այդ ութ կանոն սաղմոսները կամաց-կամաց դադարեցին այս տեղում ասվել և փոխադրվեցին ժամակարգությունից դուրս՝ իրենց տեղը գրավելով գիշերապաշտոնի սկզբում։ Ժամանակի ընթացքում դադարեց նաև սաղմոսասացությանը ամենքի մասնակցությունը և սովորություն դարձավ, որ երկերկու հոգի կարգով սաղմոս ասեն՝ մինչև գիշերապաշտոնի սկսվելը։ Այս սովորությունը ներկայումս դադարել է մեր բոլոր եկեղեցիներում, բացի Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց տաճարից, որտեղ ցայսօր երկու հոգի առավոտյան վաղ ժամերին փոխնիփոխ կարդում են ՈՒԹ ԿԱՆՈՆՆԵՐԻՑ մեկը՝ ըստ օրվա ձայնի։

Յուրաքանչյուր կանոնի վերջում դրված է նաև մի «օրհնություն», այսինքն՝ մի սաղմոս, որը սաղմոսարանից դուրս է՝ սկսյալ Մովսեսի «օրհնությունից», մինչև Ամբակում մարգարեի աղոթքը կամ «օրհնությունը»։ Սրանց հաջորդում է մի կարճ մաղթանք, որը քաղված է Սաղմոսաց գրքից։ Ապա մի քարոզ և աղոթք, որոնք ծանոթ են «կանոնի քարոզ» և «կանոնի աղոթք» անուններով։

Թեև կանոնի սաղմոսերգությունը դուրս է մնացել Ժամագրքից, բայց յուրաքանչյուր ԿԱՆՈՆԻՑ թողնված է մի մնացորդ, որը մինչև այսօր երգվում է և կոչվում է ԿԱՆՈՆԱԳԼՈՒԽ։

Հնում, այսինքն՝ ԿԱՆՈՆ սաղմոսների ընթերցման ժամանակ, սովորություն կար ԿԱՆՈՆԻ վերջին կամ յոթներորդ գուբղան «բարձրահնչիւն բարբառով» կարդալ, այսինքն՝ երգելով ասել։ Կանոնի սաղմոսասացության խափանումով՝ այս «բարձրահնչիւն» երգեցողությունը չդադարեց, այլ վերջին գուբղայի առաջին վեց համարներով (և վերջավորությունից էլ որոշ անհավասար թվով համարներ կցելով իրար) կազմվեց այսօրվա ԿԱՆՈՆԱԳԼՈՒԽ կոչված սաղմոսերգությունը՝ ըստ ութ ձայների։ Այս կանոնագլուխներից առաջին վեց համարներն իբրև մեներգ ավելի ծանր եղանակով են երգվում, իսկ վերջամասը՝ իբրև խմբերգ և հորդոր, առավել թեթև եղանակով է երգվում։ Բացառություն են Բուն Բարեկենդանի և Նոր Կիրակիի հատուկ կանոնագլուխները, որոնք բաղկացած են ԴՁ ԿԱՆՈՆԻ վեր-

ջին երեք սաղմոսներից՝ «Օրհնեա անձն իմ զՏէր» (Սաղմ. ՃԽՋ), «Օրհնեցէք զՏէր» (Սաղմ. ՃԽՁ) և «Գովեա Երուսաղէմ զՏէր» (Սաղմ. ՃԽԷ)։ Սրանք ատյանում գրակալի վրա են կարդացվում։ Յուրաքանչյուր սաղմոսի վերջում երեք փոքր երգեր կան՝ ի դեմս Քրիստոսի, որոնցից յուրաքանչյուրը երիցս կրկնվում է, վերջինը՝ ավելի բարձր ձայնով։ Ավագ Ուրբաթ օրվա կանոնագլուխը ասվում է մեկ այլ սաղմոսի հետ՝ «Իշխանք ժողովեցան ի միասին» սկզբնավորությամբ, որ ՃԺԸ սաղմոսի 161-176 համարներն են։ Իսկ Ավագ Շաբաթ օրը՝ իբրև երկրորդ կանոնագլուխ, ասվում է «Դատեա Տէր» (Սաղմ. ԼԴ) սաղմոսը։

Ութ կանոնագլուխների առաջին վեց տները ու վերջնամասը քաղված են հետևյալ սաղմոսներից.

- *ԴԿ «Սիրեցից զՔեզ Տէր» - ԺԷ 1-6։ Փոխ՝ 12 տուն (ԺԷ 39-50)*
- *ԱԶ «Դատեա Տէր զանյոսիկ» - ԼԴ 1-6։ Փոխ՝ 8 տուն (ԼԵ 6-13)*
- *ԱԿ «Ասաց անզգամն» - ԾԲ 1-6։ Փոխ՝ 6 տուն (ԾԴ 17-22)*
- *ԲԶ «Ի Քեզ Տէր յուսացայ» - Հ 1-6։ Փոխ՝ 1 տուն (ՀԱ 11-20)*
- *ԲԿ «Զողորմութիւնս Քո, Տէր» - ՁԸ 1-6։ Փոխ՝ 8 տուն (ՃԵ 39-48)*
- *ԳԶ «Խոսփովան եղերուք» - ՃԵ 1-6։ Փոխ՝ 8 տուն (ՃԵ 37-44)*
- *ԳԿ «Արարի զիրաւունս» - ՃԺԸ 121-126։ Փոխ՝ 8 տուն (ՃԺԵ 169-176)*
- *ԴԶ «Օրհնեա անձն իմ զՏէր» - ՃԽԷ 1-6։ Փոխ՝ 10 տուն (ՃԽԷ 1-10)*

Ավագ Ուրբաթի «Այսօր անճառ» շարականի վեց մասերից յուրաքանչյուրից առաջ կարդացվում են երեքական սաղմոսներ. ընդամենը՝ 18 սաղմոս, որոնք այսօր կրճատված են և հազիվ մեկ-երկու տուն է միայն կարդացվում։

Հանգստյան Ավետարանից առաջ՝ ըստ ութ ձայների, կարդացվում են հետևյալ սաղմոսները.

- *ԱԶ «Տէր մի սրտմտութեամբ» - 10 տուն (Զ 1-10)*
- *ԱԿ «Բարձր առնեմ» - 12 տուն (ԻԹ 1-12)*
- *ԲԶ «Ասփուած յանուան» - 7 տուն (ԾԳ 1-7)*
- *ԲԿ «Ասփուած ողորմեա» - 7 տուն (ԿԶ 1-7)*
- *ԳԶ «Հաճեցար Տէր» - 12 տուն (ՁԴ 1-12)*
- *ԳԿ «Տէր մի սրտմտութեամբ» - 12 տուն (ՃԱ 1-12)*
- *ԴԶ «Մերձեսցին խնդրուածք» - 8 տուն (ՃԺԸ 169-176)*
- *ԴԿ «Տէր, լուր աղօթից» - 14 տուն (ՃԽԲ 1-14)*

Սրանց թվին պետք է ավելացնել նաև «Ի խորոց» (Սաղմ. ՃԻԴ) և «Տէր ով կացցէ» (Սաղմ. ԺԴ) սաղմոսները, որոնք երգվում են Տերունի տոներին. առաջինը՝ երբ ձայնը ԴԿ է, իսկ երկրորդը՝ ԱԶ։ Խաչի տոներին էլ ասվում է «Նշանեցաւ. ի կարդալ իմում» (Սաղմ. Դ) սաղմոսը։

Ավագ օրհնությունների 10 պատկերները թեև սաղմոսների կամ օրհնությունների հարասություններ են, բայց վերցված չեն Սաղմոսաց գրքից, այլ՝ Հին Կտակարանի զանազան գրքերից։

Օրհնությանը հաջորդող պահոց մաղթանքները մեկական տուն սաղմոսներ են, ընդամենը՝ 8 տուն։ Ապաշխարության հինգ Թագավոր Հավիտյաններից յուրաքանչյուր 9 տներից երեքը քաղված են սաղմոսներից։ Մնացած մասերն էլ սաղմոսների ոգով և հաճախ բառերով հարմարեցումներն են։

Մարտիրոսաց ութ Թագավոր Հավիտյաններից յուրաքանչյուր երեք մասերից միջին մասը նույնպես քաղված է սաղմոսներից։

Իսկ Տերունի օրերին երգվող հատուկ Ալելուքները ամբողջությամբ սաղմոսներից են քաղված։ Նրանցից յուրաքանչյուրը բաղկացած է չորս համարից։ Ընդհանուր առմամբ ժամագրքում առկա է 62 Ալելուք։

Ամփոփում. *միայն Գիշերային ժամերգության մեջ ունենք 30-35 ամբողջական սաղմոսներ, ինչպես նաև բազմաթիվ սաղմոսների հատվածներ, որոնք եթե իրար կողք դրվեն, կհավասարվեն մնացած ամբողջական սաղմոնսերին։ Այս հաշվարկի մեջ չենք ներառել նաև «Այսօր անճառ» շարքից 18 ամբողջական սաղմոսներ։*

Բ. ԱՌԱՎՈՏՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ: *Սա նույնպես սկսվում է մի մաղթանքից, որը սաղմոսներից է քաղված. «Լցաք առաւօտու ողորմութեամբ Քով» (Սաղմ. ՁԹ 14-17)։ Առավոտյան ժամերգության ընթացքում ժամանակին երգվում էր շուրջ 20 սաղմոս, որոնք այսօր փոխարինված են շարականներով, որոնք ցայսօր ծանոթ են այդ սաղմոսների անուններով։ Սրանք են հետևյալները ժամագրքի կարգով.*

«Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց», որը երկու մասերից բաղկացած «Երից մանկաց» սաղմոսերգությունն է՝ «ի մեջ հնոցի» (Դան. Գ 26-45 և 52-86)։

«Մեծացուսցէ անձն իմ զՏէր», Ս. Կույսի սաղմոսը (Ղուկ. Ա 46-55):

«Օրհնեցէք զՏէր յերկնից», որը բաղկացած է Սաղմոսարանի վերջին երեք սաղմոսներից (Սաղմ. ՃԽԸ, ՃԽԹ, ՃԾ):

«Օրհնեցէք մանկունք զՏէր», որը բաղկացած է 5 սաղմոսներից (Սաղմ. Ե, ՁԹ 14-17, ՃԻԹ ՃԽԲ 8-12, ՃԳ):

«Սիրեցի զի լուիցէ Տէր», որը բաղկացած է 5 սաղմոսներից (Սաղմ. ՃԺԴ, ՃԺԵ, ՃԺԶ, ՃԳ, ՁԵ 16-17):

Սաղմոս է նաև «Արի, Տէր, օգնեա մեզ» (Սաղմ. ԿԳ 27) ծանր եղանակով մեղեդին, որը երգվում է Յուղաբերից կարգի ժամանակ։

Փառք ի բարձունս երգի երկրորդ մասը («Եւ յամենայն ժամ») սաղմոսներից կազմած մի խճապատկեր է. օրինակ՝ «Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց» և «Օրհնեալ Տէր, ուսո ինձ զարդարութիւնս Քո», որ ՃԺԸ երկարագույն սաղմոսի մեջ կրկնվում է չորս անգամ՝ 12, 26, 68 և 135 համարներում։

Գ. ԱՐԵՎԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ: *Սկսվում է «Եղիցի անուն Տեառն օրհնեալ» սկզբնավորությամբ երեք սաղմոսատներով (Սաղմ. ՀԱ 17-19): Եթե այս ժամերգությունից հանենք Սուրբ Ներսես Շնորհալի հայրապետի հեղինակած երգերը, ապա կմնա մի մաս, որը բաղկացած է սաղմոսներից, որոնք հետևյալն են.*

«Աղաղակեցէք առ Տէր ամենայն երկիր» (Սաղմ. ՂԹ),

«Աստուած, Աստուած իմ ես առ Քեզ առաւօտ առնեմ», որը բաղկացած է երկու հաջորդական սաղմոսներից (Սաղմ. ԿԲ, ԿԳ),

«Տէր հովուեսցէ զիս», որը բաղկացած է չորս սաղմոսներից (Սաղմ. ԻԲ, ՃԽԲ 8-12, ԽԵ, ԿԹ):

Այսպիսով Արևագալի ժամերգությունն ունի 6 սաղմոսն և 7 սաղմոսատուն։

Դ. ՃԱՇՈՒ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ: *Ճաշու երեք «ժամերն» էլ ունեն նույն կաղապարը. երեքն էլ սկսվում են «Ողորմեա ինձ Աստուած» ապաշխարության Ծ սաղմոսով և յուրաքանչյուրն ունի երեք տներից բաղկացած մի փոքր սաղմոս և յուրահատուկ հավելվածական մի ամբողջ սաղմոս։*

ԵՐՐՈՐԴ ԺԱՄի կարճ սաղմոսն է «Տէր Աստուած օրհնեալ» (Սաղմ. ԿԷ 19-21), իսկ երկարը՝ «Տէր հովուեսցէ զիս» (Սաղմ. ԻԲ):

ՎԵՑԵՐՈՐԴ ԺԱՄի փոքր սաղմոսն է «Տէր մի յիշեր զմեղս մեր» (Սաղմ. ՀԸ 8-9), իսկ երկարը՝ «Երանի որ խորհի զաղքատն», որը բաղկացած է Խ սաղմոսի առաջին հինգ համարներից և «Որ բնակեալն» սաղմոսից (Սաղմ. Ղ):

ԻՆՆԵՐՈՐԴ ԺԱՄի փոքր սաղմոսն է «Տէր մի մատներ զմեզ իսպառ», որի հետքը չկարողացանք գտնել Սաղմոսաց գրքում։ Իսկ յուրահատուկ սաղմոսն է «Սիրեցի զի լուիցէ Տէր» (Սաղմ. ՃԺԴ), որին կցված է հաջորդ «Հաւատացի զոր և խօսեցայ» (Սաղմ. ՃԺԵ) սաղմոսը։ Սրանք եբրայական բնագրում միացյալ կազմում են մի սաղմոս։ Կցված է նաև ՃԺԶ երկու տներից բաղկացած փոքրիկ սաղմոսը։ Այսպիսով, Ճաշու երեք ժամերգություններն ունեն ընդամենը 8 սաղմոս և 12 սաղմոսատուն։

Ե. ԵՐԵԿՈՅԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ: *Սկսվում է «Ես առ Աստուած կարդացի» սաղմոսով (Սաղմ. ԾԴ), շարունակվում «Խոնարհեցո Տէր զունկն Քո» (Սաղմ. ՁԵ) և «Ապրեցո զիս Տէր ի մարդոյ չարէ» սաղմոսներով. վերջինս բաղկացած է երեք սաղմոսից (Սաղմ. ՃԼԹ, ՃԽ, ՃԽԱ): Կան միջանկյալ «Մեսեդիք» կոչված երկու տնից բաղկացած բազմաթիվ սաղմոսի մասնիկներ՝ ըստ տոների և ըստ ութ ձայների, ընդամենը՝ 40 զույգ սաղմոսահամարներ: Ժամերգության գրեթե մեջտեղում է «Համբարձի զաչս իմ ի լերինս» սաղմոսը (Սաղմ. ՃԻ): Արձակման սաղմոսն է «Որ բնակեալն է» (Սաղմ. Ղ), որին կցված են ՃԻԲ և ՃԳ սաղմոսները: Իսկ կիրակնամտին ասվում է «Աստ օրհնեցէք» ՃԼԳ փոքրիկ սաղմոսը, որին կցված են ՃԺ և ԾԳ սաղմոսները: Այսպիսով, երեկոյան ժամերգությունն ունի ընդամենը 10 սաղմոս և 80 սաղմոսատուն:*

ԽԱՂԱՂԱԿԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹՅՈՒՆ: *Սկսվում է «Տէր Աստուած փրկութեան իմոյ» ՁԷ սաղմոսի առաջին երկու տներով: Իսկ ժամերգության ընթացքում կարդացվում են հետևյալ սաղմոսները. «Ի կարդալ իմում լուար ինձ Աստուած» (Սաղմ. Դ), որին կցվում է «Տէր մի սրտմտութեամբ Քով հանդիմաներ զիս» սաղմոսը (Սաղմ. Զ), ապա՝ «Տէր լոյս իմ և կեանք իմ» ԻԶ սաղմոսը: Վերջին սաղմոսն է «Երանեալ են անբիծք» ՃԺԸ երկարագույն սաղմոսը, որը բաղկացած է ութ համարներով 22 տնից՝ ըստ եբրայական տառերի թվի և յուրաքանչյուր տուն սկսվում է եբրայական այբուբենի մեկ տառով: Այսպիսով, Խաղաղական ժամերգությունն ունի չորս ամբողջական սաղմոս և երկու համար:*

ՀԱՆԳՍՏՅԱՆ ԺԱՄ: *Սկսվում է «Առաքեա Տէր զլոյս Քո» սաղմոսի չորս տներով (Սաղմ. ԽԲ 3-5), որին հաջորդում է սաղմոսների մի խումբ, որը բաղկացած է հետևյալ 10 սամոսներից. «Եկեսցէ ի վերայ իմ» ՃԺԸ սաղմոսի 41-56, 113-120, 169-176 համարները, «Մի եկեսցէ ի վերայ մեր» ԼԵ 12-13 երկու տները: «Ես ի Տէր յուսացայ», որի հաջորդ համարը թե որտեղից են վերցվել՝ հայտնի չէ: Ապա հաջորդում է «Որ բնակելն» իր հարակից երկու սաղմոսներով՝ «Առ Քեզ Տէր համբարձի» (Սաղմ. ՃԻԲ) և «Աստուած յանուան Քո» (Սաղմ. ԾԳ): Սրանց վերջում դրված են երկու նորկտակարանյան սաղմոսներ՝ «Արդ արձակեա» (Ղուկ. Բ 29-30), որին ավելացված են սաղմոսներից քաղված երկու հետևյալ համարները՝ «Ձգեցեր զձեռս Քո» (Սաղմ. ՃԼԷ 7-8) և «Տէր հան ի բանտէ» (Սաղմ. ՃԽԱ 8): Սաղմոսների այս երկարագույն սաղմոսախումբը ավարտվում է «Մեծացուսցէ» Աստվածամոր սաղմոսով (Ղուկ. Ա 46-55): Ավետարանի ընթերցման սաղմոսն է «Խաղաղութեամբ յայս և սոյն» (Սաղմ. Դ): Այսպիսով, Հանգստյան ժամերգությունն ունի 10*

ամբողջական սաղմոս և 11 տարբեր սաղմոսներից վերցված 11 համարներ:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ: *Պատարագչի զգեստավորման սաղմոսն է «Քահանայք Քո զգեցցին» (Սաղմ. ՃԼԱ): Իսկ պատարագի ընթացքում ասվում են հետևյալ սաղմոսները. «Լուացից սրբութեամբ» (Սաղմ. ԻԵ), Խորան բարձրանալու սաղմոսը՝ «Դատ արա ինձ Աստուած» (Սաղմ. ԽԲ), Ս. Ընծաների պատրաստությունից հետո՝ «Տէր թագաւորեաց» (Սաղմ. ՂԲ): Այսօրվա ճաշու շարականի փոխարեն հնում սաղմոսներ էին երգվում. Ս. Աստվածածնի տոներին՝ «Մեծացուսցէ», Ս. Ջատկի և Յինանց՝ «Գովեա Երուսաղէմ», մյուս Տերունի տոներին՝ «Տէր թագաւորեաց», սրբոց տոներին՝ «Սիրեցի», Պահոց օրերին՝ «Օրհնեցէք զՏէր»: Թե՛ Ճաշու ընթերցումներից և թե՛ Ավետարանի ընթերցումից առաջ սաղմոսների մեկ կամ երկու տուն է ասվում՝ ըստ ձայնի և ըստ տոնի: Սրանցից յոթանասունը նշված են մեր ժամագրքում: Ս. Սկիհի վերաբերման ժամանակ ասվում է ԻԳ սաղմոսի 3 համարները (7-9): Այսպես, Պատարագի ընթացքում գործածվում են 5 ամբողջական սաղմոսներ և բազմաթիվ սաղմոսատներ: Համադրելով մեր ծիսական պաշտամունքի ընթացքում օգտագործված սաղմոսները՝ ստանում ենք մի պատկառելի թիվ՝ ավելի քան 100 ամբողջական սաղմոսներ և բազմահարյուր սաղմոսատներ կամ համարներ: Այս հաշվի մեջ չեն «Այսօր անճառ»-ի սաղմոսները:*

Ը. ՏՊԱԳՐՎԱԾ ՍԱՂՄՈՍԱՐԱՆՆԵՐԸ

Համոզվելով, որ թե՛ բարեպաշտական, թե՛ ծիսական ոլորտներում Սաղմոսարանը շատ կարևոր տեղ է գրավում, զարմանալի չի լինի այն իրողությունը, որ տպագրական արվեստի առաջացումից ի վեր, առաջին հերթին տպագրվող գրքերից մեկը եղավ Սաղմոսաց գիրքը և հետագայում այն նույնպես դարձավ բոլորից շատ տպագրվողներից: Սաղմոսաց գրքի առաջին տպագրությունը, ըստ տարածված կարծիքի, տեղի է ունեցել 1565 թվականին: Սակայն Սեբաստիայի մտավորական Կարապետ Գաբիկյանի կողմից 1906 թ. «Բյուզանդիոն» թերթում հրատարակված տեղեկության համաձայն, ոմանք կարծում էին, որ «Սաղմոսաց» գիրքը հայ տպագրության երախայրիքներից է եղել՝ իբրև մեկը մեր առաջին տպագրիչ Հակոբ Մեղապարտի հրատարակություններից (Յ. Ս. Անասեան, Աստուածաշունչ մատեանի Հայկական Բնագիրը, 1976, Երևան, էջ 382): Այս արժեքավոր գրքից տեղեկություններ ենք քաղում «Սաղմոսաց» գրքի

տպագրության վերաբերյալ։ Իսկ կարծեցյալ առաջին հրատարակությունից ոչ մի օրինակ չի պահպանվել։

Իր վրա թվական կրող Սաղմոսարանի առաջին ծանոթ տպագրությունը սկսվել է 1565թ.-ին և ավարտվել 1566-ին, Վենետիկում՝ ձեռամբ ծանոթ տպագրիչ Աբգար Դպիր Թոխատեցու, որից մեզ են հասել 4 օրինակներ (Երևան, Միլան, Հռոմ և Լոնդոն)։ Երկրորդ բացահայտ տպագրությունը կատարվել է 1587-ին՝ ձեռամբ Տ. Հովհաննես «Տերզնցու», դարձյալ Վենետիկում։

17-րդ դարում Սաղմոսարանը լույս է տեսել 13 տպագրություններով. առաջինը՝ Լվով-Լեհաստան (1616 թ.), երկրորդը՝ Նոր Ջուղա (1638 թ.)՝ ձեռամբ Խաչատուր վրդ. Կեսարացու, որ 1644-ին Լիվոռնոյում ևս Սաղմոսարան է հրատարակել։ Տպագրություններից 5-ը լույս են տեսել Վենետիկում, 2-ը՝ Ամստերդամում, ևս 3-ը՝ Մարսելում՝ Ոսկան վրդ. Երևանցու կողմից։

18-րդ դարում Սաղմոսարանը տպագրվել է 36 անգամ։ Այս ժամանակահատվածում Կ. Պոլիսը սկսել է մրցել Վենետիկի հետ և գերազանցել է նրան, որովհետև Պոլսում լույս են տեսել 16 տպագրություններ, իսկ Վենետիկում՝ 13։

19-րդ դարում Սաղմոսարանը լույս է տեսել 110 անգամ, որոնցից 59-ը՝ Կ. Պոլսում, 17 անգամ՝ Վենետիկում, 9 անգամ՝ Երուսաղեմում։ Հատկանշական է, որ նույն դարում Սաղմոսարանը 7 անգամ տպագրվել է Լոնդոնում։ Մնացածը լույս են տեսել 11 տարբեր քաղաքներում, որոնցից են Էջմիածինը, Փարիզը և Նյու Յորքը, որտեղ երկուական տպագրություններ են եղել։

20-րդ դարում դանդաղել, գրեթե կասեցվել է Սաղմոսարանի տպագրությունը։ Ունենք մեկական տպագրություններ Վենետիկում (1903 թ.), Կ. Պոլսում (1912 թ.) և Վիեննայում (1931 թ.)։ Վերջին երկուսը աշխարհաբար են և տպագրվել են Աստվածաշնչյան ընկերության կողմից։ Ուրեմն, դուրս հանելով 20-րդ դարը՝ նախորդ երեք դարերում ավելի քան 160 անգամ է տպվել Սաղմոսարանը. մրցանիշ, որին չի կարող հասնել ոչ մի հայ գիրք։ Սրանց մեջ հաշվարկած չեն նաև տպագիր Աստվածաշնչերում տեղ գրաված Սաղմոսաց գրքերը, ինչպես նաև 17 «Ատենի Ժամագրքերի» տպագրությունը, որոնց սկզբում է կա ամբողջական «Սաղմոսաց» գիրքը։ Չենք հաշվում նաև թուրքերենով հայատառ Սաղմոսարանի 8 տպագրությունները։ Եթե սրանք էլ համալրենք, կստացվի, որ 16-19-րդ դարերի ընթացքում շուրջ 200 Սաղմոսարաններ են տպագրվել և եղել հայ ժողովրդի տրամադրության ներքո, որոնցից յուրաքանչյուր տպագրությունը եթե 1000 օրինակ հաշվենք, կստանանք մի

պատկառելի թիվ, որը չի գերազանցվել որևէ հայատառ գրքով մինչև 20-րդ դարի առաջին քառորդը։

Արժեր անդրադառնալ նաև ձեռագիր Սաղմոսաց գրքերի գոյությանը, բայց այս մասին ոչինչ չենք կարողանա ասել, քանի որ նման գործը պահանջում է պրպտումների երկար ժամանակ ու աշխատանք, ինչը չունենք ներկայիս հնարավորություններով։ Սակայն մեծ վստահությամբ կարող ենք ենթադրել, որ այս ոլորտում ևս առաջին տեղը պիտի գրավի Սաղմոսաց գիրքը։

Թ. ՍԱՂՄՈՍԱՑ ԳՐՔԻ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆԸ

Եզրակացնելով ասենք, որ Սաղմոսաց գրքի սրբազան երգերում արդարև կան այնպիսի գերազանց գաղափարներ, որոնցից որոշները բարձրագույններից են ամբողջ Աստվածաշնչում. լինի դա Աստծո մասին՝ իբրև Արարիչ, Պահպանիչ և տիեզերքի Կառավարիչ, լինի դա այլ հոգևոր ճշմարտությունների մասին, որոնք լուսավորում են մարդուն։ Սաղմոսներում ուղղակի կամ անուղղակի, քողարկված կամ բացահայտ լայն տեղ են գրավել Մեսիայի՝ այսինքն մեր Փրկչի, և Նրա կողմից իրագործելիք փրկագործական մեծ խորհրդի վերաբերյալ մարգարեությունները։ Բացի այդ, Սաղմոսները լեցուն են Աստծո հանդեպ ամբողջական նվիրումի, ապահովության և վստահության զգացումով, ինչպես նաև անայլայլ հավատքով։ Սաղմոսներում երգի, փառաբանության և աղոթքի հոյակապ նմուշներ կան. գոհության և երջանկության ցնծագին արտահայտություններ, Աստծո անհուն բարության և ողորմության հանդեպ երախտիքի սրտագին խոսքեր, Աստծո մեծության, սրբության և զորության հիացմունքով լեցուն գովերգություններ։ Այս բոլորի կողքին կան նաև թախիծով համեմված երգեր, տրտում ողբերգություններ՝ հեղինակների հիվանդությունների և անճարության մատնված լինելու մասին, կամ թշվառների ճնշումների և նրանց անարգիչ արտահայտությունների նշավակ դառնալու հետևանքով։ Հզոր են նաև Աստծուն վերագրված բարկության շանթերը, որոնք տեղում են անարդարների և մեղավորների վրա։

Համաշխարհային գրականության մեջ ամենաազնիվ, գեղեցիկ և սրտազդեցիկ գրքերից մեկն է Սաղմոսարանը։ Այստեղ տեսնում ենք, թե ի՜նչ վարմունք ու վերաբերմունք պետք է ունենանք նախ Աստծո, ապա՝ մարդկության նկատմամբ։

Ինչպես ակնարկեցինք, Սաղմոսաց գիրքն առձեռն աղոթագիրք է բոլորի համար. ամեն ոք՝ անկախ նրանից, թե ի՜նչ պարագաներում

և հոգեկան ինչ տրամադրության մեջ է գտնվում, եթե պարբերաբար այն ձեռքն առնի, պիտի հանդիպի իր հոգեվիճակին համապատասխան սաղմոսների, որոնք կարծես թե գրված են ճիշտ իրեն համար։ Եվ ուրեմն, երանի նրանց, որոնք ունեն ցանկություն և գտնում են ժամանակ սաղմոս կարդալու, որոնք պիտի դարման լինեն իրենց հոգևոր վերքերին և հիվանդություններին, ինչպես նաև կազդուրիչ դեղեր՝ իրենց տկարացյալ բնությանը։

Սաղմոսաց գրքի մեր այս ներածականի վերջում կներկայացնենք մի քանի մեջբերումներ նույն Սաղմոսարանից.

«Օրհնեցեք և սաղմոս ասացեք Աստծուն, պատմեք նրա բոլոր սքանչելիքները, և պարծեցեք Նրա սուրբ անունով» (Սաղմ. ԿԷ 5):

«Թող ուրախ լինեն սրտերը նրանց, որոնք Տիրոջն են փնտրում» (Սաղմ. ՃԴ 2-3):

«Պիտի օրհնեմ Տիրոջն իմ կյանքում, քանի կամ, սաղմոս պիտի երգեմ իմ Աստծուն: Իմ օրհնությունը հաճելի կլինի Նրան, և ես Տիրոջով ուրախ կլինեմ» (Սաղմ. ՃԳ 33-34):

«Թող պակասեն մեղավորները երկրից, և այնտեղ ամբարիշտներ չգտնվեն այլևս, Օրհնի՛ր Տիրոջը, հոգի իմ» (Սաղմ. ՃԳ 35):



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հրատարակության առիթով 5

Մուտք 7

Սաղմոս Ծ

Ծ 1. 8
Ծ 2 9
Ծ 3 13
Ծ 4 16
Ծ 5 17
Ծ 6 17
Ծ 7 21
Ծ 8 24
Ծ 9 26
Ծ 10 27
Ծ 11 28
Ծ 12 29
Ծ 13 31
Ծ 14 34
Ծ 15 36
Ծ 16 37
Ծ 17 39
Ծ 18 40
Ծ 19 41
Ծ 20 42
Ծ 21 44

ՀԱՎԵԼՎԱԾ

Ա. Սաղմոսաց գիրքն Աստվածաշնչում և նրա կարևորությունը 47
Բ. Բաժանումները և տեսակները 51
Գ. Սաղմոսները և երաժշտական գործիքները 53
Դ. Սաղմոսների վերնագրերը 54
Ե. Սաղմոսաց գրքի հեղինակը 56
Զ. Սաղմոսների գործածությունը եբրայական հավաքական պաշտամունքում և քրիստոնեական Եկեղեցում 59
Է. Սաղմոսների գործածությունը Հայոց եկեղեցում 60
Ը. Տպագրված սաղմոսարանները 67
Թ. Սաղմոսաց գրքի գերազանցությունը 69

ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՍԱՂՄՈՍԸ
(Ճ ՍԱՂՄՈՍԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ)

Արևմտահայերենից արևելահայերենի փոխադրումը՝
Դավիթ սրկ. Գիշյանի

Հրատարակչության տնօրեն՝	Տ. Արարատ քահանա Պողոսյան
Հրատարակչական բաժնի գլխավոր խմբագիր՝	Սարգիս Մելքոնյան
Հրատարակչական խորհրդի անդամներ՝	Տ. Մկրտիչ եպս. Պռոշյան, Տ. Ռուբեն վրդ. Զարգարյան, Տ. Ասողիկ աբդ. Կարապետյան, Տ. Արարատ քհն. Պողոսյան, Տ. Գաբրիել քհն. Վարդանյան, Գևորգ Տեր-Վարդանյան, Կարեն Մաթևոսյան
Սրբագրիչ՝	Նանա Գրիգորյան
Էջադրումը, սուրբգրային տեղիները՝	Տ. Ղևոնդ ավ. քհն. Մայիլյանի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2021

Չափսը՝ 60x84 1/16, թուղթը՝ 80 գ.,
ծավալը՝ 72 էջ (4.5 տպ./մ.):

ISBN 978-9939-59-279-4